



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 114 2019

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրբեկանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 14.11.2019թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Շավաղը՝ 5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

ՀՀ Նախագահի հրամանագրերով	3
---------------------------------	---

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Խորվաթիայի Հանրապետության Գերագույն դատարանի դատարանի նախագահի գլխավորած պատվիրակությանը	5
---	---

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազը մասնակցել է Բիշքեկում կայացած ԱՊՀ և Շանհայնի համագործակցության կազմակերպության երկրների գլխավոր դատախազների նիստերին	6
--	---

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նելլի Տեր-Թորոսյան Կաշառք տալու խրախուսական նորմի կիրառելիությանն առնչվող որոշ հիմնախնդիրներ	8
Артур Антонян Содержание и правовое определение понятий «Воинская обязанность» и «Военная служба»	12
Սևակ Պողոսյան Անզգուշությամբ հանցանք կատարող անձանց կրիմինալոգիական առանձնահատկությունները	18
Գուրգեն Քոթանջյան Հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելու կամ պահելու հանցակազմին առնչվող որոշ հարցեր	23

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դավիթ Օհանյան Պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը	26
Լուսինե Թասալյան, Սամվել Հակոբյան Հաշտարարության ինստիտուցիոնալ հիմքերը	34

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Էդգար Ավետիսյան Արբիտրաժն ու հաշտարարությունը որպես վեճի լուծման այլընտրանքային կարգ	
ՀՀ քաղաքացիական դատավարության փոփոխությունների լույսի ներքո	37
Милена Саргсян Некоторые правовые проблемы института обеспечительных мер в гражданском судопроизводстве РА	42

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ռոզա Աբաջյան Ժողովրդաիշխանության սկզբունքը. իրականացման անմիջական ձևերի սահմանադրական ամրագրման համեմատական վերլուծություն	49
Վաչիկ Շահվերդյան Հայկական պառլամենտարիզմի զարգացման պատմաիրավական ընթացքը	56
Айк Цатурян Законодательная инициатива парламента в рамках предварительного законодательного надзора.....	61

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սասուն Բաղդասարյան Երկրի պաշտպանության գործառույթի կենսագործման կառուցակարգի առանձնահատկությունները	67
---	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	75
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	88
--	----



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Ա.Ս. ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի միջնորդությունը՝ համաձայն Սահմանադրության 137-րդ հոդվածի, ինչպես նաև «Դատախազության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Արթուր Սարգսի ԴԱՎԹՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 18
Երևան
ՆՀ-235-Ա



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Վ.Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի միջնորդությունը՝ համաձայն Սահմանադրության 137-րդ հոդվածի, ինչպես նաև «Դատախազության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի.

Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Վահե Պետիկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 13
Երևան
ՆՀ-199-Ա

● ՕՐԻՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ
Դ.Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի միջնորդությունը՝ համաձայն Սահմանադրության 137-րդ հոդվածի, ինչպես նաև «Դատախազության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Դավիթ Մանուկի ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 13
Երևան
ՆՀ-200-Ա



ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՉ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՉ ԴՈՒՐՈ ՍԵՍԱՅԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Քննարկվել են դատական և իրավապահ համակարգերի ներկայացուցիչների վերապատրաստման, որակավորման բարձրացման ոլորտում երկու երկրների միջև համագործակցության ընդլայնման և այդ շրջանակներում արդարադատության ակադեմիաների ներուժի արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցեր:

Ըստ Արթուր Դավթյանի՝ Հայաստանը և Խորվաթիան համակարգային լուծումների էական նմանություններ ունեն հատկապես դատավորների, դատախազների և քննիչների վե-



րապատրաստման, ուսուցման գործընթացի միասնականացման առումով, ինչը ևս նպաստավոր նախադրյալներ է ստեղծում գործակցության ընդլայնման, Եվրոպական փորձն ավելի օգտակար և կիրառելի դարձնելու համար: Գլխավոր դատախազը հավելել է, որ անհրաժեշտ է իրավունքի զարգացման տեմպերին

համահունչ կատարելագործել ոչ միայն քրեա-իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստումների և որակավորման ծրագրերն ու նյութը, այլ նաև ուսուցման, գիտելիքների և հմտությունների փոխանցման մեթոդներն ու եղանակները:

Խորվաթիայի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահ Դուրո Սեսան շնորհակալություն է հայտնել ընդունելության համար և ներկայացրել Խորվաթիայում Արդարադատության ակադեմիայի հենքին դատավորների և դատախազների վերապատրաստման և ուսուցման ինստիտուցիոնալ, կառուցվածքային և կազմակերպական առանձնահատկությունները: Նա կարևորել է դատավորների և դատախազների համար աշխատանքային և սոցիալական երաշխիքների միասնականացման, ինչպես նաև նրանց մասնագիտական զարգացմանն ուղղված ընդհանուր դասընթացների ծրագրերի իրականացումը, ինչը բխում է նաև Եվրոպայի խորհրդի համապատասխան հանձնարարականներից: Նա հույս է հայտնել, որ փոխայցելությունները կնպաստեն այդ կառուցակարգերի ամրապնդմանը, երկու երկրների արդարադատության ակադեմիաների միջև տեղեկատվության փոխանակման դյուրացմանը, ինչպես նաև համատեղ գիտագործնական ծրագրերի իրականացմանը:

Կողմերը քննարկել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:



ՀՀ զլխավոր դասախաձը սասնակյել է ԲԻՇԵԿՈՒՄ ԿԱՅԱՃԱԾ ԱՂԶ ԵՎ ՇԱՆՀԱՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ զԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԻՆ




ՀՀ զլխավոր դատախազ Արթուր Դավթյանը Բիշքեկում մասնակցել է Անկախ պետությունների համագործակցության մասնակից երկրների զլխավոր դատախազների համակարգող խորհրդի 29-րդ նիստին:

Նիստի ընթացքում քննարկվել են կոռուպցիայի, մարդկանց առևտրի, անօրինական միգ-

ծրագրերի կատարման 2018թ. արդյունքները, իրականացման ընթացքը, ինչպես նաև 2019-2023թթ. հանցավորության դեմ համատեղ պայքարի պլանները:

Այս շրջանակներում ՀՀ զլխավոր դատախազ Արթուր Դավթյանը ներկայացրել է Հայաստանում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան ներկայացնող միջնորդությունների հիմնավորվածության ապահովման ուղղությամբ ՀՀ դատախազության նախաձեռնությամբ Հայաստանի, այնպես էլ այլ պետությունների դեմ ՄԻԵԴ կայացված որոշումների, ներպետական իրավակիրառ պրակտիկայի համակողմանի ուսումնասիրության շնորհիվ կատարված քայլերը և դրանց արդյունքները:

ՀՀ զլխավոր դատախազը Բիշքեկում մասնակցել է նաև Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ-պետությունների զլխավոր դատախազների 17-րդ նիստի աշխատանքներին, որտեղ Հայաստանն ունի երկխոսության գործընկերոջ կարգավիճակ: Նիստի օրակարգում քննարկվել են մաքսանենգությանը, թմրանյութերի, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում կազմա-



րացիայի, ահաբեկչության և բռնության այլ ձևերով արտահայտվող ծայրահեղականության, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող հանցագործությունների դեմ ԱՂԸ անդամ երկրների համագործակցության

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

կերպության մասնակից և գործընկեր երկրների գործակցության ամրապնդման մեխանիզմները:

Արթուր Դավթյանն իր ելույթում անդրադարձել է ներպետական և անդրազգային մակարդակներում այս վտանգավոր և այլ հանցատեսակներ ծնող հանցագործության դեմ պայքարի հիմնական բարդություններին և դրանց հաղթահարման ուղղությամբ ՀՀ-ում իրականացված համակարգային միջոցառումներին: ՀՀ գլխավոր դատախազը, մասնավորապես, նշել է, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից բխող համակարգային միջոցառումների շրջանակներում նախորդ տարիներին էականորեն բարելավվել է այս հանցատեսակի դեմ պայքարի արդյունավետությունը, ինչի շնորհիվ հայտնաբերվել և առգրավվել են մեծ քանակությամբ թմրամիջոցներ, որոնց առյուծի բաժինը նախատեսված է եղել տարանցման համար:

Բիշբեկ կատարած այցի շրջանակներում

ՀՀ գլխավոր դատախազն առանձին երկկողմ հանդիպումներ է ունեցել գործընկեր երկրների պատվիրակությունների ղեկավարների, գլխավոր դատախազների հետ:

Արթուր Դավթյանի և Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազ Նիգմաթիլլա Իյուլդոշևի երկկողմ հանդիպման արդյունքով ստորագրվել է հանցավորության վիճակի և այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, իրավական հարցերով խորհրդատվությունների, քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու և հանձնման մասին հարցումների շրջանակներում հաղորդակցության արդյունավետության բարձրացման, դատախազական մարմինների գործունեության հարցերով գիտագործնական համատեղ միջոցառումներ անցկացնելու և այլ ուղղություններով երկու երկրների գլխավոր դատախազությունների միջև համագործակցության հուշագիր:



ՆԵԼԼԻ ՏԵՐ-ԹՈՐՈՍՅԱԼ

ՀՀ հատուկ քննչական ծառայության
իրավական ապահովման և արտաքին կապերի
բաժնի գլխավոր մասնագետ

**ԿԱՇԱԿՔ ՏԱԼՈՒ ԽՐԱՆՈՒՄԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆՆ
ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին ու աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, կամ նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն **ստորակետերով** բաժանված պայմաններով, կամ նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

Այսինքն՝ համապատասխան խրախուսական նորմի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

- 1) կաշառքի շորթում տեղի ունենալու պայմանը,
- 2) անձի կողմից հանցանքի կատարման մասին քրեական հետապնդման մարմիններին կամովին հայտնելու պայմանը,
- 3) հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, հանցանքի կատարման մասին հայտնելու պայմանը,
- 4) կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի չլինելու պայմանը,

5) անձի կողմից հանցագործության բացահայտմանն աջակցելու պայմանը:

Ստացվում է, որ օրենսդրի կողմից սահմանված վերոնշյալ պայմաններին բավարարելու դեպքում միայն իրավակիրառ մարմնում կծագի անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտականությունը:

Հարկ է նկատել, որ կաշառակերությունը դասվում է այն հանցագործությունների շարքը, որոնք համարվում են դժվար բացահայտելի, այն պատճառով, որ հանցագործության բոլոր մասնակիցների շահերը համընկնում են, և վարույթն իրականացնող մարմնի համար ստեղծվում են լուրջ խոչընդոտներ ապացույցներ ձեռք բերելու հարցում:

Հետևաբար՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավված անձանց՝ հանցագործության բացահայտման մեջ շահագրգռված չլինելու հանգամանքն էապես ազդում է վարույթն իրականացնող մարմնի կողմից ողջամիտ ժամկետում պատշաճ քննություն իրականացնելու օրենսդրորեն ամրագրված պարտականության իրականացման վրա:

Օրենսդրի կողմից կաշառք տալու համար խրախուսական նորմի նախատեսումն ունի մեկ նպատակ, այն է՝ շահագրգռել կաշառք տվողին հանցագործության բացահայտման մեջ՝ ազատելով սահմանված քրեական պատասխանատվությունից ամրագրված բոլոր պայմանների առկայությունն ապահովելու դեպքում:

Սակայն խրախուսական նորմով ամրագրված դրույթները, որպես կանոն, դրանք գործնականում դարձնում են ոչ կիրառելի:

Կարծում ենք՝ քրեական պատասխանատվությունից ազատվելու համար կաշառքի շորթման վերաբերյալ պայմանի պարտադիր լինելու հանգամանքի նախատեսումը խնդրահարույց է, այն պատճառաբանությամբ, որ գործ-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

նականում կարող են լինել այնպիսի դեպքեր, երբ հանցագործը, ապահովելով ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված մյուս պայմանների առկայությունը, դրանք են՝ համապատասխան ժամկետում կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին՝ մինչև նրանց կողմից այդ դեպքի մասին տեղեկանալը կամովին հայտնելը, ինչպես նաև հանցագործության բացահայտմանն աջակցելը, այնուամենայնիվ, չի ազատվում կաշառք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից, քանի որ բացակայում է կաշառքի շորթում տեղի ունենալու փաստը:

Այսինքն՝ նույնիսկ այն դեպքերում, երբ կաշառք տվողի աջակցությամբ վարույթ իրականացնող մարմնին կհաջողվի բացահայտել կոռուպցիոն մեծ շղթա և ձեռք բերել դրա մասնակիցների մերկացմանն ուղղված արժեքավոր ապացույցներ, միևնույն է՝ անձի վրա չի տարածվի խրախուսական նորմով ամրագրված կարգավորումը մեկ պայմանի՝ կաշառքի շորթման բացակայության հիմքով:

Կարծում ենք՝ ողջամիտ չէ նաև քրեական պատասխանատվությունից ազատվելու համար եռօրյա ժամկետ սահմանելը, քանի որ գործնականում հնարավոր է, որ անձը, սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, ի վիճակի չլինի սահմանված ժամկետում կաշառք տալու մասին հայտնելու քրեական հետապնդման մարմիններին:

Որպես արդյունք՝ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ քրեական հետապնդման մարմնի աշխատակիցները, տվյալ ժամանակահատվածում չհամանալով հանցագործության կատարման փաստի մասին, վարույթ իրականացնեն դեպքից բավական ուշ: Ստացվում է՝ հանցագործներին հայտնաբերելուն ուղղված կաշառք տվող անձի՝ եռօրյա ժամկետից ուշ ցուցաբերած աջակցությունը չի ազատի վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիությունից:

Աներկբա է, որ լատենտայնության բարձր մակարդակ ունեցող այս հանցատեսակի դեմ պայքարում կաշառք տվող անձի համագոր-

ծակցության նշանակությունը չպետք է թերագնահատել:

Վերոգրյալից միարժեքորեն բխում է, որ գործող խրախուսական նորմը ոչ միայն չի նպաստում, այլև քրեական հետապնդման մարմնի համար ստեղծում է լուրջ դժվարություններ հանցագործության բացահայտմանն ուղղված անփոխարինելի ապացույցներ ձեռք բերելու հարցում:

Այսպիսով՝ գործող օրենսդրական կարգավորումները, մեղմ ասած, չեն նպաստում այս հանցատեսակի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև չեն օժանդակում կոռուպցիայի կանխարգելման խնդրների լուծմանը:

ՀՀ Կառավարության 2019 թվականի ծրագրի՝ համաձայն՝ հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության համար անհրաժեշտ է երաշխավորել փոխզսպումների և հակակշիռների սկզբունքի կիրարկումը, **հնարավորինս նվազեցնել օրենսդրական կարգավորումներում երկակի մոտեցումներ կիրառելու հնարավորությունները, ինչպես նաև ներդնել նոր գործիքակազմ:**

Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2007 թվականին)² 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այն մասին հարցը, որ նախատեսի, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, այն անձին քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելու հնարավորությունը, ով **արդյունավետորեն համագործակցում է որևէ իրավախախտման կապակցությամբ քննությանը կամ քրեական հետապնդմանը**, որ այդպիսին է ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի» (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2004 թվականին)³ 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր

¹ Տե՛ս <https://www.gov.am/files/docs/3133.pdf>:

² Տե՛ս http://www.un.org/res/UN%20Treaties/XI_9.pdf:

³ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=29959>:

Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ՝ անհրաժեշտ հատուկ քննչական տեխնիկայի օգտագործումը թույլատրող միջոցները, որոնք հնարավորություն են տալիս, ներպետական իրավունքին համապատասխան, **դյուրացնելու** սույն Կոնվենցիայի 2-14-րդ հոդվածներում նախատեսված հանցագործությունների առնչությամբ **ապացույցների հավաքումը և կոռուպցիայի գործիքների ու եկամուտների կամ այլ գույքի**, որը համարժեք է նման եկամուտներին, **նույնացնելը, հայտնաբերելը, սառեցնելը և առգրավելը՝** սույն Կոնվենցիայի 19-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված միջոցների կիրառման նպատակով:

Այսպիսով՝ հանցագործության բացահայտման շահերից ելնելով՝ անհրաժեշտ է վերանայել, մեղմել համապատասխան խրախուսական նորմում ամրագրված պայմանները:

Կարծում ենք՝ կաշառք տվող անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների նախատեսումը՝

- 1) եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, **կամ՝**
- 2) այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին, **կամ՝**
- 3) աջակցել է հանցագործությունը բացահայտելուն:

Ինչպես նկատելի է՝ խրախուսական նորմի կիրառման համար առաջարկվող պայմանները բաժանված են «կամ» շաղկապով, այսինքն՝ պայմաններից առնվազն մեկի առկայության դեպքում անձը կազատվի քրեական պատասխանատվությունից: Առաջարկվող կարգավորմամբ բացառվում է նաև խրախուսական նորմի կիրառման համար նախատեսված ժամկետային սահմանափակումը:

Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ, օրինակ՝ անձը մինչև կաշառք տալու մասին քրեա-

կան հետապնդման մարմիններին հայտնի դառնալը այդ մասին կամովին կհայտնի քրեական հետապնդման մարմիններին, ապա խրախուսական նորմի կարգավորումների ուժով կազատվի քրեական պատասխանատվությունից, քանի որ առնվազն մեկ պայմանը բավարարելը իրավաչափ կդարձնի հիշյալ նորմի դրույթների տարածումը:

Գործող խմբագրությամբ խրախուսական նորմի վերանայման անհրաժեշտությունը բխում է նաև միջազգային փորձի ուսումնասիրությունից:

Մասնավորապես՝ Ղազախստանի քրեական օրենսգրքի⁴ 367-րդ հոդվածով սահմանվում է, որ կաշառք տվողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ այդ անձը արարքի մասին կամովին հայտնել է իրավապահ մարմիններին:

Ռուսաստանի քրեական օրենսգրքի⁵ 291-րդ հոդվածի համաձայն՝ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա ակտիվորեն աջակցել է հանցագործության բացահայտմանը և (կամ) քննությանը, և կամ պաշտոնատար անձի կողմից տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ այդ անձը հանցանքի կատարումից հետո այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին:

Մակեդոնիայի քրեական օրենսգրքի⁶ 358-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանն անձին ազատում է քրեական պատասխանատվությունից, եթե կաշառքը տրվել է պաշտոնատար անձի առաջարկի հիման վրա, և կաշառք տվողն այդ մասին հայտնել է իրավապահ մարմիններին մինչև հանցագործության բացահայտումը:

Բոսնիա և Հերցեգովինայի քրեական օրենսգրքի⁷ 218-րդ հոդվածի 3-րդ մասով՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե կաշառք տվողն այդ մասին հայտնել է իրավապահ մարմիններին մինչև հանցագործության բացահայտումը:

⁴ Տե՛ս https://online.zakon.kz /document/?doc_id= 31575252&doc_id2 =31575252#pos= 0;12654&pos2 =4952;-62:

⁵ Տե՛ս [http://www.consultant.ru/ document/cons_doc_LAW_ 10699/ 0108932a3c 6234f73590 b25799588 ada 492deb23/:](http://www.consultant.ru/ document/cons_doc_LAW_ 10699/ 0108932a3c 6234f73590 b25799588 ada 492deb23/)

⁶ Տե՛ս <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/untc/unpan016120.pdf:>

⁷ Տե՛ս <http://www.iccnw.org/documents/criminal-code-of-bih.pdf:>

Չեռնոգորիայի քրեական օրենսգրքի⁸ 324-րդ հոդվածը սահմանում է, որ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ կաշառք տալուց հետո անձը կամովին հայտնել է հանցանքի կատարման մասին ու ակտիվորեն աջակցել է հանցագործության բացահայտմանը և քննությանը:

Մոլդովայի քրեական օրենսգրքի⁹ 325-րդ հոդվածի համաձայն՝ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ անձը հանձնվել է քրեական հետապնդում իրականացնող մարմիններին՝ չիմանալով, որ նրանք տեղյակ են կատարված հանցագործության մասին:

Վրաստանի քրեական օրենսգրքի¹⁰ 339-րդ հոդվածով կաշառք տվողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե կամովին այդ մասին հայտնում է իրավապահ մարմիններին:

Անհրաժեշտ է նշել, որ նմանաբնույթ կարգավորումներ են ամրագրված նաև Լատվիայի (323-րդ հոդված)¹¹, Ղրղզստանի (314-րդ հոդված)¹², Մոնղոլիայի (269-րդ հոդված)¹³ քրեական օրենսգրքերով:

Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասը մինչև 2014 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններ կատարելն ուներ հետևյալ բովանդակությունը. կաշառք տվող անձն ազատվում

է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին:

Կարծում ենք՝ վերոնշյալ խմբագրությամբ նորմի կիրառելիության հնարավորությունն առավել իրատեսական է՝ ի տարբերություն գործող կարգավորման:

Հատկանշական է նաև, որ գործող խմբագրությամբ խրախուսական նորմում ամրագրված պայմաններն իրավակիրառ մարմնի համար ստեղծում են խոչընդոտներ, որպես արդյունք՝ կարգավորմանը տալով խիստ սահմանափակ կիրառելիություն ունեցող նորմի կարգավիճակ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ, «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի¹⁴ 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի պարբերաբար գնահատել համապատասխան իրավական փաստաթղթերը և վարչական միջոցները՝ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տեսանկյունից դրանց համարժեքությունը որոշելու նպատակով:

Այսպիսով՝ աներկբա է ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված գրեթե կիրառելիություն չունեցող նորմում ամրագրված պայմանների վերանայման անհրաժեշտությունը, ինչի շնորհիվ կվերացվեն հանցագործության բացահայտումը խոչընդոտող օրենսդրական կարգավորումները:



⁸ Տե՛ս <https://www.oecd.org/corruption/acn/ACN-Foreign-Bribery-Offence-Enforcement-ENG.pdf>, p.84:

⁹ Տե՛ս <https://www.legislationline.org/download/id/3559/file/Criminal%20Code%20RM.pdf>:

¹⁰ Տե՛ս file:///C:/Users/User/Downloads/Georgia_CC_2009_am2019_en.pdf:

¹¹ Տե՛ս file:///C:/Users/User/Downloads/Latvia_CC_1998_am2018_en.pdf:

¹² Տե՛ս <https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/kg/kg013en.pdf>:

¹³ Տե՛ս https://www.unodc.org/res/cld/document/mng/2001/criminal_code_of_mongolia_html/Mongolia_Criminal_Code_2002.pdf:

¹⁴ Տե՛ս http://www.un.am/res/UN%20Treaties/XI_9.pdf:

АРТУР АНТОНЯН

Военный прокурор Ереванского гарнизона, соискатель
кафедры уголовного права и уголовно-процессуального права
Российско-Армянского университета

СОДЕРЖАНИЕ И ПРАВОВОЕ ОПРЕДЕЛЕНИЕ ПОНЯТИЙ «ВОИНСКАЯ ОБЯЗАННОСТЬ» И «ВОЕННАЯ СЛУЖБА»

Актуальность темы. В теории уголовного права имеются два подхода к рассмотрению проблемы объекта преступлений против военной службы: с одной стороны – это порядок прохождения военной службы, а с другой – это военная безопасность государства.

Кроме того, малочисленность научных исследований в теории уголовного права этой группы преступлений и при этом многочисленность, наличие широкой правовой базы, регулирующей сферу военной службы как в РА, так и в РФ, вследствие чего и накопилось большое количество как законодательно, так и научно не определенных терминов, раскрытие содержания которых приведет к разрешению и проблемы объекта преступлений против военной службы, и проблемы их субъекта.

Исходя из этого, целью данной работы является определение и отграничение ряда применяемых на законодательном уровне терминов, которые, так или иначе, соотносятся с группой преступлений против военной службы с учетом того, что большинство диспозиций преступлений против военной службы является бланкетной. В связи с достижением поставленной цели, появляется необходимость разрешения следующих задач: во-первых, систематизация законодательства, соотносящегося с преступлениями против военной службы, выделение из числа регулирующих военную службу нормативно-правовых актов ряда терминов, законодательно, научно неопределенных, и определение их границ друг от друга, что позволит разрешить поставленную перед автором цель.

Методы проведенного исследования. В процессе проведенного исследования автор воспользовался рядом общенаучных, уголовно-

правовых методов, таких как: дедукция и индукция, анализ и синтез, систематический, толкование, сравнительно-правовой, грамматический, императивный и др.

Раздел XI главы 33 Уголовного Кодекса Российской Федерации выделяет группу преступлений против военной службы.

Эта группа преступлений представляет собой совокупность отдельно зафиксированных в уголовном законодательстве общественно опасных деяний, которые совершаются военнослужащими или пребывающими в установленном законом порядке в запасе гражданами. Военные преступления посягают именно на порядок прохождения военной службы, а также порядок прохождения соответствующими субъектами военных сборов.

Указанный раздел включает в себя 22 статьи, устанавливающие ответственность именно за нарушения определенного законом порядка прохождения военной службы и военных сборов.

Аналогичную группу преступлений против военной службы содержит и Уголовный Кодекс РА, который устанавливает соответствующие нормы в разделе 12 «Преступления против порядка военной службы», состоящей из одной главы – главы 32 с аналогичным названием раздела заглавием.

Порядок прохождения военной службы определяется рядом нормативно-правовых актов, лишь посредством исследования которых может определиться родовая объект рассматриваемой группы преступлений.

Так, во-первых, основой привлечения лиц к военной службе является сама Конституция РФ, которая в статье 59 признает «защиту

Отечества долгом и обязанностью гражданина РФ». В ч. 2 же закрепляет положение, согласно которому, гражданин РФ несет военную службу в соответствии с законодательством РФ.

Аналогично, но несколько иначе применяется термин «военная служба» в Конституции РА. Хоть этот термин непосредственно связывается с понятием «Вооруженные силы» и по своему теоретическому смыслу и содержанию предполагает службу именно в Вооруженных силах РА, однако в Конституции РА устанавливается обязанность каждого гражданина в установленном законе порядке участвовать в **защите** Республики РА (ч. 3 ст. 14), а в ч. 1, по сути, закрепляются основные направления деятельности вооруженных сил РА – обеспечение защиты, безопасности, территориальной целостности и неприкосновенности границ РА.

Анализ законодательно закрепленных формулировок приводит к необходимости рассмотрения и отграничения содержания широко применяемых в сфере обороны категорий **«воинская обязанность»** и **«военная служба»**, и соответственно «военнообязанный» и «военнослужащий».

Анализ статьи 59 Конституции РФ и исследование научной литературы вызывает необходимость рассмотрения проблемы соотношения понятий **«защита отечества»** и **«обязанность несения военной службы»**.

По общему правилу, под словом «защита» («защитить») этимологически в ряде толковых словарей понимается охрана, ограждение от посягательств, враждебных действий, опасности, а также «предохранять, обезопасить от чего-либо» [1].

Помимо этого, в ряде словарей синонимов, в качестве тождественных по смыслу слов-синонимов, выделены такие, как «оборона, охрана, щит, ограда, ограждение, обеспечение, предохранение, оплот, столп, твердыня, опора, заступничество, покровительство, протекция и т. д.» [2].

Примечательным в рассматриваемой конституционной норме является то, что на конституционном уровне, помимо обязанности, применяется и формулировка «долг», которая содержит в себе и морально-нравственный аспект.

Так, по своему определению в философском и этическом контексте под словом «долг» понимается осознание личностью безусловной необходимости исполнения того, что следует из морального идеала.

Закрепленная на конституционном уровне формулировка «долг» включает в себя также и добровольный контекст, согласно которому, гражданин по своему желанию может нести военную службу по контракту на добровольных началах, но при этом после вступления в контракт также становится обязанным и должным защищать Родину.

При рассмотрении проблемы соотношения этих терминов, а также для выявления полного содержания защищаемых уголовным законом общественных отношений необходимо обратиться также и к другим нормативно-правовым актам, регулирующим военную службу и военную сферу.

Второй категорией подобного рода нормативно-правовых актов являются следующие Законы:

1. ФЗ РФ «Об обороне» от 31 мая 1996 г. №61-ФЗ.
2. ФЗ РФ «О воинской обязанности и военной службе» от 28 марта 1998 г. № 53-ФЗ.
3. ФЗ РФ «О статусе военнослужащего» от 27 мая 1998 г.

Согласно научным определениям и комментариям к статье 1 рассматриваемого Закона, определяющего формы воинской обязанности, исследуемой нормой устанавливается «порядок исполнения гражданами Российской Федерации долга и обязанности защищать с оружием в руках свое Отечество, нести военную службу, проходить различные формы вневойсковой военной подготовки и выполнять другие связанные с обороной и безопасностью государства обязанности» [3].

Исходя из этого, фактически **можно разработать следующее определение термина «воинская обязанность»**.

Воинская обязанность – это обязанность соответствующих субъектов в различных формах по обеспечению защиты, обороны, безопасности государства в установленном

законом или в добровольном порядке посредством их непосредственного участия в процессе реализации военной службы или вневоинской военной подготовки.

Исходя из такой постановки проблемы и рассмотрения сути и содержания исследуемых терминов, однозначно можно выделить характеризующий суть и содержание дефиниций «защита» и «обязанность несения военной службы» и являющийся общим по содержанию термин – «оборона», которая этимологически определяется как «защита, отражая нападения противника» [1].

В соответствии же со ст.1 ФЗ РФ «Об обороне», «под обороной понимается система политических, экономических, военных, социальных, правовых и иных мер по подготовке к вооруженной защите и вооруженная защита Российской Федерации, целостности и неприкосновенности ее территории».

Обратим внимание на то обстоятельство, что и по своему этимологическому смыслу, и по вложенному законодателем своему юридическому содержанию термин «оборона» является более широкой категорией, нежели «защита Отечества» или «обязанность несения военной службы». Фактически, «защита» является лишь одной из форм обороны, а обязанность несения военной службы – составной частью, элементом обороны.

В условиях отсутствия законодательного определения понятия **«воинская обязанность»**, статья 1 ФЗ РФ «О воинской обязанности и военной службе» устанавливает круг обязанностей граждан, составляющих содержание воинской обязанности:

1. воинский учет;
2. обязательную подготовку к военной службе;
3. призыв на военную службу;
4. прохождение военной службы по призыву;
5. пребывание в запасе;
6. призыв на военные сборы и прохождение военных сборов в период пребывания в запасе.

В той же статье в части 2 устанавливается также круг обязанностей, относящихся к периоду

мобилизации, военного положения или военного времени, включающий в себя:

1. призыв на военную службу по мобилизации, в период военного положения и в военное время;
2. прохождение военной службы в период мобилизации, в период военного положения и в военное время;
3. военное обучение в период военного положения и в военное время.

Категория **«военная служба»** же в Конституциях наших государств практически употребляется лишь в двух нормах, закрепляющих понятие и направления деятельности Вооруженных сил в целом.

Кроме того, с понятием «военная служба», как уже было отмечено, можно столкнуться на законодательном уровне в регулирующих сферу обороны Законах РФ и РА. В РФ действует ФЗ РФ «О воинской обязанности и военной службе» от 28.03.1998 г. №53-ФЗ, а в РА Закон РА «О военной службе и статусе военнослужащего» от 15.11.2017 г №195-Н с определенной ссылкой на утративший силу Закон РА «О воинской обязанности» от 16.09.1998 г. №А3-250.

Аналогичные данным Законам, в РА действуют Закон РА «О воинской обязанности» от 16.09.1998 г. (в редакции от 15.11.2017 г.) и Закон РА «О военной службе и статусе военнослужащего» от 15.11.2017 г №195-Н.

В статье 2 же ФЗ РФ «О воинской обязанности и военной службе» от 28.03.1998 г. №53-ФЗ закреплено определение термина «военная служба». Согласно дефиниции, военная служба представляет собой «особый вид федеральной государственной службы, исполняемой гражданами, не имеющими гражданства (подданства) иностранного государства, в Вооруженных Силах Российской Федерации и в войсках Национальной гвардии Российской Федерации (далее также - другие войска), в спасательных воинских формированиях федерального органа исполнительной власти, уполномоченного на решение задач в области гражданской обороны (далее – воинские формирования), Службе внешней разведки Российской Федерации, органах федеральной службы безопасности, органах государственной

охраны, органах военной прокуратуры, военных следственных органах Следственного комитета Российской Федерации и федеральном органе обеспечения мобилизационной подготовки органов государственной власти Российской Федерации (далее – органы), воинских подразделениях федеральной противопожарной службы и создаваемых на военное время специальных формирований, а гражданами, имеющими гражданство (подданство) иностранного государства, и иностранными гражданами – в Вооруженных Силах Российской Федерации и воинских формированиях».

Итак, в предмет Закона «О воинской обязанности» входят военный учет, подготовка к военной службе, призыв, военная служба, а также отношения, связанные с организацией и проведением подготовки в резервах.

Военнообязанными указанным законом признаются граждане мужского пола допризывного и призывного возраста или состоящие на учете в резерве, а также граждане женского пола, имеющие военную специальность или прошедшие военную службу.

По части 2 рассматриваемой статьи, воинская обязанность граждан включает в себя воинский учет, подготовку к военной службе, призыв и военную службу, состояние в резерве.

По общему правилу, и в Конституции РА, и в Конституции РФ закреплены аналогичные по содержанию понятия Вооруженных сил.

Исследование и анализ рассмотренных выше норм, предусматривающих обязанность граждан нести военную службу, позволяет выделить некоторые особенности, во-первых, при рассмотрении соотношения понятий «воинская обязанность» и «военная служба»:

1. «защита Отечества», «военная служба» и «обязанность несения военной службы» объединены одним общим понятием «оборона»;
2. эти термины нельзя считать тождественными или однозначными, поскольку они отличаются по ряду нескольких признаков:
 - а. по своей юридической природе;
 - б. по характеру и объему явлений, составляющих их содержание;

в. по объему предъявляемых к субъектам законодателем требований, заключающихся в различных формах и способах.

Изложенное означает, что на законодательном уровне в исследуемые понятия вложены разные смыслы. Так, **военная служба является очередным этапом воинской обязанности**.

В рамках данной статьи предлагается конкретизировать суть и содержание воинской обязанности.

Так, предлагается **в зависимости от воли субъекта воинскую обязанность классифицировать на воинскую обязанность в силу закона и воинскую обязанность на добровольной основе**.

Кроме того, все остальное, вышеперечисленное и приведенное в рассмотренных выше Законах, можно рассматривать как **этапы несения воинской обязанности**, подразделяемые на 3 этапа:

1. допризывной (воинский учет; обязательная подготовка к военной службе)
2. призывной (призыв на военную службу; призыв на военные сборы);
3. период военной службы (прохождение военной службы по призыву);
4. постслужебный период (пребывание в запасе; прохождение военных сборов в период пребывания в запасе).

Следующим основанием классификации воинской обязанности может выступить **период, в течение которого может быть реализована военная служба**. Так, в связи с этим, можно выделить **воинскую обязанность в мирное время и воинскую обязанность в военный период**, подразделяющийся на три вида – мобилизация, военное положение, военное время.

Исходя из этого, воинская обязанность в военный период включает в себя 3 этапа:

1. призыв на военную службу по мобилизации, в период военного положения и в военное время;
2. прохождение военной службы в период мобилизации, в период военного положения и в военное время;

3. военное обучение в период военного положения и в военное время.

С учетом изложенного, можно полностью согласиться с мнением авторов Комментария к Конституции относительно того, что в категорию «защита» может быть вложено несколько смыслов:

1. отпор агрессии или другим каким-либо попыткам ущемления интересов России;
2. в формулировку «защита Отечества» вкладывается особый смысл в том контексте, что Отечество – это не просто государство, выступающее юридической организацией, а именно государство с реализуемыми им и своим населением суверенности, целостности, а также с состоявшимся высоким уровнем сознания гражданским обществом, стоящим за свои, общенациональные и общегосударственные интересы;
3. «защита Отечества» связана с терминами «долг» и «обязанность». Это означает, что, с одной стороны, защита является моральной обязанностью каждого гражданина, которая находит свое правовое закрепление в Конституции, а с другой стороны – это закрепляемая и конкретизируемая на законодательном уровне обязанность [4].

В отличие от российского законодателя, **армянский законодатель** ни в одном из имеющихся законов не определил понятие «военной службы». Лишь в части 1 статьи 3 Закона РА «О военной службе и статусе военнослужащего» от 15.11.2017 г №195-Н военная служба характеризуется как установленный Законом особый вид государственной службы в Вооруженных силах Республики Армения и иных войсках.

В Законе РА «О воинской обязанности» от 16.09.1998 г. №АЗ-250 дается определение термина «воинская обязанность». Так, согласно закрепленной в статье 3 рассматриваемого Закона норме-дефиниции, под воинской обязанностью следовало понимать не только конституционную обязанность участия граждан в защите страны. Однако такое определение не является достаточным для осмысления самого

понятия «воинская обязанность» и его разграничения от понятия «военная служба». Но раскрыть содержание «воинской обязанности» можно посредством анализа некоторых статей вышеприведенного закона, регулирующих его предмет (ст. 1) и круг субъектов, подпадающих под понятие «воинская обязанность» (ст. 3).

Статьей 331 УК РФ определяется понятие преступлений против военной службы. Так, согласно ч. 1 рассматриваемой статьи: «Преступлениями против военной службы признаются предусмотренные соответствующей главой преступления против установленного порядка прохождения военной службы, совершенные военнослужащими, проходящими военную службу по призыву либо по контракту, а также гражданами, пребывающими в запасе, во время прохождения ими военных сборов».

В части 3 же закреплено положение, согласно которому: «Уголовная ответственность за преступления против военной службы, совершенные в военное время либо в боевой обстановке, определяется законодательством Российской Федерации военного времени».

Итак, исходя из названия раздела и такого изложенного в УК РФ определения преступлений против военной службы, а также статей, изложенных в данном разделе, можно сделать вывод о том, что в рамках рассматриваемого раздела устанавливаются группы деяний, касающихся лишь этапа военной службы и постслужебного этапа.

Учитывая Конституционную установку, а также вышеисследуемое содержание понятий воинской обязанности и военной службы, которая является лишь одним из этапов воинской обязанности, предлагаются расширение и, соответственно, редакция названия как раздела, так и самой ст. 331 УК РФ и замена понятия военной службы на понятие «Преступления против несения воинской обязанности».

Такая постановка вопроса предоставит возможность, во-первых, перенесения из главы «Преступления против порядка управления» статью 328 УК РФ «Уклонение от прохождения военной и альтернативной гражданской службы». Хоть под порядком управления понимается «нормальная деятельность органов власти и

местного самоуправления, понимаемая как складывающиеся между органами власти управления и гражданами отношения по поводу осуществления первыми распорядительных, административных функций и подчиненности, обязательности исполнения и дисциплины вторыми» [5, с. 568] и нахождение этой статьи в группе преступлений против порядка управления по своему непосредственному объекту не противоречит родовому и видовому, тем не менее, в предлагаемой редакции родовой, видовой и непосредственный объекты будут конкретизированы и точны.

Во-вторых, предоставит возможность включения в данную главу некоторых статей, которые стали необходимостью.

Аналогична и структура соответствующего

раздела УК РА с одной лишь разницей, что армянский законодатель озаглавил раздел как «Преступления против порядка военной службы», что представляется несколько более корректным, чем подход российского законодателя, поскольку данной группой преступлений нарушаются именно установленные правила и порядок прохождения военной службы по призыву или по контракту, а также порядка прохождения гражданами, пребывающими в запасе военных сборов.

Таким образом, предмет исследования данной статьи нуждается в широком, полном и всестороннем исследовании и анализе не только на теоретическом и законодательном уровне, но и на правоприменительном.



ՍԵՎԱԿ ԴՈՂՈՍՅԱՆ

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ

ԱՆՉԳՈՒԾՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԳԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԱՆՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՄԻՆԱԼՈՒԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անզգուշությամբ հանցանք կատարած անձինք բնութագրվում են առանձնահատուկ այնպիսի որակներով և հատկություններով, որոնցով տարբերվում են դիտավորությամբ հանցանքներ կատարող անձանցից:

Անզգուշությամբ հանցանք կատարած անձանց բնութագրական են այնպիսի որակներ, ինչպիսիք են, օրինակ՝ անտարբերությունը հասարակական շահերի, անվտանգության կանոնների և դրանց պահպանման նկատմամբ, անկարգապահությունը և այլն: Հենց այդ որակների և հատկությունների ամբողջությամբ ձևավորվում է թեթևամտությունը՝ մեղավոր անձի անպատասխանատու վերաբերմունքը իրավունքի նորմերով պահպանվող օբյեկտների և դրանց կապակցությամբ ունեցած պարտականությունների նկատմամբ: Այս պատճառով՝ անզգուշությամբ հանցանք կատարող անձինք, ելնելով իրենց արժեքային կողմնորոշման հակասոցիալական ուղղվածությունից, կարող են առանձնանալ որպես հանցանք կատարող անձանց ինքնուրույն կրիմինալոգիական խումբ:¹

Անզգուշությամբ հանցանք կատարած անձանց իրավագիտակցությունը բավականին խոր ուսումնասիրված չէ իրավաբանական գրականության մեջ, սակայն որոշ հետազոտություններ հնարավորություն են տալիս եզրակացնելու նրանց իրավագիտակցության թերությունների վերաբերյալ, որոնք տարբերում են վերջիններիս դիտավորությամբ հանցանք կատարած անձանցից:

Անզգուշությամբ հանցանք կատարող անձանց իրավագիտակցության թերությունների յուրահատկությունը, մեր կարծիքով, արտա-

հայտվում է ոչ միայն նրանց բացասական վերաբերմունքով հասարակությունում գոյություն ունեցող համապատասխան նորմերի և կանոնների նկատմամբ, ինչպես նշում են իրավաբան-գիտնականները,² այլ նաև կոնկրետ նորմերի ու կանոնների չիմացությամբ, կամ դրանք չընդունելու, դրանց չենթարկվելու ցանկությամբ, կամ ընդհանուր և հատուկ կանոններին հետևելու պատրաստակամության բացակայությամբ անվտանգության այն ոլորտներում, որտեղ նրանք դրսևորել են անզգուշություն:

Ուսումնասիրությունները թույլ են տալիս նշել, որ անզգուշությամբ հանցանք կատարողների կրիմինալոգիական բնութագիրը պայմանավորված է նրանց սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական, քրեաիրավական հատկանիշները բնութագրող, հանցավոր վարքագիծը պայմանավորող առանձնահատկություններով:

Այսպես, ըստ **սեռի տարբերական առանձնահատկությունների**՝ նշենք, որ անզգուշությամբ հանցանք կատարողների զանգվածում տղամարդիկ զգալիորեն գերակայում են. կանայք կազմում են մոտ 2%-ը: Սա հիմնականում կապված է վարորդների մեջ տղամարդկանց ու կանանց ոչ համաչափ տեսակարար կշռով և նրանց տարբեր վերաբերմունքով՝ ուղղված ճանապարհային երթևեկության կանոնների պահպանմանը: Ու չնայած վերջին տարիներին նկատվում է նաև հանցանք կատարողների մեջ կանանց մասնաբաժնի աճի միտում, մասնավորապես՝ կին վարորդների կողմից կատարվող անզգույշ հանցանքների թվի ավելացման հաշվին, միևնույն է՝ իրավա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

¹ Տե՛ս Бурлаков В.Н. Криминология, СПб: Санкт–Петербургский Государственный Университет МВД России. 1999, էջ 396:

² Տե՛ս Օհանյան Ա.Վ. «Անզգույշ հանցավորությունը և դրա կանխումը Հայաստանի Հանրապետությունում», ատենախոսություն ի. գ. թ. աստիճանի հայցման, էջ 29:

կիրառ պրակտիկան վկայում է այն մասին, որ կին-վարորդներին առավել բնութագրական է կարգապահությունը: Ընդ որում՝ վիճակագրական տվյալները վկայում են, որ ավտոտրանսպորտային պատահարների հետևանքով մահվան դեպքերը տղամարդկանց մեղավորությամբ 5-6 անգամ ավելի շատ են, քան կանանց մեղքով կատարվածները, անկախ այն հանգամանքից, որ անձնական ավտոմեքենաներ վարողների շարքում գնալով ավելանում է կանանց թիվը:

Ըստ տարիքային առանձնահատկությունների՝ անզգուշությամբ հանցանք կատարողների կազմում մեծամասնություն են կազմում միջին տարիքի ներկայացուցիչները: Այսպես՝ անզգուշ հանցագործությունների համար դատապարտվածները, ըստ տարիքի, դասակարգվում են հետևյալ կերպ. 14-17 տարեկանները՝ 1%, 18-24 տարեկանները՝ 31,4%, 25-29 տարեկանները՝ 23,5%, 30-49 տարեկանները՝ 39,7%, և 50 և ավելի տարեկանները՝ 5,4%: Ինչպես նկատում ենք՝ առավել քրեածին է 30-49 տարեկանների խումբը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս անձինք ավտոմեքենա վարելու բավականին փորձ են ձեռք բերում, և նրանց մեջ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վտանգավոր հետևանքներից խուսափելու հնարավորության չիմնավորված վստահություն է ձևավորվում, ինչպես նաև՝ սահմանված կանոնների նկատմամբ անտարբերություն: **Ըստ կրթական մակարդակի՝** անզգուշությամբ հանցանք կատարողների մեջ մեծ մասը միջին նույնիսկ ոչ լրիվ կրթություն ունեցողներ են, և միայն նրանց չնչին մասն ունի բարձրագույն կրթություն:

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ հանցավոր վարքագծի պարզաբանման առումով կրիմինալոգիական որոշակի նշանակություն ունեն նաև ընտանեկան և սոցիալ-դերային առանձնահատկությունները: Քանի որ անզգուշությամբ հանցանք կատարող անձանց թվում գերակայում են ճանապարհատրանսպորտային հանցանք կատարածները, ուստի սոցիալ-դերային առանձնահատկությունները կարող ենք ներկայացնել այս համատեքստում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ այս առումով նշանակություն ունի վարորդական փորձը: Այսպես՝ անզգուշ հանցագործությունների համար դատապարտվածները դասակարգվում են հետևյալ կերպ. 1-2 տարվա վարորդական ստաժ ունեցողները՝ 32-34%, նախկինում վարչական պատասխանատվության ենթարկվածները՝ 80%, իսկ քրեական պատասխանատվության ենթարկվածները՝ 12%: Ըստ մասնագիտությունների՝ բանվորները՝ 9,7%, պետական ծառայողները՝ 5,8%, թոշակառուները՝ 3,7%, այլ մասնագիտություններ՝ 15%, իսկ չաշխատող իրավախախտները՝ 3,3%³:

Հայաստանի Հանրապետությունում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ճանապարհատրանսպորտային հանցանքներ կատարած անձանց 6-8%-ն ունեցել են դատվածություն, իսկ դրանց 25-30%-ը նախկինում ենթարկվել է վարչական պատասխանատվության: Ի տարբերություն ՌԴ, որտեղ այդ անձանց շրջանակում նախկինում վարչական պատասխանատվության ենթարկվածները կազմում են 80%, իսկ քրեական պատասխանատվության ենթարկվածները՝ 12%,⁴ Հայաստանի Հանրապետությունում գրանցված ցուցանիշը, ինչպես տեսնում ենք, ավելի ցածր է:

Հետազոտությունները ցույց են տվել, որ հանցավոր վարքագծի պարզաբանման առումով կրիմինալոգիական նշանակություն ունեն անզգուշությամբ հանցանք կատարողների բարոյահոգեբանական առանձնահատկությունները:

Անձանց բացասական որակների, առանձնահատկությունների վերհանումը թույլ է տալիս որոշել դրանց հիմքում ընկած սոցիալական պահանջմունքներն ու արժեքային կողմնորոշումները:

Անզգուշությամբ հանցանք կատարողների բարոյահոգեբանական առանձնահատկությունները դրսևորվում են սահմանված համապատասխան կանոններն այդ անձանց կողմից խախտելու հանրային վտանգավորության թերագնահատմամբ, դրանց չհետևելու կամ չպահպանելու, ինչպես նաև դրանց նկատմամբ ան-

³ Վիճակագրական տվյալները վերցված են համացանցից՝ 2012 թվականի հոկտեմբերի դրությամբ:

⁴ Տե՛ս Жулев В.И. Предупреждение дорожно-транспортных происшествий. М., 1989:

պատասխանատու վերաբերմունքի դրսևորմամբ:

Անզգուշությամբ հանցանք կատարած անձանց բնութագրական են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են եսասիրությունը, իրենց որոշումների և գործողությունների սոցիալական հետևանքների նկատմամբ անտարբերությունը, սեփական ունակությունների և հնարավորությունների գերազնահատումը, մասնագիտական պարտականությունների նկատմամբ ձևական վերաբերմունքը: Ուստի հենց այդ պատճառով անզգուշ հանցագործությունները չի կարելի դիտարկել ընդամենը որպես բարդ իրավիճակում որոշակի թերացումների արդյունք:

Բնութագրելով անզգուշ հանցանք կատարած անձանց անձնական առանձնահատկությունները՝ ընդգծենք երկու կարևոր պահ: Առաջին հերթին, ի տարբերություն դիտավորությամբ հանցանք կատարած անձանց՝ նրանց արժեքային կողմնորոշումների խաթարումը երբեք չի հասնում ինտենսիվության այն մակարդակի, որ ունակ լինի գլոբալ կրիմինալ ուղղվածություն հաղորդելու անձին: Դրանք վերաբերում են միայն որոշ հոգեբանական շեղումների, և այդ պատճառով անզգուշությամբ հանցանք կատարած անձանց հոգեբանական կողմնորոշումը շատ արժեքների նկատմամբ համընկնում է հասարակության օրինապահ անդամների հոգեբանական կողմնորոշմանը:

Երկրորդ՝ վարքագծի բացասական տարատեսակները սովորաբար կապված են անվտանգության կանոնների պահպանման պարտականության որոշ տեսակների հետ և ունեն անհատական, լոկալ բնույթ:

Անզգուշությամբ հանցանք կատարած անձանց մեծ մասի արժեքային կողմնորոշման առանձնահատկություն է սոցիալական անպատասխանատվությունը: Իր հերթին՝ վերջինս ձևավորում է անհոգատարություն, անվստահություն: Ավելին՝ այս անձանց բնութագրական է նաև արարքի հնարավոր հետևանքները համարժեքորեն գնահատելու և կանխատեսելու անկարողությունը կամ չցանկանալը: Այստեղ էլ արտահայտվում է անզգուշությամբ հանցանք կատարողներին բնութագրական եսասիրությունը, անհատապաշտությունը, անձնական շահերի վեր դասումը հասարակության մյուս

անդամների շահերից կամ այլոց անվտանգությունից:

Վերը քննարկվող առանձնահատկությունները դրսևորվում են նրանց բնութագրական այնպիսի որակներում, ինչպիսիք են հուզական սառնությունը, թեթևամտությունը, դիսկի դիմելը, ոչ սկզբունքային լինելը, պոտենցիալ տուժողներին կարեկցելու թույլ կարողությունը:

Անզգուշությամբ հանցանք կատարած անձանց որոշակի մասին բնութագրական է ոչ համարժեք ինքնագնահատականը (կարելի է ասել՝ բարդ իրավիճակներում գործելու սեփական հնարավորությունների և ունակությունների ակնհայտ գերազնահատումը, բարձր ինքնագնահատականը) սահմանված համապատասխան կանոններին հետևելու հետ կապված մասնագիտական կամ այլ պարտականությունների կատարման առնչությամբ:

Անշուշտ, անզգուշ հանցագործությունների հիմնական մասը կապված է մասնագիտական գործունեության անվտանգության կամ կենցաղային կանոնների չիմացության (կամ՝ թերի իմացության) կամ կոնկրետ իրավիճակում դրանք կիրառելու անկարողության հետ (օրինակ՝ մասնագիտական ոչ բավարար պատրաստվածության կամ փորձի պակասի պարագայում): Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ նշված կանոնների խախտումների 55-60%-ը կատարվել են գիտակցված և ոչթե արտակարգ, այլ՝ սովորական իրավիճակներում:

Պատահական չէ, որ հաճախ են այն դեպքերը, երբ անզգուշ հանցագործություններին նախորդում են որևէ հանցավոր հետևանք առաջացրած անվտանգության համապատասխան կանոնների մի շարք խախտումներ: Անձանց ավելի քան $\frac{3}{4}$ -ը նախկինում (մինչև անզգուշությամբ հանցանք կատարելը) թույլ են տվել անվտանգության համապատասխան կանոնների մի շարք խախտումներ, որոնք բարեհաջող են ավարտվել՝ առանց ծանր, քրեական պատասխանատվություն առաջացնող հետևանքների:

Հետազոտությունները ցույց են տվել ճանապարհատրանսպորտային հանցագործությունների համար դատապարտվածների բարոյահոգեբանական առանձնահատկությունների հետևյալ պատկերը: Այսպես՝ դատապարտ-

վածների 60%-ի մեջ որպես տվյալ հանցագործության պատճառ համարվել է թեթևամտությունը, դատապարտվածների 90%-ի մեջ՝ չափից ավելի ինքնավստահությունը, 43%-ի մեջ՝ կոնկրետ իրավիճակը ճիշտ գնահատելու անկարողություն, և ակնհայտ, բացարձակ անզգուշությամբ՝ 4,4%-ի մեջ⁵: Անզգուշությամբ հանցանք կատարած անձանց մեծ մասն ունի դրական կամ չեզոք սոցիալ-բարոյական կողմնորոշում (87%), որը կարելի է դիտել որպես նրանց ոչ բարձր հանրային վտանգավորության ցուցանիշ: Դրա հետ մեկտեղ՝ կան նաև անձինք (9%), ովքեր բնութագրվում են հակասոցիալական ուղղվածությամբ: Օրինակ՝ անզգույշ հանցագործությունների այն գործերի ուսումնասիրությունը, որոնք կապված են տեխնիկայի կիրառման հետ, ցույց է տալիս, որ ճանապարհատրանսպորտային հանցագործություններ կատարած վարորդներին բնութագրական է բարձր բարոյահոգեբանական լարվածությունը՝ 15%, շփոթվածությունը՝ 35%, հոգնածությունը՝ 4%, մեղսունակությունը չբացառող հոգեկան անոմալիաները՝ 2%⁶:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացնում են անզգուշությամբ հանցանք կատարողների հետևյալ խմբերը⁷.

1) Պատահական. սրանք այն անձինք են, ովքեր հանգամանքների պատահական բերումով կամ ինչ-որ պատահական իրադրության ազդեցության տակ, կամ յուրահատուկ հոգեֆիզիոլոգիական իրավիճակում առաջին անգամ կատարում են անզգույշ հանցագործություն: Այս խմբի մեջ ներառվող անձինք բնութագրվում են դրական ուղղվածությամբ, քանի որ նախկինում չեն կատարել իրավախախտումներ: Այս խումբը կազմում է 50-60%:

2) Անկայուն. սրանք, որպես կանոն՝ առաջին անգամ են կատարում անզգույշ հանցագործություն, սակայն գիտակցաբար և ոչ հարկադրված խախտում են սահմանված կանոնները նորմալ պայմաններում: Այս անձինք բնու-

թագրվում են անկայունությամբ, որոշ դեպքերում նաև՝ բացասական ուղղվածությամբ: Այս խումբը կազմում է 30-40%:

3) Չարամիտ. սրանք այն անձինք են, ովքեր նախկինում դատապարտված են եղել հանցագործությունների համար, հաճախակի անվտանգության կանոնների խախտումներ են թույլ տվել և ենթարկվել վարչական պատասխանատվության, բնութագրվում են բացասական, և կարծում են, թե կարող են խուսափել պատասխանատվությունից: Նրանք կազմում են 10-15%:

Փաստորեն, անզգուշությամբ հանցանք կատարողների շարքում տարբերում են «պատահական», «անկայուն» և «չարամիտ» տեսակները: Որոշ իրավաբաններ առանձնացնում են նաև «առանձնապես չարամիտ» տեսակը և նշում, որ «չարամիտ» և «առանձնապես չարամիտ» տեսակները հանդիպում են շատ ավելի հազվադեպ և, որպես կանոն՝ նախորդ երկու տեսակների անձանց հետագա խելաթյուրման արդյունք են⁸:

Միննույն ժամանակ՝ կարելի է առանձնացնել նաև նշված անձանց արժեքային կողմնորոշումների և այլ հոգեբանական հատկությունների ոլորտին վերաբերող մի շարք այլ առանձնահատկություններ: Անզգուշությամբ հանցանք կատարողների բարոյահոգեբանական հատկությունների շեղումները, որպես կանոն, լրկալ բնույթ ունեն, այլ կերպ ասած՝ դրսևորվում են այն իրավիճակներում, երբ թույլ են տրվում անվտանգության, նախազգուշական համապատասխան կանոնների խախտումները: Ընդհանուր առմամբ՝ նշված անձինք հիմնականում դրական են բնութագրվում թե՛ կենցաղում և թե՛ մասնագիտական գործունեության ընթացքում: Մինչև անզգուշությամբ հանցանք կատարելը քննարկվող կանոնները պարբերաբար խախտողների մեջ ձևավորվում է իրենց պարտականությունների նկատմամբ անպատասխանատու և արհամարհական վերաբերմունք, ինչն

⁵ Տե՛ս Бурлаков В.Н. Криминология: Учебник для вузов., СПб.: Санкт-Петербургский Государственный Университет, Питер, 2003, էջ 296:

⁶ Տե՛ս Бурлаков В.Н. Криминология: Учебник для вузов., СПб.: Санкт-Петербургский Государственный Университет, Питер, 2003, էջ 397:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 398:

⁸ Տե՛ս, օրինակ՝ Օհանյան Ա.Վ. Անզգույշ հանցավորությունը և դրա կանխումը Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն ի. գ. թ. աստիճանի հայցման, էջ 36:

էլ հետագայում հանգեցնում է անզգուշությամբ հանցավոր արարքներ կատարելուն:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում անզգուշությամբ հանցանք կատարողների անձը բնութագրող առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ, չնայած այս հանցագործությունների պատճառական մեխանիզմում էական դեր են կատարում իրադրությունը և տեխնիկան, կազմակերպական, տեխնիկական երևույթները, սակայն հիմնական դերն անձինն է: Անձի որոշակի առանձնահատկություններն են, որ պատճառի դեր են կատարում քննարկ-

վող հանցագործություններում: Ուստի անզգուշությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման արդյունավետությունը կախված է ոչ միայն կազմակերպական, տեխնիկական միջոցառումներից, այլև առավել վտանգի աղբյուրների շահագործմանը մասնակցող անձանց հետ իրականացվող աշխատանքներից. մասնագիտական վերապատրաստում, կարգապահության ամրապնդում և դրա մակարդակի բարձրացում, անվտանգության տարրական կանոններին ծանոթացում, բարոյահոգեբանական միջոցառումներ և այլն:



ԳՈՒՐԳԵՆ ՔՈԹԱՆՋՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
Փրիորիթի իրավաբանական գրասենյակի տնօրեն

ՀՈԳԵՔՐՈԺԱԿԱՆ ՀԻՎԱՆՂԱՆՈՑՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՍ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ

«Հ քրեական օրենսգրքի հոդված 134-ը պատասխանատվություն է սահմանում հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելու կամ պահելու համար: Սույն հոդվածով նախատեսված արարքն այն եզակի հանցակազմերից է, որի հետ կապված վիճելի հարցերը վերաբերում են սուբյեկտին: Իսկ հանցակազմի մյուս տարրերի առումով, որպես կանոն, քրեագետները միակարծիք են: Այդ կարծիքները հանգում են հետևյալին.

Քննարկվող հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը մարդու ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Տվյալ հանցագործության լրացուցիչ անմիջական օբյեկտների դերում որոշ դեպքերում կարող են հանդես գալ մարդու առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը¹: Օբյեկտիվ կողմից այս արարքը բնութագրվում է ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, որոնք դրսևորվում են անձին հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելով կամ պահելով²: Ընդ որում՝ մեր կարծիքով՝ անձին հոգեբուժական հիվանդանոցում հնարավոր է տեղավորել՝ միայն որոշակի գործողություններ կատարելով, իսկ դիսպոզիցիայի երկրորդ մասը՝ հոգեբուժական հիվանդանոցում պահելը, կարող է իրականացվել ինչպես գործողությամբ (օրինակ՝ իրականությանը չհամապատասխանող եզրակացություն կամ ախտորոշում տալով), այնպես էլ՝ անգործությամբ (օրինակ՝ առողջացած պացիենտի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր չտրամադրելով): Հանցագործության

սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Անձը գիտակցում է, որ առանց օրինական հիմքերի տուժողին տեղավորում է հոգեբուժական հիվանդանոցում և ցանկանում է դա: Շարժառիթները կարող են տարաբնույթ լինեն՝ վրեժ, խանդ, կարեկցանք, շահ և այլն³:

Իսկ ինչ վերաբերում է ուսումնասիրվող հանցագործության սուբյեկտին՝ այս հարցում, ինչպես արդեն նշեցինք, իրավաբանական գրականության մեջ միասնական ընկալում չկա: Հեղինակների մի մասը նշում է, որ քննարկվող հանցակազմի սուբյեկտն ընդհանուր է՝ հավելելով, որ այս հանցագործությունը հիմնականում կատարվում է այնպիսի անձանց կողմից, որոնց մասնագիտական պարտականությունների մեջ ներառվում է մարդկանց հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու որոշման կայացումը (հոսպիտալացված անձին բուժող բժիշկը, անձին անհետաձգելի բժշկական օգնություն ցույց տվող բժիշկը)⁴: Իսկ, օրինակ՝ Ա.Ս. Գորելիկը համարում է, որ քննարկվող արարքի սուբյեկտ կարող են լինել միայն հոգեբուժական հաստատության աշխատակիցները, և այն հարցը, թե հոդվածի դր մասով պետք է որակվի արարքը, կախված է հանցավորի իրականացրած ֆունկցիաներից: Զուտ մասնագիտական ֆունկցիաներ իրականացնելիս (հետազոտություն, ախտորոշում) և դրա ընթացքում ոչ իրավաչափ գործողություններ կատարելու հետևանքով անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում հետազոտվող հոդվածի առաջին մասով: Իսկ կառավարչական (հոգեբուժական բա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: ԵՊՀ իրատարակչություն, Երևան, 2012, էջ 214:
² Տե՛ս նույն տեղը, էջ 215:
³ Տե՛ս Уголовное право России, особенная часть. Под ред. Ф.Р. Сундурова, М. В.Талан. Статут, Москва, 2012, էջ 96:
⁴ Տե՛ս Учебно-практический комментарий к Уголовному кодексу Российской Федерации / под ред. А.Э. Жалинского. М., 2006, էջ 385.

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

ժանտունքի վարիչի, բժշկական հանձնաժողովի նախագահի, բուժհաստատության ղեկավարի) գործառույթների իրականացման պարագայում արարքը անհրաժեշտ է որակել հոդվածի երկրորդ մասով⁵: Բացի այս՝ իրավաբանական գրականության մեջ առկա է նաև այն մոտեցումը, որի համաձայն՝ անհատ քաղաքացիները կարող են հանդես գալ միայն այս հանցագործության օժանդակողի դերում⁶: Մեր կարծիքով՝ արտահայտված տեսակետներն արժանի են քննադատության: Այսպես՝ քննարկվող հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայի վերլուծությունը որևէ հիմք չի տալիս եզրակացնելու, որ այդ արարքի սուբյեկտը հատուկ է: Ընդհակառակն՝ սույն հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետը հոդվածի 1-ին մասից սահմանազատվում է՝ հենց սուբյեկտային չափանիշներից ելնելով, որի դեպքում առաջին մասի սուբյեկտն ընդհանուր է, իսկ 2-ինը՝ հատուկ: Օրենքի տառացի մեկնաբանությունից չբխող և արհեստական է թվում նաև սույն հանցանքի սուբյեկտի տարանջատումը՝ ըստ իրականացվող ֆունկցիաների բնույթի: Հարցն այն է, որ հոդվածի 2-րդ մասում խոսքը պաշտոնեական դիրքն օգտագործելու և ոչ թե արարքը պաշտոնատար անձի կողմից կատարելու մասին է, իսկ 1-ին մասում՝ սուբյեկտի հատուկ լինելու մասին, ինչպես նշել ենք, ընդհանրապես որևէ վերապահում չկա: Այսինքն՝ անձը մեկ այլ անձի հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելիս պաշտոնեական դիրքն օգտագործելու հնարավորություն ունի ոչ միայն այն դեպքերում, երբ ինքն օժտված է կառավարչական լիազորություններով, այլ նաև այն դեպքերում, երբ ինքն այդպիսիք չունի (օրինակ՝ բժիշկը կամ հերթապահ բժիշկը): Փաստորեն, պաշտոնեական դիրք բառակապակցությունը հոդվածում օգտագործված է լայն իմաստով: Եվ վերջապես՝ բացարձակ անհիմն է թվում այն մոտեցումը, որի համաձայն՝ անհատ քաղաքացիները կարող են հանդիսանալ միայն այս հանցագործության օժանդակողներ: Մոտեցումն անհիմն է այնքանով, որ պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ քննարկվող արարքը կարող է կատարվել բացառապես ֆիզիկական ան-

ձանց կողմից, օրինակ՝ երբ որևէ անձ իր հարազատին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու համար կեղծ տեղեկանքներ կամ այլ բժշկական փաստաթղթեր է ներկայացնում հոգեբուժական հաստատություն կամ ենթադրյալ հիվանդի մասին ներկայացնում է ոչ հավաստի տեղեկություններ: Այս պարագայում բժիշկները որևէ պատասխանատվության չեն ենթարկվի կամ առավելագույնը կկրեն կարգապահական պատասխանատվություն՝ իրենց մասնագիտական պարտականությունները բարեխիղճ կերպով չկատարելու համար: Ամեն դեպքում՝ նրանց արարքը դիտարկվող հոդվածով որակվել չի կարող, քանի որ այս հանցատեսակի կատարումը հնարավոր է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ այս դեպքում բժիշկների պարագայում սուբյեկտիվ կողմը, հետևաբար նաև՝ պատասխանատվությունը բացակայում է: Եվ ստացվում է մի տարօրինակ իրավիճակ, որ հանցանքը կատարվում է միայն օժանդակողների կողմից՝ առանց կատարողի, ինչը, բնականաբար, անհնար է: Միևնույն ժամանակ՝ մենք կարծում ենք, որ քրեական օրենսգրքի 2-րդ մասի 2-րդ կետը հաջող չի ձևակերպված, քանի որ նման ձևակերպման պարագայում ստացվում է, որ հոդվածի 1-ին մասով պատասխանատվության կարող են ենթարկվել միայն անհատ քաղաքացիները, իսկ հոդվածի 2-րդ մասով՝ հոգեբուժական հիվանդանոցի բոլոր բժիշկները՝ իրենց պաշտոնից և կառավարչական լիազորությունների առկայությունից անկախ: Նման վիճակը դժվար է արդարացի համարել, որովհետև այս դեպքում հոդվածի 1-ին մասը սուբյեկտի տեսանկյունից անտեղի նեղացված է, մինչդեռ երկրորդ մասը չափազանց լայն է: Կարծում ենք՝ խնդրի կարգավորման տեսանկյունից նպատակահարմար կլիներ հոդված 134-ի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել այսպես. նույն արարքը, որը կատարվել է պաշտոնատար անձի կողմից՝ իր լիազորություններն օգտագործելով: Դիսպոզիցիայի այսպիսի սահմանմամբ՝ որպես քննարկվող հոդվածի 1-ին մասի սուբյեկտ կդիտվեն անհատ քաղաքացիները և հոգեբուժական հաստատությունների այն աշխատողները, ովքեր

⁵ См Полный курс уголовного права: в 5 т. / под ред. А.И. Коробеева. Т. 2. СПб., 2008, էջ 442:

⁶ См Уголовное право Российской Федерации. Особенная часть: учебник / под ред. Л.В. Иногамовой-Хегай, А.И. Рапова, А.И. Чучаева. М., 2006. էջ 91:

օժտված չեն կառավարչական և վարչահրամայական ֆունկցիաներով, իսկ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվություն կկրեն այդպիսի գործառույթներով օժտված աշխատակիցները:

Դիտարկվող արարքի հետ կապված հետաքրքրություն հարուցող հաջորդ հարցն այս հանցագործությունն այլ հանցագործությունների հետ համակցությամբ որակելն է: Մասնավորապես՝ որոշակի դժվարություններ կարող է առաջացնել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 352-ով նախատեսված արարքը՝ ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը, հոդված 134-ի հետ համակցությամբ որակելը: Այսինքն՝ դատավորի կողմից կայացված ակտով անձին հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելու դեպքում տվյալ դատավորը պատասխանատվության պետք է ենթարկվի քրեական օրենսգրքի հոդված 134-ով, հոդված 352-ով, թե՛ դրանց համակցությամբ: Տվյալ խնդրի կարգավորման համար սկզբունքային նշանակություն ունի այն հարցը, թե արդյոք դատավորը կարող է հանդես գալ որպես հոդված 134-ով նախատեսված արարքի սուբյեկտ: Կարծում ենք՝ դատավորը չի կարող լինել հոդված 134-ի սուբյեկտ, և նա պետք է պատասխանատվություն կրի միայն հոդված 352-ով: Այս մոտեցումը բխում է քրեական իրավունքի տեսության մեջ առկա քրեաիրավական նորմերի մրցակցության ինստիտուտի պահանջներից: Այսպես՝ տեսության մեջ ընդունված է համարել, որ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունն առկա է այն դեպքում, երբ ընդհանուր հանցակազմից առանձնացվում է դրա մասնավոր, հատուկ հանցակազմը: Հատուկ հանցակազմն իր հատկանիշներով համընկնում է ընդհանուր հանցակազմի հատկանիշներին, բայց տարբերվում է վերջինից որևէ մեկ հատկանիշի առանձնահատկությամբ (սուբյեկտի, օբյեկտի և այլն), որի ուժով էլ առանձնացվում է որպես ինքնուրույն հանցակազմ: Ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության դեպքում նախապատվությունը տրվում է հատուկ նորմին, և արարքը որակվում է միայն հատուկ նորմով⁷: Ներկայացված օրինակում այդ հանցակազմերը միմյանցից տարբերվում են սուբյեկտով. հոդ-

ված 352-ում սուբյեկտ կարող է լինել միայն դատավորը, թեև որոշակի տարբերություն կա նաև ուսումնասիրվող հանցակազմերի օբյեկտի հարցում, սակայն այդ տարբերությունը ուղղակիորեն բխում է սուբյեկտից: Մասնավորապես՝ հոդված 134-ի հիմնական անմիջական օբյեկտն անձի ազատությունն է, մինչդեռ հոդված 352-ում անձի ազատությունը հանցակազմի լրացուցիչ օբյեկտի դերում է, իսկ հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտն արդարադատության իրականացման հետ կապված բնականոն գործունեությունն է: Միևնույն ժամանակ՝ կարծում ենք, որ հոդված 134-ն անհրաժեշտ է համակցությամբ որակել կաշառք ստանալու (հոդված 311), կաշառք տալու (հոդված 312), փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու (հոդված 325) հանցակազմերի հետ: Թեև հիշատակված հանցակազմերը հաճախ կարող են հանդես գալ որպես հոդված 134-ով նախատեսված արարքի կատարման միջոց, այդուհանդերձ՝ դրանք դուրս են գալիս վերջինի սահմաններից, ինքնուրույն հանցակազմեր են՝ առաջացնելով առանձին քրեաիրավական գնահատման անհրաժեշտություն: Եվ այս պարագայում քրեաիրավական նորմերի մրցակցության մասին խոսք լինել չի կարող:

Ավարտելով հոդվածի շարադրանքը՝ հարկ ենք համարում հավելել, որ, մեր գնահատմամբ, հոդված 134-ում՝ որպես ծանրացնող հանգամանքներ, անհրաժեշտ է ավելացնել հետևյալները՝ նույն արարքի կատարումն անչափահասի և ակնհայտ հղի կնոջ նկատմամբ: Այդ հանգամանքներն էականորեն բարձրացնում են կատարվող արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Առաջին դեպքում՝ կապված իր ֆիզիկական և հոգեբանական զարգացման առանձնահատկություններից՝ երեխայի համար զգալիորեն բարդանում է իր շահերի պաշտպանությունը, իսկ երկրորդում՝ հանցավորը ոտնձգում է ոչ միայն տուժողի ազատության և առողջության դեմ, այլ նաև վտանգում է պտղի հետագա զարգացմանը:

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2012, էջ 308:

ԴԱԿԻԹ ՕՀԱՆՅԱՆ

«Նստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱՔԱՆՄԱՆ ՕՐՅԵԿՏԻՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Եթե պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ մոտեցման հիմքը կամքի ինքնավարության սկզբունքն է, ապա օբյեկտիվ մոտեցման հիմքը **վստահության պաշտպանության սկզբունքն** է՝ ինչպես անմիջականորեն պայմանագրի կողմերի, այնպես էլ՝ երրորդ անձանց:

Տեսական մակարդակով այս սկզբունքը մշակվել է գերմանացի ցիվիլիստների կողմից՝ գործարքում կամքի և կամարտահայտության հայտնի քննարկումների շրջանակներում: Այսպես՝ պրոֆեսոր Կ. Լարենցը մեկնաբանման սուբյեկտիվ և օբյեկտիվ մեթոդների դուալիզմը բացատրում է կամքի և կամարտահայտության դուալիզմով: Հիմնական հարցը քննարկվող դիսկուրսում այն է, թե ինչին տալ նախապատվություն մեկնաբանելիս՝ իրական կամքի բացահայտմանը (սուբյեկտիվ տեսություն), թե՛ պայմանագրի նշանակության հաստատման արտաքին նշանների միջոցով (օբյեկտիվ տեսություն)²:

Մեկնաբանման օբյեկտիվ տեսությունն ուսումնասիրելիս պետք է ուշադրություն դարձնել, որ պայմանագրի հասկացության ելակետը համարվում է ոչ թե կողմերի համաձայնությունը՝ հիմնված կամքի ինքնավարության սկզբունքի վրա, ինչպես դասական մոդելում է, այլ՝ պայմանագրի հայեցակարգը որպես անհատականությունների հաղորդակցման ակտ: Սրա հետ կապված՝ պրոֆեսոր Ռ. Ցիմերմանը նշում է. «Կամարտահայտությունը որպես անհատական ինքնավարության էմանացիա³ գոյություն

չունի սոցիալական վակուումում, այլ հանգեցնում է հիմնավոր սպասումների (reasonable expectations), մյուս անձանց կողմից, ովքեր պետք է արդարացված լինեն, և իր ազդեցությունն է թողնում անհատականության վրա հիմնված պայմանագրային տեսության վրա, որը պայմանագիրը դիտարկում է որպես մարդկային վարքի սոցիալական հետևանք: Այս տեսության համաձայն՝ առաջին պլան է մղվում կողմի վստահության (reliance) փաստը մյուս կողմի արած հայտարարության նկատմամբ»⁴:

Այս հողի վրա ձևավորվել է պայմանագրի ինքնուրույն տեսություն՝ **պայմանագրի որպես խոստման տեսություն (reliance theory)**⁵: Պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը (objective interpretation, normative Auslegung) նախատեսված է պաշտպանելու առաջին հերթին կողմի ողջամիտ, հիմնավոր վստահությունը (justifiable reliance) մյուս կողմի հայտարարության բովանդակության հետ:

Ամենևին չթերագնահատելով հասցեատեր կողմի շահերի պաշտպանության տեսանկյունից սուբյեկտիվ տեսության դերակատարումը՝ կարծում ենք, որ սուբյեկտիվ և օբյեկտիվ մոտեցումների միջև տարբերությունը հսկայական է: Եթե սուբյեկտիվ տեսությունը դատարաններին հնարավորություն է տալիս հասկանալու դիմորդ կողմի իրական կամքը հասցեատիրոջ տեսանկյունից, ապա օբյեկտիվ տեսության կիրառման դեպքում պետք է ելնել վիճելի պայմանի այնպիսի հասկացողությունից, որին տիրապետում է բանական անձը: Այլ խոսքե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

¹ Sten Larenz K, Wolf M.– Allgemeiner Teil des Bürgerlichen Rechts, München 2004, էջ 32:
² Տեն Օհանյան Ռ., Կամքը և կամարտահայտությունը պայմանագրի մեկնաբանման համատեքստում: «Պետություն և Իրավունք», թիվ 2 (80), 2018թ., էջ 54:
³ Emanatio – լատ.՝ «հոսք», «տարածում»: Այս եզրույթը հատկապես կիրառվում է ֆիզիկայում և նշանակում է ռադիոակտիվ նյութերի ճառագայթների տարածում, այսինքն՝ այն, ինչի վեր է ածվում նյութն այդ պրոցեսի հետևանքով: Կարծում ենք՝ այս եզրույթով պրոֆեսորը փորձել է ընդգծել այն, որ կամարտահայտությունը, որպես այդպիսին, ինքնանպատակ չէ և հանգեցնում է որոշակի արդյունքների (ընդ որում՝ սպասվելիք), որոնց ասպիրորի միտված է եղել պրոցեսը:
⁴ Տեն Zimmerman R. The Law of Obligations, Roman Foundations of the Civilian Tradition, NY, 1996, էջ 636:
⁵ Տեն Grammond S. Reasonable Expectations and the Interpretation of Contracts Across Legal Traditions // Canadian Business Law Journal, 2010:

րով՝ առաջինի դեպքում պետք է պատասխանել այն հարցին, թե ինչպե՞ս է հասկացել դիմորդ կողմի կամքն ինքնին հասցեատեր կողմը, իսկ երկրորդ մոտեցման դեպքում պետք է հաստատել, թե ինչպիսին կլինեն բանական անձի հասկացողությունը հասցեատիրոջ տեղում:

Գերմանական դոկտրինում ընդունված է խոսել բանական կամքի մասին, որը, ի տարբերություն էմպիրիկ կամքի, վերաբերում է ոչ թե իրականության մեջ առկա փաստերին, այլ ինտելեկտուալ վերացարկման արդյունք է՝ շրջանառության և կոնկրետ գործարքի պայմաններին⁶ մոտեցված: Բանական կամքը, որի հաստատմանն ուղղված է մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը, ընդգրկում է պայմանագրի պայմանի առավել հավանական նշանակությունը՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպե՞ս բանական անձը (միջին վիճակագրական կոնտրազենտը) կհասկանար նրա նշանակությունը:

Չնայած եվրոպական կոդիֆիկացիաներում դրված է պայմանագրի դասական մոդելը, իսկ մեկնաբանման գերակշռող կանոնները հիմնված են սուբյեկտիվ մոտեցման վրա, այնուամենայնիվ, հասցեատիրոջ և ամբողջ շրջանառության շահերը պահպանելու անհրաժեշտությունը չէր կարող դուրս մնալ դոկտրինի և, հատկապես՝ պրակտիկայի տեսանկյունից:

Այսպես՝ Ֆրանսիայի դատարանները, ձևավորված ավանդույթի համաձայն, հղում են կատարում Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի (**Code civil**) 1156-րդ հոդվածին, սակայն պրակտիկայում մեծ մասամբ հետազոտվում է օբյեկտիվ փաստերը հաստատելու համար կողմի «սուբյեկտիվ» կամքը: Ինչպես նշում է պրոֆեսոր Ս. Վոգենաուերը՝ ֆրանսիական մոտեցումը սուբյեկտիվ է՝ գաղափարախոսության և հռետորաբանության, այլ ոչ թե բովանդակային տեսանկյունից⁷:

Գերմանիայում կամարտահայտության մեկնաբանման սուբյեկտիվ մոտեցումը, ամրագրված քաղաքացիական կանոնագրքի (**Bürgerliches Gesetzbuch, BGB**) 133-րդ հոդվածում, լրացվեց պահանջով, որն ամրագրվեց 157-րդ

հոդվածում: Վերջինիս համաձայն՝ պայմանագիրը պետք է մեկնաբանել բարեխղճորեն՝ հաշվի առնելով քաղաքացիական շրջանառության սովորույթները (**Treu und Glauben**): Պրոֆեսոր Ս. Վոգենաուերը նշում է. «Այսօր դատարանները և գիտնականները մեկնաբանելիս հղում են կատարում 133-րդ և 157-րդ հոդվածներին միաժամանակ, ինչի ելակետն է համարվում այն, որ պայմանագրերը պետք է մեկնաբանել այն նշանակությանը համաձայն, որը կունենար կողմի տեղում հայտնված բանական անձը: Որպես արդյունք՝ կողմերից ոչ մեկը չի կարող հղում կատարել, որ հասկացել է պայմանագիրը որոշակի իմաստով, եթե այդ իմաստը տարբերվում է բանական անձի հասկացողությունից, որը հաստատվում է պայմանագրի վերլուծությունից և համատեքստից»⁸:

Բանական անձի կառուցակարգը մերձեցնում է գերմանական մոտեցումն ընդհանուր իրավունքի երկրների դոկտրինին, որտեղ պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ մոտեցումը առավել զարգացած է: Անգլիական դատարանները լայնորեն կիրառում են բանական անձի կառուցակարգը, որ հաստատեն, թե ինչպիսին կարող էին լինել պայմանադիր կողմերի մտադրությունները: Ինչպես նշված էր *Rear-don-Smith Line Ltd v. Hansen-Tange* (1976թ.) դատական գործի որոշման մեջ՝ երբ խոսում են պայմանագրի կողմերի մտադրությունների մասին, խոսում են օբյեկտիվորեն, կողմերը ինքնուրույն չեն կարող ներկայացնել ապացույցներ առ այն, թե ինչպիսին էին իրենց մտադրությունները, և հաստատման ենթակա է բանական անձի մտադրությունը, եթե նա հայտնված լինե՞ր կողմերի տեղում⁹:

Պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսության կարևոր հանգամանքներ են հիմնավորվել *Investors Compensation Scheme* գործի շրջանակներում, որը քննարկվել է Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի կողմից 1997 թ.: Դրա համաձայն՝ մեկնաբանումն այնպիսի նշանակության հաստատում է, որը փաստաթուղթը հաղորդում է բանական անձին, քանզի վեր-

⁶ Stü Lüderitz A. Auslegung von Rechtsgeschäften. Köln,1966. էջ 342:

⁷ Stü Vogenauer S. Interpretation of Contracts: Concluding Comparative Observations. էջ 4:

⁸ Stü Vogenauer S. նշվ. աշխ. էջ 5:

⁹ Stü Lewison K. The interpretation of contracts, L. 2011, էջ 25:

ջինս տիրապետում է բոլոր ելակետային գիտելիքներին, որոնք հասանելի էին կողմերին այն իրավիճակում, որում նրանք կնքել են պայմանագիրը¹⁰:

Օբյեկտիվ մոտեցումը լայնորեն կիրառվում է նաև միջազգային փաստաթղթերում: Այսպես՝ ապրանքների միջազգային առուվաճառքի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նախորդ կետը (սուբյեկտիվ) կիրառելի չէ, ապա կողմի հայտարարությունները և այլ վարքագիծը մեկնաբանվում են այն հասկացողությանը համապատասխան, որը կունենար բանական անձը՝ գործող այն կարգավիճակում, ինչ որ մյուս կողմը համանման հարաբերություններում¹¹:

Մասնավոր իրավունքի ունիֆիկացիայի Միջազգային ինստիտուտի (UNIDROIT) սկզբունքների¹² (2016 թ-ի խմբագրությամբ) 4.1 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե կողմերի ընդհանուր մտադրությունը հնարավոր չէ հաստատել, ապա պայմանագիրը պետք է մեկնաբանվի այն նշանակությանը համապատասխան, որը կողմերին համանման բանական անձինք կտային այդպիսի հանգամանքներում:

Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների (The Principles of European Contract Law)¹³ 5:101 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե կողմերի մտադրությունները հնարավոր չէ հաստատել սուբյեկտիվ չափանիշներով (1-ին և 2-րդ կետերի կիրառմամբ), ապա պայմանագիրը մեկնաբանվում է այն նշանակությանը համապատասխան, որը դրան կտային կողմերին նման բանական անձինք համանման հանգամանքներում:

Համանման կարգավորում կա նաև եվրոպական քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր մոդելի նախագծի (*The Draft Common Frame of Reference*)¹⁴ 8:101 հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ պայմանագիրը մեկնաբանվում է բանական անձի հասկացողությանը համապատասխան, եթե հարցը ծագել է այն

անձի հետ, ով, չհամարվելով պայմանագրի կողմ, ողջամտորեն և բարեխղճորեն հենվում էր պայմանագրի ակնհայտ նշանակության վրա:

Վերոնշյալ նորմատիվ կարգավորումներից հետևում է, որ օբյեկտիվ տեսությունը հիմնականում խաղում է օժանդակ դեր սուբյեկտիվ տեսության համար: Օբյեկտիվ մոտեցումը պատասխանում է այն հարցին, թե ինչպիսի՞ հասկացողություն կունենար բանական անձը՝ գործող նույն կարգավիճակում, ինչ որ մյուս կողմը համանման հանգամանքներում: Գրեթե բոլոր իրավակարգավորումներում մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը հղում է կատարում բանական անձին, ուստի պետք է հստակեցնել այդ կատեգորիան:

Բանական անձի (*reasonable man*) առավել տարածված կառուցակարգ է առկա անգլիական իրավունքում, որտեղ դատարանները պայմանագրային վեճերով որոշումներ կայացնելիս հղում են կատարում, թե ինչպե՞ս սովորական (միջին վիճակագրական) կոնտրագենտը կվարվեր այս կամ այն վիճելի իրավիճակում: Հատկանշական է, որպեսզի ընդգծվի այն փաստը, որ բանական անձը շրջանառության միջին վիճակագրական մասնակիցն է, ընդհանուր իրավունքի դոկտրինում այդ հասկացությունը բնութագրվում է հետևյալ եզրույթով՝ մարդն ավտոբուսից (*the man of the bus*)¹⁵:

Այսպես՝ Ի. Ա. Պոկրովսկու աշխատություններում մինչհեղափոխական օրենսդրության հետ կապված կան հետևյալ մտքերը. եթե մենք ընդհանուր հայացքով նայենք քաղաքացիաիրավական նորմերի մեխանիզմին, ապա կնկատենք, որ դրանք բոլորը հանգում են ինչ-որ վերացական մարդու ենթադրությանը, իր տեսակով՝ «**քաղաքացիական մարդու**»: Դա հենց այն միջին ֆիգուրն է, որը պահանջմունքների և որակների էմպիրիկ ամփոփում (մարմնավորում) է՝ բնութագրական միջին մարդուն տվյալ հասարակությունում և տվյալ ժամանակահատվածում: Հռոմայեցիների համար

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս <https://clck.ru/Hxjip>

¹² Տե՛ս <https://clck.ru/G7ADX>

¹³ Տե՛ս <https://clck.ru/Hxjn2>

¹⁴ Principles, Definitions and Model Rules of European Private Law. Draft Common Frame of Reference, տե՛ս (<https://clck.ru/HxJo6>):

¹⁵ Տե՛ս Martin E. A. Oxford Dictionary of Law. Oxford, 1997. էջ 382:

դա եղել է այսպես կոչված *bonus paterfamilias*-ը, մեզանում հատուկ անուն չունի, բայց և մեր աչքերի առաջ կա այդ վերացական ֆիգուրը, երբ մենք ստեղծում ենք այս կամ այն նորմը, երբ մտածում ենք պահանջմունքների մասին, երբ որոշում ենք մեղքի առկայության հարցը և այլն¹⁶:

Մեկնաբանման նպատակների համար բանական մարդու հեռանկարը վիճելի պայմանի գնահատումն է շրջանառության հասարակ մասնակցի տեսանկյունից, ցանկացած երրորդ անձի՝ չչահագրգռված վեճի ելքով, բավարար փորձ և գիտելիք չունեցող, որպեսզի մեկնաբանի նորմը առավել հավանական ձևով: Պետք է ասել, որ բանական մարդու ֆիկցիայի կիրառումն է, դա փաստի դատական գնահատումն է՝ հաշվի առնելով ողջամտության սկզբունքը, որը լավ հայտնի է բոլոր իրավալարագերում¹⁷:

Անգլիական իրավունքում վիճելի պայմանի բանական մարդու կողմից հասկանալու հայեցակարգն էականորեն համընկնում է գերմանական իրավունքում կամարտահայտության հասցեատիրոջ օբյեկտիվ հորիզոնի (*objektiver Empfängerhorizont*) հետ¹⁸:

Պրակտիկայում գերմանական դատարանները, հղում կատարելով Կանոնագրքի 157-րդ հոդվածին, ձևավորել են պահանջ, որի համաձայն՝ կամարտահայտությունը պետք է հասկանալ այնպես, ինչպես կհասկանար կամարտահայտության հասցեատերը՝ հաշվի առնելով բարեխղճության պահանջը և ուշադրություն դարձնելով քաղաքացիական շրջանառության սովորույթներին¹⁹: Միևնույն ժամանակ՝ գերմանական գրականության մեջ ընդգծվում է, որ հասցեատիրոջ հասկացողության հորիզոնը պետք է ուսումնասիրել օբյեկտիվորեն, այսինքն՝ կրկին բանական անձի տեսանկյունից: Այսպես, պրոֆեսոր Ա. Լյուդերիցի համաձայն՝

հասկացողության օբյեկտիվ հորիզոնը գիտակցաբար, բարեխիղճ և իրավաչափ մտածող բանական մարդու մասշտաբն է: Հենց վիճելի պայմանի նշանակությունը հասկանալու և եզրահանգում անելու ունակությունն է պայմանավորում հասկացողության օբյեկտիվ հորիզոնը²⁰:

Ներկայացնենք մեկ օրինակ. ռեստորանի հաճախորդը պատվեր է կատարում հին կերակրացանկի համաձայն, որը գործել է նախկինում և թողնվել է սեղանին այլ հաճախորդի կողմից: Կարելի է արդյոք մեկնաբանել հին գներ պարունակող՝ սեղանին թողնված կերակրացանկը որպես օֆերտա: Արդյոք պետք է այսպիսի հանգամանքներում հաշվի առնել ռեստորանի տիրոջ կամքը, ով կարող էր մեկնաբանել պատվերը որպես պայմանագրի կնքման պահին գործող գներով արված օֆերտա²¹:

Եթե չտրվենք այն հարցի ուսումնասիրմանը, թե կարո՞ղ էր արդյոք ռեստորանի տերը կանխել հին հաճախորդի կողմից թողնված կերակրացանկը (ենթադրենք՝ կարող էր), ապա ռեստորանի միջին վիճակագրական հաճախորդը (բանական անձ) կարող էր ենթադրել, թե սեղանի վրա դրված կերակրացանկի գները պատվեր կատարելու պահին համարվում էին իրական: Իսկ ինչ վերաբերում է արված պատվերը ռեստորանի տիրոջ կողմից հասկանալուն՝ կրկին պատվերի կատարման հանգամանքների համաձայն՝ պետք է էլնել այն հանգամանքից, որ տիրոջ համար ևս ակնհայտ էր, որ սեղանին թողնված կերակրացանկը ցանկացած հաճախորդի կողմից կընկալվի որպես իրական գները պարունակող օֆերտա:

Վիճելի պայմանի նշանակությունը հասկանալու համար կողմերի ողջամիտ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությանը մեծ ուշադրություն է դարձվում գերմանական դոկտրինում. հասցեատերը պետք է օգտագործի բոլոր

¹⁶ Տե՛ս Покровский И.А. Абстрактный и конкретный человек перед лицом гражданского права // Вестник гражданского права. №4, 1913. էջ 32:

¹⁷ Տե՛ս Гражданское право: В 4 т. Том 1: Общая часть /Под общ. ред. Е.А.Суханова. М. 2005. էջ 32 (автор главы – Суханов Е.А.):

¹⁸ Տե՛ս Lautenschlager F. Aktuelle Probleme bei der Auslegung von Willenerklärungen und Parteiverhalten bei Verträgen im Anwendungsbereich der CISG – Der objektive Dritte, späteres Parteiverhalten, Sprachprobleme und Allgemeine Geschäftsbedingungen. 2006. էջ 2:

¹⁹ Տե՛ս Vogenauer S. նշվ. աշխ. էջ 5:

²⁰ Տե՛ս Lüderitz A. նշվ. աշխ. էջ 281:

²¹ Տե՛ս Larenz K., Wolf M. նշվ. աշխ. էջ 58:

հասանելի ողջամիտ միջոցները, որպեսզի եզրակացություն կայացնի կամքի մասին: Սակայն, մյուս կողմից՝ հայտարարողը ևս պետք է գիտակցի իր վարքագծի հետևանքները, իր բառերի համոզվածությունը կամ հիմնավորվածությունը²²:

Մեկ այլ գործով՝ ոսկյա զարդերի ապահովագրության պայմանագրով վիճելի էր այն պայմանը, որ ապահովագրական պատահարներին վերաբերում է ոսկյա զարդերը գողանալը՝ **թաքնված ներթափանցման** միջոցով, այն տարածքից, որտեղ պահվում է: Գործի փաստերի համաձայն՝ Ա-ն, ձևանալով որպես հեռախոսի վերանորոգման մասնագետ, մտնում է տիկին Բ-ի տուն և, շեղելով վերջինիս ուշադրությունը՝ գողանում է ապահովագրված ապրանքները: Ապահովագրական ընկերությունը հրաժարվեց հատուցում տալուց՝ հղում կատարելով, որ ապահովագրված ապրանքը հափշտակվել է քողարկված ներթափանցումից տարբերվող եղանակով: Լուծելով գործը հօգուտ Բ-ի՝ դատարանը եկավ այն հետևության, որ այդ պայմանի ողջամիտ մեկնաբանումը թույլ է տալիս հաստատել, որ խաբեության հետևանքով կատարված ներթափանցումը նույնպես քողարկված ներթափանցման ձև է²³:

Ապահովագրության պայմանագրի վիճելի պայմանը պետք է նայել բանական մարդու տեսանկյունից: Հասարակ կոնտրագենտի համար քողարկված ներթափանցում ձևակերպումից ակնհայտորեն հետևում է, որ ապահովագրության պայմանագիրը չի ընդգրկում բացահայտ հափշտակության դեպքերը (օրինակ՝ կողոպուտ): Մնացած դեպքերը, այդ թվում նաև՝ խաբեության կամ վստահության չարաշահման հետևանքով ներթափանցումը, քողարկված ներթափանցման տեսակներ են, որոնք ապահովագրվածը կանխել չէր կարող:

Դժվար չէ նկատել, որ բանական մարդը, ում օբյեկտիվ հասկացողության հորիզոնը դատարանը պետք է հաստատի, տեղավորվում է կողմի դերում, և նրա հասկացողության մեջ են ներառվում այն հանգամանքները և տվյալները, որոնք վերաբերում էին կոնկրետ վեճի կող-

մին: Բանական անձի կառուցակարգի այսպիսի հստակեցումը գործնական տեսանկյունից ունի կարևոր նշանակություն: Այսպես՝ օբյեկտիվ չափանիշը կիրառելիս պետք է հաստատել վիճելի պայմանի այնպիսի հասկացողությունը, որը ուներ ոչ թե ցանկացած արևմտա-երրորդ անձը, այլ՝ բանական մարդը կամարտահայտության հասցեատեր կողմի տեղում:

Այլ խոսքերով՝ վիճելի պայմանը հասկանալու բանական անձի հեռանկարների մեջ ներառվում են այն բոլոր գիտելիքները, որոնց տիրապետում էր կողմը պայմանագրի կնքման պահին, այն լեզվի իմացությունը, որով կնքվել էր պայմանագիրը, տեխնիկական գիտելիքները, որոնք վերաբերում են պայմանագրի կատարմանը, ինչպես նաև բոլոր հանգամանքները, որոնց մասին պետք է իմանար կողմը, այդ թվում նաև՝ պայմանագրին նախորդող բանակցությունների բովանդակությունը, համաշխարհային առևտրի միտումը, որոնք չէին կարող հայտնի չլինել կոնտրագենտին, և այլն:

Կ. Վ. Կանարիսի և Հ. Կ. Գրիգոլեյթի կարծիքով՝ հաղորդակցման ակտը գնահատելիս, որպես կանոն, անխուսափելիորեն ուշադրության են դարձվում գործի անհատական հանգամանքները, օրինակ՝ առևտրի ոլորտը, կողմերի նպատակը և այլն: Նման մոտեցումը համապատասխանում է հերմենևտիկայի ընդհանուր պահանջին, որի համաձայն՝ հաղորդակցման ակտը պետք է հասկանալ դրա համատեքստում: Ուստի սխալ է մեկնաբանման սուբյեկտիվ մոտեցմանը հակադրել օբյեկտիվ մոտեցումը, ինչպես տարածված է դոկտորինում: Առավել ուշադիր ուսումնասիրությամբ՝ նշանակություն է ձեռք բերում հասցեատիրոջ սուբյեկտիվ հորիզոնը, հենց այդ տեսանկյունն է օբյեկտիվացվում, բայց որոշակի աստիճանի, այսինքն՝ ողջամտության և բարեխղճության սկզբունքների միջոցով²⁴:

Համանման դիրքորոշում է արտահայտում նաև պրոֆեսոր Ս.Վոգենաուերը. վերլուծելով օբյեկտիվ տեսությունը, մի կողմից՝ բանական

²² Տե՛ս Lüderitz A. նշվ. աշխ. էջ 284:

²³ Տե՛ս Lando O., H. Beale. Principles of European Contract Law. Parts I and II. Hague, London, Boston. 2000. էջ 346:

²⁴ Տե՛ս Grigoleit H.C., Canaris C.-W. Interpretation of Contracts. 2010. էջ 4:

անձի հասկացողությունը միտված է, որ բացառվեն այն իրավիճակները, երբ անձինք, մտնելով պայմանագրային հարաբերության մեջ, չմտածված բառեր օգտագործեն, և նրանք պետք է պատասխան տան այն հայտարարությունների համար, որ անում են: Մյուս կողմից՝ կողմի տեղում բանական անձի տեղավորումը դատարանին սահմանափակում է պայմանագրի վերաշարադրումից վերացական հիմքերով՝ հաշվի առնելով բարեխղճությունը և արդարությունը²⁵: Օբյեկտիվ հորիզոնի մեջ անհատական հանգամանքները և որակները ներառելը հանգեցում է նրան, որ բանական անձի կառուցակարգը վերացական իրավական ենթադրություններից անցնում է պայմանագրային վեճերի լուծման գործնական դաշտ՝ դառնալով արդյունավետ միջոց վիճելի պայմանի առավել հավանական իմաստի բացահայտման համար²⁶:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ա. Լյուդերիցը՝ բանական անձի հասկացությունը սահմանելու համար անհրաժեշտ է պատասխանել երեք հարցի. 1. արդյոք հանգամանքները, որոնցից հետևում է հաստատվող կամարտահայտությունը կամ հասկացողությունը, ակնհայտ են, 2. արդյոք ելակետերը (լեզվի օգտագործում, շրջանառության սովորույթներ և այլն) ճանաչելի են, 3. պետք է արդյոք, հաշվի առնելով կողմերի համապատասխան փորձը, տրվի որոշակի եզրահանգում²⁷:

Այս հարցերը առաջ են բերում մի նոր հարցի ձևավորման՝ ինչպիսի հանգամանքներ պիտի ներառվեն օբյեկտիվ հասկացողության հորիզոնում: Այլ խոսքերով՝ ինչպիսի սուբյեկտիվ տարրեր պետք է հաշվի առնվեն բանական անձի կառուցակարգը կիրառելիս: Ինչպես նշում է Ֆ. Լոթենշլագերը՝ այն ասպեկտները, որոնք գոյություն ունեն, բայց հայտնի չեն կողմերին, չպետք է ուշադրության դարձվեն, քանզի դրանց ուսումնասիրումը խախտում է իրավական որոշակիության սկզբունքը:

Հայտարարողը, հաշվի առնելով հասցեատիրոջ մեջ առկա հատուկ հանգամանքները, միայն այն ժամանակ կարող է ստեղծել իր հայտարարությունը, երբ նա կարող է հիմնավոր ենթադրել, որ հասցեատերը ուշադրություն կդարձնի նման հատուկ նշանակությամբ: Հակառակը ևս հնարավոր է, հասցեատերը կարող է հաշվի առնել հատուկ հանգամանքները, որոնք շրջապատում են հայտարարողի անձը, միայն եթե հայտարարողը պետք է հիմնավոր ենթադրեր, որ հասցեատերը գիտեր դրանց մասին²⁸:

Գործի հանգամանքների համաձայն՝ հայցվորը, ով կենդանիների կերի պրոֆեսիոնալ մատակարար էր, կնքել էր առուծախի պայմանագիր պատասխանողների հետ, ովքեր, իրենց հերթին, զբաղվում էին ջրաքիսների բուծմամբ: Պայմանագրի առարկան կենդանիների կերն էր, որը հայտնի էր “King Size” անունով: Պայմանագրի առարկայի որակի մասին պայմանի համաձայն՝ կերը պետք է մատակարարվեր համապատասխան սեզոնի համար միջին որակից բարձր: Պայմանագիրը պարունակում էր կերի մեջ պարունակվող բաղադրիչների բնութագրություն: Մատակարարված ապրանքը պատճառ դարձավ հազարավոր ջրաքիսների սատկելուն, քանզի պարունակում էր թունավոր բաղադրիչ, ինչը, սակայն, համապատասխանում էր այլ կենդանիներին՝ բացառությամբ ջրաքիսների: Լորդերի պալատը հանգեց այն եզրակացության, որ մատակարարը պատասխանատու է մատակարարված կերի որակի համար՝ պաշտպանելով գնորդի ողջամիտ վստահությունը, ով հենվում էր մատակարարի գիտելիքների և իմացության վրա: Այս գործով դատարանը նշեց, որ առանցքային հարցն այն է, թե ինչ էր խոստացվել վաճառողի կողմից գնորդին: Դատարանի կարծիքով՝ գնորդի հայտարարությունը պետք է հաստատվի՝ ելնելով այն բառերից և վարքագծից, որոնք հասցեատիրոջը դրդել են

²⁵ Sten Vogenauer S. նշվ. աշխ. էջ 5:

²⁶ Հետևաբար՝ դժվար է համաձայնել անգլիական իրավունքում ձևավորված այն տեսակետին, որ բանական անձի ֆիզիկորը միայն դատավորի մտքի քողարկում է, ավելի շուտ հակառակը՝ հասցեատիրոջ կամարտահայտության հետ կապված բոլոր փաստերի ուսումնասիրության անհրաժեշտությունն էականորեն սահմանափակում է դատական հայեցողությունը:

²⁷ Sten Lüderitz A. նշվ. աշխ. էջ 284:

²⁸ Sten Lautenschlager F. նշվ. աշխ. էջ 5:

ողջամտորեն հենվել այդ հայտարարությանը²⁹:

Այս գործով դատարանը հանգեց եզրակացության այն մասին, որ բանական մարդը կարող էր հենվել որակի պայմանի վրա՝ ելնելով այն հանգամանքից, որ մատակարարից, ով տեղյակ էր պայմանագրի վերջնական նպատակից, կարելի էր սպասել ապրանքների մատակարարման այնպիսի միջոցների ձեռնարկում, որը կհամապատասխաներ պայմանագրի վերոնշյալ նպատակին:

Կարծում ենք, որ բանական անձի հասկացողության հորիզոնի մեջ որոշ անհատական (սուբյեկտիվ) հանգամանքներ ներառելը պայմանագրի օբյեկտիվ մեկնաբանումը չի դարձնում սուբյեկտիվ: Դատարանը, մեկնաբանելով պայմանագիրն օբյեկտիվ, կարող է ուշադրություն դարձնել այն հանգամանքներին, որոնք գուցե հայտնի չեն եղել կողմերից մեկին, սակայն պետք է հայտնի լինեին բանական անձին: Այս ձևակերպումն իր աջակցությունն է ստանում հատկապես անգլիական դոկտորինում: *Investors Compensation Scheme* գործով³⁰ լորդ Հոֆմանը նշում է. ելակետային տվյալները պետք է լինեն օբյեկտիվ, այսինքն՝ ողջամտորեն հասանելի կողմերին, բայց նրանք կարող է և իրականում չհիմանան դրանց մասին: Օբյեկտիվ մոտեցումը մեկնաբանման պրոցես կարող է բերել տեղեկատվություն, որի շուրջ կողմերը չէին պայմանավորվել: Որպես օրինակ՝ կարելի է ներկայացնել *Prenn v Simmonds* գործը, որտեղ մեկնաբանումը վերաբերում էր **եկամույր** բառին: Արդյոք եկամուտները վերաբերում էին հողիինգային ընկերությանը, թե՛ ընդգրկում էին ամբողջ խմբի, հողիինգային ընկերության և նրա դուստր ընկերությունների եկամուտները: Լորդ Վիլբերֆորսը նույնպես համաձայնեց, որ դա արտացոլում է ընդունված բիզնես պրակտիկան և հաշվապահական հաշվառման պրակտիկան, որոնց համաձայն՝ եկա-

մուտները վերաբերում են ամբողջ հողիինգի համախմբված հաշվետվությանը: Այս տեղեկատվությունը վերաբերում էր համարտեքստին, որի համաձայն՝ անկախ կողմերն իրականում գիտեին ընդունված բիզնես պրակտիկայի մասին, պայմանագրի ողջամիտ կողմը, գործող նմանատիպ փաստական հանգամանքներում, պիտի իմանար դրա մասին³¹:

Բանական անձի կառուցակարգի հետ կապված՝ առանձնակի ուշադրություն է դարձվում բարեխղճության հարցին, որը բարձրացվում է գերմանական գրականության մեջ և պրակտիկայում՝ հասկացողության օբյեկտիվ հորիզոնի հետ կապված: Այս հարցը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. պետք է արդյոք բանական անձը միաժամանակ հանդիսանա նաև բարեխիղճ: Մեկնաբանելիս գերմանական դատարանները հղում են տալիս ոչ միայն ողջամտությանը, այլ նաև բարեխղճությանը, քանզի Կանոնագրքի 157-րդ հոդվածն ուղղակի նախատեսում է բարեխղճության սկզբունքը (*Treu und Glauben*): Գերմանական իրավաբանական գրականության մեջ լայնորեն կիրառվում է այն թեզիսը, որ պայմանագիրը պետք է մեկնաբանել բանական անձի տեսանկյունից, ով միաժամանակ նաև բարեխիղճ է³²:

Բանական անձի հասկացողության հաստատման ժամանակ բարեխղճության սկզբունքի կիրառման օրինակ կարելի է հանդիպել գերմանական դատարանների կողմից քննած երաշխիքի պայմանը մեկնաբանելիս³³: Գործի հանգամանքների համաձայն՝ իր բիզնես գործընկերոջ վարկի երաշխավորման համար ամուսինը համոզեց իր կնոջը (պատասխանող) ստորագրել երաշխիքն ըստ առաջին իսկ պահանջի (*demand guarantee – պահանջարկի երաշխիք*) հոգուտ հայցվոր ընկերության: Այդպիսի երաշխիքը ենթադրում է դրանում նշված գումարի անմիջական վճարում բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և սահմանափակում է

²⁹ *Sten Cases, Materials and Text on Contract Law: Ius Commune Casebooks for the Common Law of Europe*. Oxford, 2010. էջ 669:

³⁰ Նշենք, որ այս գործը, որը քննվել է 1997թ. Լորդերի Պալատի կողմից, դարձավ հեղափոխական՝ պայմանագրի մեկնաբանման օբյեկտիվ տեսության համար: Տե՛ս <https://clck.ru/HxK5M>

³¹ *Sten Mitchell C. – Interpretation of contracts / Current controversies in law/ NY*. 2007. էջ 50:

³² *Sten Lüderitz A*. նշվ. աշխ. էջ 356:

³³ *Sten Cases, Materials and Text on Contract Law: Ius Commune Casebooks for the Common Law of Europe*. Oxford, 2010. էջ 671.

առարկությունների ներկայացման հնարավորությունը: Դատարանում պատասխանողը հղում էր կատարում, որ չուներ նման երաշխիք կնքելու փորձ և հասկացել է ներկայացված երաշխիքը որպես սովորական: Վճռելով գործը հոգուտ պատասխանողի՝ դատարանը նշեց, որ հայցվորը, սահմանելով երաշխիքի պայմանները, գիտակցաբար ընտրել է այնպիսի ձևակերպումներ, որոնք սովորաբար կիրառվում են բանկերի կողմից առաջին պահանջով երաշխիքի դեպքում, սակայն հայցվորի չի ունեցել հիմքեր՝ ենթադրելու, որ պատասխանողը, չունենալով համապատասխան պրոֆեսիոնալ փորձ, կարող էր հասկանալ, որ ստանում էր հենց առաջին պահանջով երաշխիք:

Ակնհայտ է, որ այդ գործով որոշումը կայացված է ոչ այնքան ողջամտության պահանջներով, որքան բարեխղճության պահանջով: Կոնկրետ այս դեպքում հայցվորի հասկացողությունը թեև ողջամիտ է, սակայն չի համապատասխանում բարեխղճության պահանջին: Ինչպես նշվում է գերմանական գրականության

մեջ՝ բարեխիղճ անձի հասկացողության սահմանումը տալիս դատարանը պետք է հաշվի առնի երկու կողմի կորուստները՝ խուսափելով պայմանագրի կողմերի անհավասար կարգավիճակից, իսկ էական տնտեսական անհավասարության դեպքում նախապատվություն տա թույլ կողմին³⁴:

Չնայած այն հանգամանքին, որ բարեխղճության սկզբունքի կիրառման մասշտաբները հաճախ դուրս են գալիս մեկնաբանման շրջանակներից, կարծում ենք՝ բարեխղճության սկզբունքի կիրառումը մեկնաբանելիս արդարացված է առաջին հերթին հանրային շահերի պաշտպանության տեսանկյունից, երբ դատարանը բախվում է կողմերի տնտեսական անհավասարությանը (օրինակ՝ սպառողների հետ վեճերում) կամ կողմերից մեկի ակնհայտ անբարեխղճությանը, որը, չնայած և հասկանում էր վիճելի պայմանը ողջամտորեն, սակայն, ելնելով կոնկրետ հանգամանքներից, չէր կարող չիմանալ, որ նման հասկացողությունն ակնհայտորեն չի բխում մյուս կողմի շահերից:



³⁴ Stiu Lüderitz A. նշվ. աշխ. էջ 356:

ԼՈՒՍԻՆԵ ԹԱՍԱԼՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի և
քրեաբանության ամբիոնի դասախոս,
ոստիկանության ավագ լեյտենանտ

ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի Իրավագիտության ֆակուլտետի
3-րդ կուրսի սովորող

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒԹՅՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ

Խոսելով հաշտարարության մասին՝ անհրաժեշտ է նախ ներկայացնել բառի ծագումնաբանությունը և պատմական ակնարկ կատարել: Այսպես՝ հաշտարարություն բառը ծագում է լատիներեն «mediare»¹ բառից, որը թարգմանաբար նշանակում է հաշտեցնող կամ միջնորդող: Հաշտեցնողը բանակցող, չեզոք, անկողմնակալ երրորդ անձն է, ով շահագրգռված է միմիայն այն հանգամանքով, որ կողմերը լուծեն իրենց միջև ծագած վեճն իրենց փոխադարձ համաձայնությամբ, իրենց համար առավելագույն ընդունելի տարբերակով:

Պարզվում է, որ վեճերի այլընտրանքային լուծումը հաշտարարության միջոցով սաղմնավորվել է դեռևս հին ժամանակներից, պատմաբանները նմանատիպ դեպքերի են հանդիպել Փյունիկիայի և Բաբելոնի առևտրային հարաբերություններում²: Հին Հունաստանում անգամ գոյություն է ունեցել օրենքով կարգավորման փորձ, մասնավորապես՝ Հունաստանի (530-533 թթ.) Կոդեքսներով, ընդունվել է հաշտարարություն: Իսկ հռոմայեցիները տարբեր կերպ են անվանել հաշտարարին՝ բանակցող, միջնորդ, հաշտարար և այլն: Հաշտարարությունն իր պատմական զարգացման ընթացքում աշխարհի տարբեր երկրներում ընթացել է տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր կերպ, սակայն նպատակը միշտ էլ նույն է եղել՝ վիճող կողմերին հաշտեցնելը:

Հաշտարարությունն սկսեց զարգանալ XX դարի երկրորդ կեսից՝ տեղ գտնելով անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի անդամ երկրների կոդեքսներում՝ ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Մեծ Բրիտանիայում, Եվրոպական ուրոշ երկրներում և այլուր³: Սակայն հաշտարարության

ինստիտուտը, թեպետ իրավական տեսանկյունից զարգացել է սկզբնական շրջանում անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի անդամ երկրներում, այնուհանդերձ՝ կիրառություն է ունեցել նաև ռոմանագերմանական իրավունքի անդամ երկրների իրավական համակարգում: Հաշտարարություն կիրառելու առաջին փորձերը, որպես կանոն, ձեռնարկվել են ընտանեկան հարաբերությունների բնագավառում վեճերի լուծման գործընթացում: Հետագայում հաշտարարությունը ճանաչվել է վեճերի լուծման լայն շրջանակում՝ ընտանեկան հակասություններից մինչև առևտրային և հանրային ոլորտներ: Հաշտարարության ընթացակարգը, մասնավորապես՝ հաշտությունը, որպես ներքին վեճերի լուծման գործիք, սովորաբար լայն տարածում ունի ճապոնիայում: Ճապոնիայի գործարար շրջանակների համար վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների հանձնառությունը սովորաբար կապված է էթիկական կողմի հետ՝ բացասական վերաբերմունքը պետական դատարանի ընտրության հարցում՝ որպես վեճերի կարգավորման միջոց: Ներպետական իրավական համակարգում հաշտարարությունը, որպես վեճերի լուծման այլընտրանքային միջոց և արդարադատությանը օժանդակող իրավական ինստիտուտ, նոր է:

Իրավական համակարգում իր տեղը և դերը ստանձնեց 2015թ. մայիսի 7-ին Ազգային ժողովի կողմից օրենսդրական փոփոխությունների և լրացումների միջոցով: Իսկ հիմնադիր փաստաթուղթ կարող ենք համարել «Կանաչ փաստաթուղթ» քաղաքացիական և առևտրային իրավունքի ոլորտում վեճերի լուծման այլընտրանքային (ՎԼԱ) և Հայաստանի Հանրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

¹ Сѣу ИСТОРИЯ РАЗВИТИЯ ИНСТИТУТА МЕДИАЦИИ, <http://buryatia.arbitr.ru/process/mediation>, / 10.06.2018թ./:

² Сѣу Медиация <https://ru.wikipedia.org/wiki/%D0%9C%D0%B5%D0%B4%D0%B8%D>.

³ 6 Законодательство в мире, <http://mediacia.com/zakon.htm> (27.06.2018թ.):

պետության իրավական⁴ և դատական բարեփոխումների 2012- 2016 թվականների ռազմավարական ծրագրից⁵: Ի տարբերություն հաշտության ինստիտուտի իրավական զարգացման՝ հաշտարարությունը կամ բանակցությունը, մեզանում գործել է ավելի վաղ, անհիշելի ժամանակաշրջանից: Կարող ենք ասել՝ դա սովորության իրավունքի մաս է կազմում, պահպանվել և մեզ է փոխանցվել հասարակության և մարդու գիտակցության շնորհիվ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատմական զարգացումից, պետության կառավարման ձևից անկախ՝ հաշտարարության հիմնախնդիրներն ու իրականացման եղանակը նույնական են, իսկ նպատակը մեկն է՝ հաշտությունը: Իսկ հաշտարարի կամ բանակցողի բնութագիրը բոլոր ժամանակներում նույնն է՝ բանիմաց, սովորության իրավունքին կամ օրենքներին քաջատեղյակ, անկողմնակալ անձ, ով իր մասնագիտական որակով օգնում է կողմերին՝ լուծելու ծագած հակասությունները: Հաշտարարության գործընթացը հիմնականում հիմնված է փոխադարձ համագործակցության և բանակցությունների վրա: Հաշտարարության մեջ որոշակի պայմաններում վեճը հաշտությամբ ավարտելու կամ դադարեցնելու որոշումն ընդունվում է հաշտարարության գործընթացի մասնակիցների կողմից, քանի որ հաշտարարն իրավասու չէ որևէ վճիռ կայացնելու կողմերի վերաբերյալ: Հաշտարարն օգնում է, որ կողմերը միմյանց ավելի լավ հասկանան, հասնեն փոխադարձ համաձայնության, իսկ որոշ դեպքերում՝ օգնելով գտնել այնպիսի այլընտրանքային տարբերակներ, որոնք վեճը կարող են լուծել հաշտեցմամբ: Հաշտարարությունը, ըստ էության, բանակցային գործընթաց է, երբ հաշտարարը նախաձեռնող է և ղեկավարում կամ վարում է բանակցություններն այնպես, որ կողմերը համաձայնության հասնեն երկու կողմերի առավել շահավետ իրատեսական և բավարարող շահերին, որոնց շնորհիվ կողմերը կլուծեն իրենց միջև ծագած հակասությունները: Հաշտության գործընթացը հաշտարարն իրականացնում է օրենքից բխող կամավորության, գաղտնիու-

թյան, կողմերի հավասարության, հաշտարարի անկախության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա⁶: Այդ սկզբունքները հաշտարարը պետք է անվերապահորեն պահպանի: Դրանք մեկ ամբողջական շղթայի մաս են կազմում և միմյանց փոխլրացնող սկզբունքներ են, որոնց անտեսումը հաշտարարի կողմից կհանգեցնի հաշտարարության գործընթացի անբնական լուծման և վեճի կարգավորման գործընթացի խեղաթյուրման:

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում նույնական է նաև ապացույցների գնահատման հարցը: Հաշտարարական գործընթացում, ըստ էության, հաշտարարը չի քննարկում ապացույցների ներկայացվող՝ վերաբերելիության, թույլատվության հարցը և չի գնահատում կողմերի պահանջների լեգիտիմությունը, դրանց մասին որևէ գնահատող կարծիք չի արտահայտում, ավելին՝ ներպետական օրենսդրության համաձայն՝ գործի մասնակցող անձի կողմից հաշտարարության ընթացքում որևէ փաստի ընդունումը չի կարող հիմք հանդիսանալ՝ դատավարության ընթացքում այդ փաստը հաստատված համարելու համար: Սակայն, կարծում ենք, որ հաշտության գործընթացում հաշտարարն իրավասու է ընդունելու այնպիսի ապացույցներ, որոնք հիմք կհանդիսանան ապացուցելու կամ պարզելու՝ արդյոք այս կամ այն գործի շրջանակում կարող են կողմերի ներկայացուցիչ հանդես գալ փաստաբանները և արդյոք լիազորված են մասնակցելու գործընթացին և ստորագրելու հաշտության համաձայնությունը: Եվ վերջապես՝ ինչպես պետք է պարզի հաշտարարը երրորդ անձի կամ գույքի բաժնեմասի վերածելու համար հատակագծերը, կամ արդյոք ժառանգական վեճի լուծելիս կողմը ժառանգորդ է, և այլն: Այդ մասով հաշտարարը չպետք է կաշկանդված լինի կամ մտավախություն ունենա, գործնականում կողմերի պաշտպանների և իրենց խնդիրն է ոչ ստույգ տեղեկություն տալը, կամ իրենք են իրենց հաշտության տեքստը կազմում, հաշտարարին չպետք է ծանրաբեռնել կամ, դրանից ելնելով՝ որակավորել: Ասվածից կարող ենք հետևություն անել,

⁴ Տես Եվրոպական համայնքների հանձնաժողով, Բրյուսել, 19.04.2002թ. (05.07.2018թ.):
⁵ Տես Ընդունվել է ՀՀ նախագահի կողմից 30.06.2012թ.:
⁶ Տես Հաշտարարության մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվ./ ՀՀՊՏ 2018.07.04/52(1410) / (11.07.2018թ.):

որ հաշտարարը պետք է ընդունի և պահանջի այնպիսի փաստեր, որոնք էական նշանակություն կունենան վեճի գրագետ և իրավաբանորեն ճիշտ լուծման համար: Այդ պահին գործող օրենքի պահանջից անկախ՝ հաշտարարը պետք է և պարտավոր է ստուգել որոշակի փաստեր: Կարծում եմ՝ հետագա օրենսդրական փոփոխությունների շնորհիվ այս հարցը լուծում կստանա: Իհարկե, սա ամենևին չի նշանակում, թե այդ ապացույցները պետք է դիտարկվեն դատարանում որպես ապացուցված, վերաբերելի և թույլատրելի ապացույցներ, դրանք դատարանը կարող է գնահատել՝ ըստ դատավարական ընթացակարգի: Հաշտարարի հիմնական խնդիրն է կողմերի փոխըմբռնման ապահովումը, բոլոր մասնակիցների համար ընդունելի պայմաններով խնդրի լուծման հնարավորությունը հայտնաբերելն ու կողմերին օգնելը: Այդ իսկ պատճառով նա պետք է բազմակողմանի և հիմնավոր ուսումնասիրի գործը, որ կարողանա գրագետ ու ճիշտ իրականացնել գործընթացը: Հաշտարարն իր առջև դրված խնդիրները լուծելու համար նախ և առաջ պետք է հետևի վերը նշվածին, իհարկե դա կատարելիս պետք է կարողանա մշակել նաև իր համար մարտավարական մեթոդներ, ինչո՞ւ չէ, յուրաքանչյուր գործի համար մի շարք մարտավարություններ կարող է օգտագործվել՝ բանակցային գործընթացի բնույթից անկախ: Այլ տեխնիկայի կամ գործիքների ամբողջական օգտագործումը սահմանափակվում է և ընթանում է որոշակի փուլերում, տեխնոլոգիաները, որոնք լայնորեն կիրառվում են բոլոր ժամանակներում

և գործընթացի բոլոր փուլերում: Հաշտարարի գործողությունները կամ մարտավարական տեխնիկան, կարծում եմ՝ կարող են լինել ուղղակի կամ անուղղակի: Անուղղակի դեպքում հարցի պատասխանը շատ անորոշ է: Ժամանակի հետաձգումը կիրառվում է այն դեպքերում, երբ կողմերը փորձում են հետաձգել բանակցությունները: Սպասումը դրսևորվում է մասնակցի ցանկությամբ նախ լսելու հակառակ կողմի կարծիքը, որպեսզի այնուհետև, ստացված տեղեկատվությունից կախված, ձևակերպի իր դիրքորոշումը: Եթե ավելի խորքային դիտարկենք վերոգրյալը, ապա կնկատենք, որ ներպետական համակարգում ևս սկսել է հաշտարարությունը զարգանալ, նախ և առաջ, ընտանեկան հարաբերություններում: մեզանում ևս առկա է հոգեբանական ու պատմականորեն վեճերի լուծման հաշտեցման տարբերակը: Սակայն ներպետական համակարգում զարգացնելու համար համաշխարհային պրակտիկական հնարավորություն է տալիս մեզ՝ բազմաթիվ օրինակներ օրենսդրական համախմբում զարգացնելու հաշտարարության ինստիտուտը: Պատկան ակտերը, որոնք ընդունված են Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Գերմանիայի, Եվրոպական երկրների կողմից, հավանություն են տալիս հաշտարարին զարգացնելու մասնագիտական իմացությունը, իսկ Եվրոպական Մոդելային օրենքները ևս հաշտարարության առավել զարգացման և կենսական շունչ տալու համար էական նշանակություն կարող են ունենալ մեզանում՝ հաշտարարության ինստիտուտի զարգացման համար:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019



ԷՂԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«Արարատրանկ» ԲԲԸ-ում իրավաբան,
 ՀԵՀ մագիստրատուրայի ուսանող

ԱՐԲԻՏՐԱԾՆ ՈՒ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՎԵՃԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԵՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Քաղաքացիաիրավական վեճերի դատական կարգով լուծումը ներկա ժամանակաշրջանում ՀՀ-ում համարվում է ավանդաբար ամենավստահելի ու կայուն տարբերակը, սակայն, հաշվի առնելով քաղաքացիաիրավական վեճերի բազմազանությունն ու մեծ ծավալը, պետությունը պետք է վեճերի լուծման համար նախատեսի լրացուցիչ մեխանիզմներ: Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառության ընդլայնումը թույլ կտա էականորեն նվազեցնել ինչպես դատարանների ծանրաբեռնվածությունն ու բարձրացնել վեճերի լուծման արդյունավետությունը, այդպես էլ կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերն ընդհանրապես¹:

Վեճերի այլընտրանքային լուծման եղանակները միջազգային հանրության ուշադրության կենտրոնում են հայտնվել 20-րդ դարում, որի արդյունքը հանդիսացավ միջազգային միջարք իրավական ակտերով դրանց ճանաչումն ու կարգավորումը, մասնավորապես՝ Եվրոպական Միության անդամ պետությունների համար 2004 թվականի հունիսի 2-ին նախատեսված՝ Բրյուսելում Հաշտարարի վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսգիրքը, «Միջազգային առևտրային հաշտեցման ընթացակարգերի վերաբերյալ» նմուշային օրենքը (UNICTRAL), ՄԱԿ-ի «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյույորքյան 1958 թ. Կոնվենցիան և այլն:

ՀՀ օրենսդիրը ևս որդեգրեց քաղաքացիաիրավական վեճերի ավելի արագ և արդյունավետ լուծման արբիտրաժային ու հաշտարարական տարբերակները, ինչն արտահայտվեց՝ նախ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելով և

այդ հարաբերությունները կարգավորող նորմեր նախատեսելով, և հետո միայն՝ առանձին օրենքներով կարգավորելով՝ «Առևտրային արբիտրաժի մասին», «Հաշտարարության մասին», «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքներով, թեև դրանց իրականացման համար հիմնարար նորմերը նախատեսված են նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ նաև՝ ՔԴՕ, Օրենսգիրք):

Ինչպես նկատեցինք՝ ՀՀ-ում գործող օրենսդրությանը հայտնի է վեճերի լուծման այլընտրանքային, ոչ դատական երկու տարբերակ՝ արբիտրաժային և հաշտարարական, այդ թվում նաև՝ ֆինանսական համակարգի հաշտարարության (այսուհետ նաև՝ ՖՀՀ) քննությանը: Ոչ դատական կարգով վեճի լուծմամբ դատական պաշտպանության հիմնական իրավունքի սահմանափակման ռիսկայնության զսպմանն է ուղղված այն հանգամանքը, որ այս կարգերով վեճերի լուծումն ու իրավունքների պաշտպանությունը կարող է տեղի ունենալ միայն կողմերի համաձայնության հիման վրա. արբիտրաժային կարգով քննության դեպքում՝ օրենքով նախատեսված կարգով կնքված արբիտրաժային համաձայնությամբ, հաշտարարության դեպքում՝ կողմերի համաձայնությամբ (կողմերն են որոշում հաշտարարին, հաշտարարության իրականացման կարգը, տեղը և այլ պայմաններ), ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով քննության դեպքում՝ ֆինանսական կազմակերպության հետ իրավահարաբերության մեջ մտած հաճախորդի ցանկությանը:

Միայն տվյալ վեճի լուծման կապակցու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

¹ Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի N 92 որոշումը՝ ՀՀ դատական համակարգի հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրին նախագծին հավանություն տալու մասին:

թյամբ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում է, որ վերը թվարկված չափանիշներին համապատասխանող գործը դառնում է ենթակա արբիտրաժի քննությանը: Թերևս՝ դա է պատճառը, որ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևն ուսումնասիրող բոլոր գիտնականներն արբիտրաժային համաձայնությունը դիտարկում են որպես արբիտրաժային իրավահարաբերությունների ծագման պարտադիր նախադրյալ: Քանի դեռ չկա վավեր ու գործող արբիտրաժային համաձայնություն, գործը ենթակա է դատարանի քննությանը²:

«Վերաքննիչ քաղաքացիական դատարանն ԱՐԱԴ/1377/02/18 քաղաքացիական գործով եզրակացրել է, որ քաղաքացիական դատավարությունում հայցադիմումի ընդունման հարցի քննության փուլում դատարանը չի կարող անդրադառնալ արբիտրաժային համաձայնությանը՝ դրանով իսկ հայցադիմումի ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի նախապատրաստական փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից, սահմանափակելով Դատարանի մատչելիությունը՝ դատական պաշտպանության սահմանադրափրավական միջոցը դարձնելով անարդյունավետ, ավելին՝ փաստի հաստատումը կամ հերքումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների ու կողմերի իրավունքների պահպանմամբ, հակառակ դեպքում՝ արդարացի դատաքննության իրավունքը կիմաստագրվի³: Վերաքննիչ դատարանի տվյալ մեկնաբանումն ուղղակի բխում է ՀՀ ՔԴՕ հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու հիմքերից:

Համաձայնելով վերաքննիչ դատարանի վերոգրյալ դիրքորոշման հետ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում հայցադիմումը ոչ թե պետք է վերադարձվի, ինչպիսի պրակտիկա ձևավորվել է շատ դատավորների պարագայում, այլ կարող է առաջացնել միայն հայ-

ցի առանց քննության թողնելուն, սակայն այս դեպքում էլ արբիտրաժային համաձայնության առկայությունը պետք է վկայակոչի պատասխանողը (ՔԴՕ հոդված 180-րդ, մաս 1-ին, կետ 3-րդ): Ինչպես տեսնում ենք՝ օրենսդիրը, քաղաքացիական դատավարությունում դատարանի պասիվ դերը հաշվի առնելով, դատարանին չի օժտել արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում սեփական նախաձեռնությամբ կողմերի դատական պաշտպանության իրավունքը սահմանափակելու հնարավորությամբ:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ արբիտրաժը չի համարվում մինչդատական կամ նախադատական կարգով վեճի լուծման կարգ, այլ ինքնին համարվում է դատական քննության ամբողջական «այլընտրանք», կարծում ենք՝ գործող ՔԴՕ-ն, մեծ կարևորություն տալով արտադատական կարգին, այդ թվում՝ արբիտրաժային քննությանը, պետք է նաև դրա ապահովման համար լրացուցիչ երաշխիքներ նախատեսեր: Այսպես՝ արբիտրաժային համաձայնության առկայությունն ինքնին ենթադրում է կողմերի ցանկությամբ դատական կարգով վեճի քննման բացառություն: Հետևաբար, կարծում ենք՝ արբիտրաժային կարգի իրական նպատակն ապահովելու և դերը բարձրացնելու համար պետք է արբիտրաժային համաձայնության առկայությունը (վկայակոչողից կամ նախաձեռնողից անկախ) համարվի հայցադիմումը վարույթ ընդունելու մերժման հիմք: Կարծում ենք, որ այս դեպքում կարող է կիրառվել ՔԴՕ 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով: Փաստացի արբիտրաժային համաձայնության առկայությունն ինքնին բացառում է դատական կարգով վեճի քննությունը և, հետևաբար՝ ենթակա չէ քաղաքացիական դատավարության կարգով քննության:

Բայց, քանի որ կարծում ենք՝ վերոգրյալ նորմի նման մեկնաբանումը կարող է այլ տա-

² Տե՛ս Մեղրյան Ս., Քաղաքացիական և վարչական գործերի դատական ենթակայությունը որոշելու չափանիշները, Երևան, 2010, էջ 35: URL: <https://bit.ly/2LgM3ia>

³ Տե՛ս ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԱՐԱԴ/1377/02/18 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքը բավարարելու մասին որոշում: URL: http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=28710447624531042

րամեկնաբանումների և անձի դատական պաշտպանության իրավունքի անհիմն սահմանափակման տեղիք տալ, որոշակիության սկզբունքից ելնելով՝ առաջարկում ենք արբիտրաժային համաձայնության առկայությունը նախատեսել որպես հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու առանձին հիմք և ձևակերպել այսպես. «Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ ...կողմերի միջև առկա է արբիտրաժային համաձայնություն՝ բացառությամբ, եթե այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժ դիմելու հնարավորությունը վերացել է, կամ այդպիսի համաձայնությունն անվավեր է ճանաչվել դատարանի կողմից, ինչպես նաև Օրենսգրքի 320-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում»:

Արբիտրաժի նման բարձր կարգավիճակ տալու զսպմանն է ուղղված ՔԴՕ 45-րդ գլուխը, որը նախատեսում է Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը, որի 320-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ այն դեպքում, երբ արբիտրաժի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ է ճանաչվում արբիտրաժային համաձայնության անվավերության հետևանքով, կամ եթե նման վճիռը կայացվել է արբիտրաժային համաձայնությամբ արբիտրաժին չվերապահված վեճի վերաբերյալ, կամ չի համապատասխանում դրա պայմաններին, կամ արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցերով որոշումներ է պարունակում, արբիտրաժային վարույթի կողմերն իրենց վեճը լուծելու համար կարող են դիմել դատարան՝ ՔԴՕ-ով նախատեսված ընդհանուր կանոնների պահպանմամբ:

Իսկ հաշտարարությունն իր բնույթով ուղղված չէ վեճի լուծմանը, այլ իր նպատակը վեճը դադարեցնելն է: Հաշտարարն իր առջև չի դնում վեճն ըստ էության լուծելու պահանջ և չի պարզում՝ ո՞վ է ճիշտ, և ո՞վ՝ սխալ: Հաշտարարությունը պարզապես բանակցություններ վարելու մեթոդ է առանց հաշտարարի՝ վեճի իրավական կողմի վերաբերյալ գնահատականի⁴:

Գործող ՔԴՕ-ի նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական կարգի լուծման քննարկվող երկու տեսակների համար ներկայացնում է ոչ միատեսակ կարգավորումներ՝ արհեստականորեն առանձնացնելով արբիտրաժային ու ՖՀՀ կարգավորումներն ընդհանուր հաշտարարական կարգավորումներից:

Արբիտրաժի ու ՖՀՀ-ի վերաբերյալ ՀՀ ՔԴՕ-ում նախատեսված նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արբիտրաժային կամ ՖՀՀ կարգով քննված վեճը դատական կարգով քննության առարկա լինել չի կարող: Նման կարգերով քննված վեճը կարող է բեկանվել միայն մի դեպքում, երբ կողմը դիմում է դատարան՝ արբիտրաժի վճիռը կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու պահանջով (ՀՀ քաղ. դատ. օր. Գլուխ 45, 49): Այլ խոսքով՝ դատարանը հանդես է գալիս արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ճանաչված համարելու կանխավարկածով: Սրա ապացույց է ՀՀ քաղ. դատ. օր. 126-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի համաձայն՝ դատարանը հայցադիմումի ընդունումը մերժում է, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է արբիտրաժի վճիռ կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում:

Դատարանը կարող է արբիտրաժի վճիռը կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը վերանայել միայն այն դեպքում, երբ վիճող կողմը դրա չեղյալ ճանաչելու պահանջի մասին դիմում ներկայացնի դատարան: Ավելին՝ արբիտրաժի և ՖՀՀ-ի որոշումները չեղյալ համարելու հարաբերությունները կարգավորող քաղաքացիադատավարական նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս (ՔԴՕ գլուխ 45, 50), որ այդ որոշումների վերանայման դեպքում դատարանը ևս չի իրականացնում տվյալ վեճի քննություն, այլ միայն որոշում է տվյալ վեճի՝ արտադատական կարգով լուծման հնարավորությունների, պայմանների ու կարգի օրինականությունը:

⁴ Stiu Davыденко Д., Медиация как примирительная процедура в коммерческих спорах: сущность, принципы, применимость // «Хозяйство и право», 2005, N 5, с. 105-111, N 6, с. 70-80.

Արբիտրաժային կարգով քննության վերաբերյալ համանման կարգավորումներ է նախատեսված նաև ՖՀՀ-ի դեպքում, մասնավորապես՝ ՀՀ ՔԴՕ-ի 49-րդ գլուխը նախատեսում է ֆինանսական համակարգի հաշտարարի կայացրած որոշումը չեղյալ համարելու պահանջով դատարան դիմելու՝ կողմի իրավունքը: Մինչդեռ՝ նույն Օրենսգրքի 39-րդ գլուխը նախատեսում է արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վարույթը: Հետաքրքիր է այն, որ օրենսդիրը հաշտարարության միայն մի ոլորտի՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման չեղյալ համարելու պահանջի հնարավորությունն է նախատեսել կողմի համար՝ անտեսելով մյուս, այդ թվում՝ արտոնագրված հաշտարարների կողմից կայացրած որոշման (հաշտության համաձայնության) չեղյալ ճանաչելու դիմում ներկայացնելու հնարավորությունը:

Կարող ենք գալ այն եզրահանգման, որ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման նկատմամբ դատարանն ունի դրա **հաստատված համարելու կանխավարկած** (քանի դեռ 49-րդ գլխի կանոններով չեղյալ չի ճանաչվել), իսկ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնության նկատմամբ՝ **ճանաչված չհամարվելու կանխավարկած** (քանի դեռ 39-րդ գլխի կանոններով չի հաստատվել):

ՀՀ քաղ. դատ. օր. 126-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և մինևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է արբիտրաժի վճիռ կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում՝ բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի»: Ինչպես տեսնում ենք՝ օրենսդիրը հայցադիմումն ընդունելու մերժման հիմք չի համարել արտադատական կարգով արտոնագրված հաշտարարի միջոցով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնության առկայությունը: Օրենսդրի նման մոտեցումից կարելի է ենթադրել, որ եթե արտոնագրված հաշտարարի մաս-

նակցությամբ արտադատական կարգով կնքվել է հաշտության համաձայնություն, բայց Օրենսգրքի 39-րդ հոդվածի հիման վրա որևէ կողմ չի դիմել այդ հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու, ուրեմն՝ այդ հաշտության համաձայնությունը որևէ ուժ չունի, և կողմը կարող է անխոչընդոտ դիմել դատարան՝ նույն վեճի քննության նպատակով:

Այս դեպքում, կարծում ենք՝ դատարանին տրված արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու լիազորությունը դատարանին օժտում է «նոտարի կարգավիճակ»: Եթե կողմերի միջև, տնօրինչականության սկզբունքի հիման վրա, կա արդեն իսկ արտադատական կարգով, այն էլ արտոնագրված հաշտարարի կողմից կնքված համաձայնությունը, և կողմերը, արտոնագրված հաշտարարին դիմելով, ցույց են տվել իրենց՝ դատարանի դիմելու մտադրության բացակայության մասին, ապա այս դեպքում ինչ իրավական հետևանքներ կառաջացնի կողմերի համար նրանց՝ արդեն իսկ կայացված համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պարագայում:

Կարծում ենք, որ այս դեպքում օրենսդիրը նպատակն արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնության նկատմամբ դատարանի կողմից «իրավաչափության ստուգում» սահմանելն է (ՀՀ քաղ. դատ. օր. 151-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքերի համաձայն): Այս պարագայում էլ նսեմացվում է արտոնագրված հաշտարարների դերը, քանի որ ենթադրվում է, թե արտոնագրված հաշտարարի կնքած հաշտության համաձայնությունն այնքան էլ «որակյալ» չէ՝ ի տարբերություն հաշտարարության մյուս տեսակի՝ ֆինանսական համակարգի հաշտարարի, որի պարագայում կայացված որոշումը ենթակա չէ դատարանի կողմից հաստատման:

Նախկին ՀՀ քաղ. դատ. օր. նույնաբնույթ հարաբերությունները կարգավորող նորմերի (1998թ. ՀՀ քաղ. դատ. օր., հոդված 149.14) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործող ՀՀ ՔԴՕ-ն, արտադատական կարգին մեծ ուշադրություն դարձնելով հանդերձ, գործող Օրենսգրքով որևէ փոփոխություն չի նախատեսել հենց արտոնագրված հաշտարարի կողմից արտադատական կարգով իրականացված

հաշտարարության դերը բարձրացնելու նպատակով:

Արտոնագրված հաշտարարների կողմից հաշտարարության վերջինս՝ որպես ոլորտի մասնագետ, կիրառում է ավելի ճկուն մոտեցում, առավել մանրակրկիտ է ուսումնասիրում վեճը, վեր է հանում կոնկրետ գործով նրբությունները և կենտրոնանում է կողմերի համար առավել կարևորություն ունեցող խնդիրների վրա: Իսկ դատավորը պարտավոր է հետևել ֆորմալ ընթացակարգերի և սովորաբար չունի նեղ մասնագիտացում⁵:

Կարծում ենք, որ գործող ՀՀ ՔԴՕ-ով արտադատական, այդ թվում նաև՝ հաշտարարությամբ վեճերի լուծման վերաբերյալ օրենսդրի նպատակների լույսի ներքո արդարացված կլինեն, բացի ֆինանսական համակարգի հաշտարարից, բարձրացնել նաև արտոնագրված հաշտարարի կողմից արտադատական կարգով իրականացված հաշտարարության դերը: Սրա համաձայն՝ առաջարկում ենք, որ նախ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերի մեջ լրացում կատարվի, և մերժման հիմք հանդիսանա նաև արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը: Սրան համապատասխան՝ փոփոխվի Օրենսգրքի 39-րդ գլուխը և սահմանվի որպես. «Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը չեղյալ կամ խախտված ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ փալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթները»: Այս գլխում կսահմանվեն նորմեր, որոնք կկարգավորեն

հաշտության համաձայնությունը չեղյալ ճանաչելու հիմքերն ու կարգը, խախտման առկայությունն ու դրա համար վրա հասնող պատասխանատվությունն ու դրա ապահովման նպատակով կատարողական թերթ տրամադրելու կարգը: Գլխում պետք է նախատեսվի նաև նորմ, որի համաձայն՝ հաշտության համաձայնության չեղյալ ճանաչվելու դեպքում, վիճող կողմը նույն վեճի քննության համար կարող է դիմել դատարան՝ ընդհանուր կանոններով:

Քննարկված հարցի դեպքում անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ արտոնագրված հաշտարարի արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը տարբերվում է արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ դատաքննության կամ հարկադիր կատարողական փուլում կնքված հաշտության համաձայնությունից, որոնց դեպքում Օրենսգրքը առանձին գլխով նախատեսել է անհրաժեշտ նորմերը (Գլուխ 19, 38): Արտադատական կարգով և դատաքննության, հարկադիր կատարողական փուլում կնքված հաշտության համաձայնությունների միջև տարբերությունը հաշտության համաձայնության կնքման ու հաստատման իրավական հետևանքների միջև է:

Այսպիսով, կարծում ենք՝ վերոգրյալ հետազոտությունն ու ներկայացված առաջարկները կարող են նպաստել քննարկվող ինստիտուտների իրապես նպատակային կարգավորմանը, որը, բացի դատարանների գերծանրաբեռնվածության խնդրից, կլուծի նաև անձի արդար դատաքննության՝ գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովումը:



⁵ St' u Riskin L., Understanding Mediator's Orientations, Strategies and Techniques: A Grid for the Perplexed, 1, Harvard Negotiation Law Review, 1996.

МИЛЕНА САРГСЯН

Магистрант 1 курса Института Права и Политики Российско-Армянского (Славянского) университета по направлению «Корпоративный юрист»

НЕКОТОРЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА ОБЕСПЕЧИТЕЛЬНЫХ МЕР В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Понятие «обеспечительные меры» в гражданском судопроизводстве представляет собой собирательное понятие и включает в себя меры по обеспечению иска и предварительные обеспечительные меры. Применение обеспечительных мер судом, будучи вмешательством в права человека до вынесения решающего дела по существу судебного акта, требует надлежащего мотивирования. Такое требование вытекает из статьи 200 Гражданско-процессуального кодекса Республики Армения (далее по тексту – ГПК РА) (в определении суда обязательно должны быть указаны мотивы, по которым суд пришел к своим выводам), а также из части 2 статьи 131 ГПК РА (если ходатайство о применении меры по обеспечению иска не содержит обоснования относительно наличия основания применения меры по обеспечению иска и указания о мерах по обеспечению иска, то оно не рассматривается судом). Следовательно, суд должен обосновать, почему по конкретному делу нет угрозы невозможности исполнения судебного акта или, наоборот, неприменение обеспечительных мер может привести к указанным последствиям. Между тем, суды зачастую обосновывают удовлетворение ходатайства о применении обеспечения иска одним предложением, ссылаясь лишь на угрозу невозможности исполнения судебного акта в будущем. Например, по делам № ЛԴ/1662/02/18 и № ЛԴ/1247/02/18 суд первой инстанции отметил

следующее: «Суд находит, что ходатайство нужно удовлетворить, так как неприменение таких мер может сделать невозможным или затруднить исполнение судебного акта»¹.

В связи с этим, интересно обратиться к опыту Германии, где институт по обеспечению иска является одним из наиболее древних и поэтому довольно развит. В немецком гражданском процессуальном праве институт обеспечения иска называется институтом предварительной защиты прав. В соответствии с п. 1 §917 Гражданско-процессуального кодекса Федеративной Республики Германия, для применения меры предварительной защиты прав необходимо существование возможности того, что, если данные меры не будут приняты, исполнение будущего судебного решения станет невозможным или затруднительным. При этом истец сам должен доказать обстоятельства, свидетельствующие об угрозе ухудшения имущественного положения ответчика (немецкие процессуалисты считают, что исполнение будущего судебного решения могут затруднить также форс-мажорные обстоятельства). Наличие оснований для принятия мер предварительной защиты прав считается доказанным, если судья убежден в «*преобладающей вероятности*» наличия доказываемых юридических фактов². Применение обеспечительных мер зависит от оценивания судом приведенных истцом доводов

¹ «Ինտելլեկտուալ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ Կարեն Մխիթարյանի թիվ ԼԴ/1662/02/18 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 11.05.2018թ. որոշում. [Электронный ресурс]: URL: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438251119 (дата обращения: 11.09.2019г.).

«Անեկիբ Բանկ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ Կամո Նազինյանի թիվ ԼԴ/1247/02/18 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 05.04.2018թ.-ի որոշում. [Электронный ресурс]: URL: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438250103 (дата обращения: 11.09.2019г.).

² Волченко О.Ю. Доказывание оснований принятия мер по обеспечению иска в гражданском процессуальном праве России и Германии// Труды Института государства и права Российской академии наук № 2/2011.– С. 105.

о невозможности исполнения судебного решения в будущем.

Таким образом, обеспечительные меры должны применяться судом, исходя из особенностей конкретного случая с полным обоснованием необходимости их применения, и суд не должен ограничиваться одним предложением о возможности затруднения исполнения будущего судебного решения.

Предоставление лицу, участвующему в деле, возможности ходатайствовать об обеспечении иска должно сопровождаться определением процессуальных границ реализации данного права, что исходит из принципа правовой определенности. До принятия ГПК РА от 09.02.2018 нельзя было точно определить процессуальное время реализации права на обеспечение иска, потому что частью первой статьи 97 ГПК РА от 17.06.1998 предусматривалось, что суд на любой стадии процесса по ходатайству лица, участвующего в деле, или по своей инициативе мог принять меры по обеспечению иска, если непринятие таких мер сделало бы невозможным или затруднило бы исполнение судебного акта или привело бы к ухудшению состояния имущества, составляющего предмет спора. При этом не уточнялось, о каком суде конкретно идет речь. Сегодня с точки зрения правовой определенности данная проблема уже разрешена: частью первой статьи 128 ГПК РА устанавливается, что меры по обеспечению иска могут применяться только судом первой инстанции. Однако в содержательном смысле такое регулирование, по нашему мнению, является неправильным. Вышестоящие судебные инстанции, пересматривающие дело в апелляционном и кассационном порядке, также должны быть наделены полномочием по применению обеспечительных мер по следующей причине: возможно, что основания применения мер по обеспечению иска (обстоятельства, угрожающие исполнению судебного акта) возникли во время пересмотра судебного акта или истец во время рассмотрения дела судом первой инстанции по определенным причинам не представил соответствующего

ходатайства и желает представить его уже в апелляционном суде. Правосудие будет носить формальный характер, если апелляционный суд будет постоянно отклонять такие ходатайства, а судебные акты останутся неисполненными. Например, в рамках пересмотра судебного решения, вынесенного по гражданскому делу № ԵԱՔԴ/1043/02/10, истец представил Гражданскому апелляционному суду Республики Армения РА ходатайство о применении меры по обеспечению иска. Протокольным определением Гражданского апелляционного суда Республики Армения от 10.01.2014г. ходатайство было отклонено по основанию отсутствия соответствующего полномочия. Впоследствии всё недвижимое имущество ответчика было отчуждено, что существенно воспрепятствовало исполнению судебного акта³. То есть неприменение Гражданским апелляционным судом обеспечительных мер вследствие ограничительного толкования статьи 97 действовавшего в то время ГПК РА привело к нарушению права лица на исполнение вступившего в законную силу судебного акта, лишив возможности восстановления определенных судебным решением прав.

Таким образом, часть первая статьи 128 ГПК РА ограничивает право лица на исполнение вступившего в силу судебного решения, что, в свою очередь, является составляющим конвенционного права на справедливое судебное разбирательство. Поэтому институт обеспечения иска должен действовать в рамках рассмотрения дела как в суде первой инстанции, так и в судах апелляционной и кассационной инстанций.

Одним из проблемных является вопрос уведомления ответчика о примененных обеспечительных мерах. Согласно части 5 статьи 131 ГПК РА, определение суда относительно ходатайства о применении меры по обеспечению иска отправляется представившему ходатайство лицу не позднее чем на следующий день его принятия. При этом нет ни одного положения об уведомлении ответчика. Этот вопрос регулируется Законом Республики Армения «О принудительном исполнении судебных актов».

³ Григорян В.Г. Основные проблемы полномочий апелляционного суда. ЕГУ.– Ереван.: изд. «Айрапет», 2016.– С. 188.

Однако регулирование касается уведомления ответчика о принятии акта о совершении исполнительных действий в рамках уже возбужденного исполнительного производства (статья 28 указанного закона). То есть ответчик после получения копии акта о совершении исполнительных действий должен сам принять меры для ознакомления с определением суда. Конечно, логика законодателя в данном случае ясна: есть риск, что ответчик, узнав о подлежащих применению обеспечительных мерах, может проявить недобросовестное поведение и сделать невозможным исполнение определения суда. Однако считаем, что такой подход не всегда оправдан: нельзя исходить из презумпции недобросовестности ответчика. Реализация ответчиком права на представление ходатайства об изменении избранной обеспечительной меры или же об их отмене существенно затрудняется, так как ответчик должен сам принять меры по ознакомлению с определением суда, что непосредственно сказывается на оперативности его «реакции» на примененные меры. Более того, часто служба принудительного исполнения судебных актов не обеспечивает уведомления ответчика о принятии акта о совершении исполнительных действий, и ответчик впервые узнает о примененных обеспечительных мерах только после фактического обнаружения того, что на его имущество, например, наложен арест. И если ответчик поздно обнаружит, что его имущество находится под арестом, то представление одного из вышеуказанных ходатайств будет запоздалым. В связи с этим, более справедливым нам представляется регулирование, предусмотренное ГПК РФ, согласно статье 142 которого определение суда об обеспечении иска приводится в исполнение немедленно, а на основании определения суда об обеспечении иска суд выдает истцу исполнительный лист и направляет ответчику копию определения суда. Сроки направления копии определения ответчику законом не определены, что является существ-

ственным пробелом, но ответчик, во всяком случае, информируется. Между тем, нет единого доктринального подхода к вопросу извещения судом ответчика о примененных обеспечительных мерах. Так, например, Огигалин Ю.А. считает, что «ответчик вообще должен иметь право на своевременное *извещение о рассмотрении заявления* истца об обеспечении иска, так как это соответствует дополнительному укреплению процессуальных гарантий прав и свобод и законных интересов личности»⁴. Другие считают, что Огигалин Ю.А. рассчитывает на «дисциплинированного» ответчика, однако во многих случаях ответчик умышленно затягивает процесс, избегая для себя материальных потерь⁵.

Считаем, что участие ответчика в рассмотрении судом заявления об обеспечении иска не является целесообразным в силу риска недобросовестных действий ответчика, но последний хотя бы должен быть уведомлен об уже примененных судом мерах посредством направления ему копии определения суда. Учитывая законодательное требование о «немедленном» исполнении определения суда о применении меры по обеспечению иска (статья 132 ГПК РА), а также сформировавшуюся правоприменительную практику, считаем, что отправление определения ответчику может быть осуществлено в течение пяти дней с момента вынесения такого определения. Учитывая необходимость оперативного разрешения вопроса о применении обеспечительных мер и их неотлагательную природу, перейдем к рассмотрению проблемы их исполнения. В соответствии с законодательством Республики Армения, определение суда, предусматривающее применение обеспечительных мер, подлежит исполнению немедленно, в порядке, предусмотренном Законом Республики Армения «О принудительном исполнении судебных актов». Однако недопустимо использование слова «немедленно» без конкретного обозначения временных границ

⁴ Огигалин Ю. А. Средства и способы обеспечения индивидуальной свободы личности в гражданском материальном и процессуальном праве: Учеб. пособие.– Тверь, 1991.– С. 23

⁵ Исаенкова О.В., Демичев А.А., Соловьева Т.В., Ткачева Н.Н. Иск в гражданском судопроизводстве.– М.: Волтерс Клувер, 2009.– С. 135.

исполнения определения суда. Закон Республики Армения «О принудительном исполнении судебных актов» не определил точных сроков исполнения определения суда о применении меры по обеспечению иска, установив лишь, что для совершения предусмотренных законом или иными правовыми актами исполнительных действий могут быть установлены сроки немедленного исполнения (часть 1 статьи 34 указанного закона). Как отмечает Опалев Р.О.: «В данном случае мы имеем дело с «неточным понятием процессуального права»⁶. В связи с этим, предлагаем внести дополнения в статью 34 Закона Республики Армения «О принудительном исполнении судебных актов», предусматривающие сроки исполнения определения суда о применении меры по обеспечению иска.

Одним из нововведений ГПК РА является предоставление суду полномочия в определенных законом случаях *отправлять определение о применении меры по обеспечению иска* не службе принудительного исполнения судебных актов, а самому лицу, против которого была применена та или иная мера, если примененная обеспечительная мера связана с запретом совершения определенных действий. Напротив, во всех тех случаях, когда примененная судом мера связана с исполнением определенных действий, адресатом является служба принудительного исполнения судебных актов, соответственно, позитивная обязанность совершения соответствующих действий возлагается на службу принудительного исполнения судебных актов. Важно отметить, что в законодательстве Республики Армения на данный момент существует определенное несоответствие между некоторыми нормами, регулирующими вопросы исполнения определения суда о применении меры по обеспечению иска.

Так, согласно статье 125 ГПК РА, общий срок для отправления лицам, участвующим в деле, определения о принятии искового заявления к производству составляет три дня со дня принятия определения. Но в случаях, когда истец вместе с исковым заявлением

представляет также ходатайство о применении меры по обеспечению иска и суд удовлетворяет это ходатайство, определение о принятии искового заявления к производству, само исковое заявление и копии приложенных к нему документов отправляются ответчику и другим лицам, участвующим в деле, в течение трех дней после исполнения определения суда об обеспечении иска. При этом закон не уточняет, должно ли быть вынесено **одно определение о принятии искового заявления к производству, содержащее также удовлетворение ходатайства о применении меры по обеспечению иска**, или два отдельных определения по каждому вопросу. На практике суды в случае представления вместе с исковым заявлением также ходатайства о применении меры по обеспечению иска зачастую выносят два отдельных определения по каждому вопросу. Однако считаем, что законодатель, предусмотрев такую норму, имел в виду принятие одного определения, содержащего ответы на оба вопроса, так как продление срока отправления ответчику определения о принятии искового заявления к производству может быть вызвано только необходимостью временно скрыть от него информацию о применении обеспечения иска для того, чтобы предотвратить его возможное недобросовестное поведение. В противном случае, допуская принятие отдельных определений, мы лишаем смысла рассматриваемую норму: если принято отдельное определение о применении меры по обеспечению иска, а, по правилам ГПК РА, ответчик и так не получает такого определения, то зачем лишать его возможности ознакомиться с определением о принятии искового заявления к производству в общий трехдневный срок? Кроме того, если будет принято одно определение о принятии искового заявления к производству, одновременно содержащее и удовлетворение ходатайства о применении меры по обеспечению иска, а примененная мера будет заключаться в запрещении ответчику совершать определенные действия, то ответчик, получив определение

⁶ Опалев Р.О. Оценочные понятия в арбитражном гражданском процессуальном праве: Серия «Гражданский и арбитражный процесс: современный взгляд». – М: Волтерс Клувер, 2008. – С. 60.

суда в соответствии с частью 3 статьи 132 ГПК РА для исполнения, сразу же проинформируется и о принятии искового заявления к производству, что, в принципе, рационально, однако противоречит положению о том, что определение суда о принятии иска к производству отправляется ответчику в течение 3 дней после исполнения. Иначе говоря, если ответчик будет сам исполнять определение, то он автоматически узнает и о наличии в производстве суда искового заявления. Поэтому считаем, что рассматриваемая норма применима только в тех случаях, когда адресатом возложенной определением суда обязанности является не ответчик, а служба принудительного исполнения судебных актов. В связи с этим предлагаем изложить часть 3 статьи 125 ГПК РА в следующей редакции:

«3. В случае, когда истец вместе с исковым заявлением представляет также ходатайство о применении меры по обеспечению иска и суд удовлетворяет это ходатайство определением о принятии искового заявления к производству, определение о принятии искового заявления к производству, исковое заявление и копии приложенных к нему документов отправляются ответчику и другим лицам, участвующим в деле, в течение трех дней после исполнения определения суда об обеспечении иска, за исключением случаев, когда в порядке, предусмотренном частью 3 статьи 132 настоящего кодекса, определение о принятии искового заявления к производству, содержащее удовлетворение ходатайства о применении меры по обеспечению иска, отправляется непосредственно ответчику».

Такое изложение не лишает суда возможности вынести два отдельных определения: соответственно, о принятии искового заявления к производству и об удовлетворении ходатайства о применении меры по обеспечению иска. В таком случае в части определения о принятии

искового заявления к производству будет действовать общий срок, предусмотренный частью 2 статьи 125 ГПК РА.

Механизм обеспечения иска порождает многочисленные проблемы в связи с тем, что представление заявления (ходатайства) о применении обеспечения иска и его рассмотрение судом представляют собой процедуру ex-parte. Необходимость оперативного разрешения вопроса об обеспечении иска лишает возможности лицо, против которого было заявлено ходатайство, высказать свою правовую позицию, так как судья при разрешении данного вопроса основывается только на заявлении истца. Следовательно, применение обеспечения иска создает ситуацию, в которой правовая позиция одной из сторон изначально не учитывается. Данная проблема еще более усугубляется тем фактом, что применение обеспечения иска является вмешательством в права человека до вынесения решающего дело по существу судебного акта. Например, это часто ограничивает право владения (Статья 1 Протокола N 1 к Европейской конвенции о защите прав человека и основных свобод).⁷ Между тем, Европейский суд по правам человека по делу Домбо Бехеера против Нидерландов сформулировал правовую позицию, согласно которой, в судебных процессах, где сталкиваются противоположные частные интересы, принцип равноправия сторон предполагает, что каждая сторона должна иметь разумную возможность представлять свое дело в условиях, **которые не ставят ее в существенно неблагоприятное положение по сравнению с противоположной стороной**, т. е. в условиях, в которых ни одна из сторон не имеет явного преимущества⁸.

Из вышеуказанного следует, что наиболее важным и сложным вопросом при рассмотрении вопроса об обеспечении иска является именно предварительное оценивание, которое судья должен произвести для удовлетворения

⁷ M. Aichinger, W. Petritz, El. Reich Interim measures and the applicability of article 6 . [Электронный ресурс]: URL: http://www.ejtn.eu/Documents/Themis%202012/Written%20paper%20Lisbon/Written_paper_%20Austria_1_%20Interpretation_and_application_of_article_5_and_6_of_the_ECHR%20.pdf (дата обращения: 11.09.2019г.).

⁸ Dombó Beheer B.V. v. Netherlands. Постановление Европейского суда по правам человека от 27 октября 1993 г. . [Электронный ресурс]: URL: http://european-court.eu/uploads/ECHR_Dombó_Beheer_B_V_v_the_Netherlands_27_10_1993.pdf (дата обращения: 11.09.2019г.).

ходатайства о применении меры по обеспечению иска. Здесь мы должны выделить:

- необходимость наличия следующих условий: **fumus boni iuris** («вероятность успеха по существу дела»), **безотлагательность рассмотрения вопроса** об обеспечении иска и **вред**, который может быть причинен заявителю в случае непринятия соответствующих мер;
- необходимость **баланси́ровать конфликтующие интересы**, отдавая при этом предпочтение некоторым из них вместо других⁹.

В контексте необходимости обеспечения справедливого баланса между конфликтующими интересами, стоит обратить внимание на еще один вопрос, связанный с видами обеспечительных мер, наилучшим образом отвечающих требованию соблюдения баланса между интересами. Речь идет **о судебном секвестре как об обеспечительной мере**. Авторитетные юридические справочники термином секвестр (лат. Sequestrum) обозначают нейтрального посредника, доверенного лица сторон, которому они сообща передали на хранение спорную вещь¹⁰, или «передачу имущества третьему лицу на хранение до разрешения спора между двумя другими лицами о праве на это имущество»¹¹.

Начнем с того, что нормы, регулирующие отношения относительно передачи спорной вещи на хранение в порядке секвестра, закреплены в Гражданском кодексе РА (далее по тексту – ГК РА). Так, согласно статье 853 ГК РА, вещь, которая является предметом спора между двумя или несколькими лицами, может быть передана на хранение в порядке секвестра по решению суда (судебный секвестр) с целью ее дальнейшего возвращения лицу, которому она будет присуждена по решению суда. При этом отмечается, что хранителем в таком случае может быть как назначенное судом лицо, так и

лицо, которого стороны выбирают по своему усмотрению. Возникает вопрос, что такое судебный секвестр, если не обеспечительная мера? Ведь к хранению в порядке судебного секвестра лица обращаются тогда, когда между ними возник спор о праве на вещь и им необходимо, чтобы суд принял какие-то предварительные временные меры до окончательного разрешения самого спора. Судебный секвестр служит гарантией, что вещь не будет утрачена одной из сторон до окончательного разрешения спора судом. Кроме того, считаем, что судебный секвестр может служить как мерой по обеспечению иска, так и предварительной мерой защиты прав. Иначе говоря, стороны могут обратиться в суд с целью передачи вещи на хранение в порядке судебного секвестра как до возбуждения иска, так и после.

По этому поводу внимания заслуживает правовая практика Российской Федерации, где судебный секвестр применяется судами именно в качестве обеспечительной меры. Например, по делу №33-5235/2013 судья Сорновского районного суда г. Н. Новгорода 16 апреля 2013 года вынес определение о применении обеспечительных мер в виде судебного секвестра. 18 июня 2013 года Судебная коллегия по гражданским делам Нижегородского областного суда, проанализировав статью 926 Гражданского кодекса Российской Федерации, вынесла апелляционное определение об оставлении без изменения определения судьи Сорновского районного суда¹². Такой правовой позиции придерживается также Верховный суд Российской Федерации. Согласно пункту 33 Постановления Пленума Верховного Суда РФ №10, Пленума Верховного Арбитражного Суда РФ №22 от 29 апреля 2010 года «О некоторых вопросах, возникающих в судебной практике при разрешении споров, связанных с защитой права собственности и других вещных прав», в

⁹ Ana María Chocrón Giráldez. Interim measures and EU legislation/e-Revista Internacional de la Protección Social, ISSN 2445-3269. 2016, Vol. I, N^o1, p. 139.

¹⁰ Бартошек М. Римское право: понятия, термины, определения. М.: Юрид. лит., 1989. С. 292.

¹¹ Тихомирова Л. В., Тихомиров М. Ю. Юридическая энциклопедия. М.: Юринформцентр, 2001., С. 406.

¹² Апелляционное определение Судебной коллегии по гражданским делам Нижегородского областного суда от 18.06.2013г. по делу № 33-5235/2013 [Электронный ресурс]: URL: <https://sudact.ru/regular/doc/ZRkjGDibJ8Lz/> (дата обращения: 11.09.2019г.).

целях обеспечения нахождения имущества во владении ответчика в период судебного спора о праве на это имущество, суд по ходатайству истца может принять обеспечительные меры, в частности, запретить ответчику распоряжаться и/или пользоваться спорным имуществом (арест), запретить государственному регистратору изменять запись в ЕГРП о праве на это имущество, передать спорное имущество на хранение другому лицу в соответствии с пунктом 2 статьи 926 ГК РФ (судебный секвестр)¹³.

Предусмотренная статьей 853 ГК РА правовая норма о возможности передачи спорной вещи на хранение в порядке судебного секвестра является «мертвой», так как нет случаев ее претворения в жизнь в правоприменительной практике. Для разрешения данной проблемы предлагаем закрепить судебный секвестр в качестве обеспечительной меры в ГПК РА и исключить из ГК РА соответствующую правовую норму.

Итак, из вышеизложенного следует, что обеспечительные меры выступают фактором эффективного судопроизводства, поэтому суд обязан оценить степень необходимости применения обеспечительных мер по конкретному делу и вынести определение с полным обоснованием наличия или отсутствия оснований их применения.

Возможность применения обеспечительных мер при рассмотрении дела также в судах апелляционной и кассационной инстанций призвана гарантировать право лица на исполнение вступившего в законную силу

судебного акта, что, в свою очередь, является составляющим конвенционного права на справедливое судебное разбирательство.

Необходимость уведомления ответчика о примененных обеспечительных мерах после исполнения определения суда об обеспечении иска исходит из принципа равноправия сторон, который не допускает подхода ко всем ответчикам как к «недобросовестным».

Неотлагательная природа института обеспечительных мер требует законодательного определения сроков исполнения определения суда об обеспечении иска, однако данный вопрос в гражданско-процессуальном законодательстве Республике Армения не урегулирован.

Для достижения целей гражданского судопроизводства, а также обеспечения защиты и восстановления нарушенных или оспариваемых прав лиц необходимо устранить некоторые несоответствия между правовыми нормами гражданско-процессуального законодательства Республики Армения, регулируемыми вопросы исполнения определения суда о применении меры по обеспечению иска.

В контексте достижения баланса между конфликтующими интересами при разрешении вопроса о применении обеспечительных мер важно закрепление судебного секвестра как обеспечительной меры в гражданско-процессуальном законодательстве и исключение правовой нормы о судебном секвестре из ГК РА. При этом можно заимствовать опыт других стран, особенно Франции, где судебный секвестр получил широкое применение.



¹³ Постановление Пленума Верховного Суда Российской Федерации и Пленума Высшего Арбитражного Суда Российской Федерации от 29 апреля 2010 г. N 10/22 г. Москва «О некоторых вопросах, возникающих в судебной практике при разрешении споров, связанных с защитой права собственности и других вещных прав»// Российская газета.– 21.05.2010 г.– №109(5188).

ՌՈՋԱ ԱՐԱՋՅԱԼ

ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի հայցորդ

**ԺՈՂՈՎՐԴԱԿՆԵՐՆԵՐԻ ՍԿՋԻՆԵՔԸ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ
ԱՆՄԻՋԱԿԱՆ ԶԵՎԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Մեր կարծիքով՝ ժողովրդաիշխանության աղճատմանը նպաստող դերակատարում ունի ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը՝ սահմանափակվելով սոսկ ժողովրդաիշխանության իրականացման երկու ձևի ընդհանուր ամրագրմամբ: Այս ենթադրությունը հաստատելու համար անհրաժեշտ է հետազոտությամբ պարզել, թե այլ երկրների սահմանադրական պրակտիկայում իրավաբանական ինչ բանաձևով է ամրագրված ժողովրդաիշխանության սկզբունքը, արդյոք այդ ձևակերպումն ունի նշանակություն ժողովրդաիշխանության կայացման համար: Առաջին հիմնահարցի հետազոտումից հետո հնարավոր է պարզել նաև շատ կարևոր նշանակություն ունեցող երկրորդ խնդիրը. ո՞ր երկրից (կամ երկրներից) է փոխառված ժողովրդաիշխանության մեր սահմանադրական մոդելը և արդյոք այդ երկրի պատմաքաղաքական պայմանները և առանձնահատկությունները նման են ՀՀ-ին:

Առաջին հարցի հետազոտման աղբյուրը մի շարք երկրների սահմանադրություններն են: Երկրների ընտրության հարցում հետևել ենք հանրային կառավարման տեսակների դասակարգմանը՝ կապիտալիստական (ազատական), սոցիալիստական և մահմեդական¹: ՀՀ հանրային կառավարման ու պետաիրավական համակարգը կարող ենք համարել անցումային փուլում գտնվող համակարգ, որը նպատակամղված է ազատական, ժողովրդավարական, իրավական հասարակության կայացմանը:

Հետևաբար՝ առաջին հերթին կանգ կառնենք միայն հետխորհրդային հանրապետությունների՝ որպես ՀՀ նմանությամբ անցումային պետությունների² սահմանադրությունների վերլուծության վրա, որոնք դասվում են ազատական տիպի մեջ:

ՌԴ 1993 թ. Սահմանադրության հոդ. 3-ը սահմանում է. «1. ՌԴ-ում ինքնիշխանության կրողը և իշխանության միակ աղբյուրը նրա բազմազգ ժողովուրդն է: 2. Ժողովուրդն իրականացնում է իր իշխանությունն անմիջականորեն, ինչպես նաև պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: 3. Ժողովրդի իշխանության արտահայտման բարձրագույն անմիջական ձևեր են հանրաքվեն և ազատ ընտրությունները»³: Հոդվածի հիմքում ընկած է ազատական ժողովրդաիշխանության գաղափարախոսությունը, սակայն այդ իշխանության կենսագործման հարցում ՀՀ և ՌԴ Սահմանադրությունների ձևակերպումների միջև կան տարբերություններ, որոնք բխում են համեմատական ձևական-իրավական ու տրամաբանական վերլուծությունից: ՀՀ Սահմանադրությունը, որում մեկ ձևակերպման մեջ միավորված են ՌԴ Սահմանադրության 3 հոդ. 2-րդ և 3-րդ մասերի համանման դրույթները, սահմանափակում է ժողովրդաիշխանությունը միայն երկու ձևով՝ հանրաքվե և ընտրություններ: ՌԴ Սահմանադրությունից տրամաբանորեն բխում է, որ կան անմիջական կառավարման ինչ-որ ձևեր, որոն-

¹ Տե՛ս Чиркин В.Е., Опыт зарубежного управления: государственное и муниципальное управление: М.: Юристъ, 2006, 27-30:
² Հետաքրքիր հետազոտական ուղղություն կլիներ ներկա սոցիալիստական երկրներում իշխանության պատկանելիության սահմանադրական նորմերի սկզբունքների ուսումնասիրությունը, սակայն այդ նորմերի հիմնքում ընկած են հանրային իշխանության կազմակերպման և գործունեության լրիվ այլ սկզբունքներ, արևմտյան ժողովրդաիշխանությանը հակասող հանրային-իշխանական կառավարման կարգեր, հետևաբար՝ այդ հարցին չենք անդրադառնալ:
³ Տե՛ս Конституция РФ. //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристъ, 1999, էջ 338:

● ՕՐԻՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

ցից հանրաքվեն և ընտրությունները բարձրագույնն են, հետևաբար՝ օրենքները կարող են նախատեսել այլ ձևեր: Եթե Սահմանադրության մեկնաբանողը և կիրառողը (օրենսդիր, իրավակիրառ) չունի իրավաբանական, լայն, ազատական մտածողություն, ապա նա ՀՀ Սահմանադրության դրույթները կդիտարկի սահմանափակող կարգավորում, ինչը և տեղի ունեցավ Հայաստանում՝ Սահմանադրության ընդունումից հետո: Սակայն ՌԴ սահմանադրագիտությունն իրենց Սահմանադրության 3-րդ հոդ. չի դիտարկում սահմանափակող⁴, իսկ եթե անգամ դիտարկում է, ապա այն պատճառով, որ ահռելի տարածքով պետության մեջ հնարավոր չէ բոլոր ձևերի կիրառումը⁵: Բացի այդ՝ այս գնահատականը հարաբերական է, որովհետև դաշնության սուբյեկտների մակարդակով իրավիճակն այլ է: ՌԴ սուբյեկտների և տեղական ինքնակառավարման մակարդակներով սահմանվել և կիրառվում են անմիջական ժողովրդաիշխանության բազմաթիվ ձևեր: ՌԴ-ում այդ ուղղությամբ տարվում է հատուկ

քաղաքականություն⁶: Ժողովրդաիշխանության կառուցակարգերի սահմանադրական կարգավորման հարցում մի շարք երկրների սահմանադրություններ ժողովրդի իշխանության իրականացման կառուցակարգը տրոհում են երկու մասի, ճանաչում այդ իշխանության անմիջական տեսակը՝ առանց դրա կոնկրետ ձևերի թվարկման կամ էլ դրանց շրջանակի սահմանադրական սահմանափակման: Հետևաբար՝ օրենքը կարող է նախատեսել ցանկացած ձև: Այդպիսին են Թուրքմենստանի⁷, Ուկրաինայի⁸, Լիտվայի⁹, ՌԴ, Վրաստանի¹⁰ սահմանադրությունները: Բելառուսի Սահմանադրության 3-րդ հոդ. սահմանում է, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն, ներկայացուցչական և այլ մարմինների միջոցով՝ Սահմանադրությամբ սահմանված ձևերով ու շրջանակներում: Այս ձևակերպումը կարելի է դիտարկել սահմանափակող կարգավորում, որովհետև, ճանաչելով ժողովրդի իշխանության իրականացման երկու կառուցակարգերը, անմիջականը սահմանափակում է

⁴ Տե՛ս Баглай М.Б., Габричидзе Б.Н., Конституционное право Российской Федерации. М., Издател. группа ИНФРА.М-КОДЕКС, 1996, с. 104-106:

⁵ Դեռևս խորհրդային շրջանում պետականագիտությունն այդ գործոնով էր բացատրում անմիջական ձևերի չկիրառումը (տե՛ս Шахназаров Г.Х. Социалистическая демократия. Проблемы и перспективы. Автореф. дис. д-ра юрид. Наук.– М, 1968, էջ 19): Արդի շրջանում այս տեսակետը պաշտպանում են Ա. Բեզուգովը և Ս. Սոլդատովը, ովքեր ժողովրդաիշխանության ձևերի սահմանափակվածությունը դաշնային մակարդակով համարում են որոշումների ընդունման ոչ օպերատիվ, հետևաբար՝ անարդյունավետ կարգ (տե՛ս А.А. Безуглов, С.А. Солдатов, Конституционное право России. В трех томах, Том 1: М.; 2001, էջ 226-227):

⁶ Այդ ձևերից են քաղաքացիական օրենսդրական (իրավաստեղծ) նախաձեռնությունը, պաշտոնատար անձանց հետ կանչելը, դիմումները (հանրագրերը), բնակիչների ժողովները, կոնֆերանսները, հանրային քննարկումները և այլն (այդ մասին մանրամասն տե՛ս Чеботарева Г.Н., Иванов К.А. Общественные инициативы как компонент гражданского общества /Монография. Тюмень: Вектор Бук, 2015.– 136 էջ:

⁷ «Թուրքմենստանի ժողովուրդն իրականացնում է իր իշխանությունն անմիջականորեն կամ ներկայացուցչական մարմինների միջոցով» (տե՛ս Конституция Туркменистана //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 412): Թուրքմենստանում կային տեղական և համապետական հանրաքվեները, որոնք նախաձեռնելու սուբյեկտ էին ընտրողների խմբերը (տե՛ս նույն տեղը, էջ 432):

⁸ «Ժողովուրդն իրականացնում է իշխանությունն անմիջականորեն ու տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով» (տե՛ս Конституция Республики Украины //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 474): Ուկրաինայի Սահմանադրության հոդված 65-ն ամրագրում էր, որ ժողովրդական կամահայտնությունն իրականացվում է ընտրությունների, հանրաքվեի և անմիջական ժողովրդաիշխանության այլ ձևերի միջոցով (տե՛ս նույն տեղը, էջ 492): Հանրաքվեն կարող էր նախաձեռնվել նաև 3 մլն քաղաքացիների պահանջի հիմամբ վրա:

⁹ «Բարձրագույն ինքնիշխան կամքը ժողովուրդն իրականացնում է անմիջականորեն կամ ժողովրդավարական ճանապարհով ընտրված իր ներկայացուցիչների միջոցով» (տե՛ս Конституция Литовской Республики //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 554):

¹⁰ Վրաստանի 1995 թ. Սահմանադրության 5 հոդ. 2-րդ կետը սահմանում է, որ ժողովուրդն իրականացնում է իր իշխանությունը հանրաքվեի, ինչպես նաև անմիջական ժողովրդաիշխանության այլ ձևերի ու իր ներկայացուցիչների միջոցով (տե՛ս Конституция Грузии //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 160): Սահմանադրության հետագա հոդվածներում ամրագրվում էին ժողովրդական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը (30 հազար ընտրող), այդ թվում՝ Սահմանադրությունը փոխելու հանրաքվեի ժողովրդական նախաձեռնության իրավունքը:

«Սահմանադրությամբ սահմանված ձևերով ու շրջանակներով»: Այսպիսով՝ Բելառուսի Սահմանադրությունն անմիջական ժողովրդաիշխանության ձևերը դնում է սահմանադրական շրջանակի մեջ: Սակայն, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 1995 թ. և 2005 թ. խմբագրությունների, բացի անմիջական երկու ձևի՝ ընտրությունների և հանրաքվեի կարգավորումից¹¹, ամրագրում է մի շարք այլ ձևեր. ա) պետական և հասարակական հարցերի քննարկումները հանրապետական և տեղական ժողովներում, բ) կոլեկտիվ դիմումներ ներկայացնելու իրավունք, գ) պատգամավորներին և հանրապետության խորհրդի անդամներին հետ կանչելու ինստիտուտները, դ) օրենսդրական նախաձեռնության իրավունքը (50 հազար ստորագրությամբ), ե) համապետական և տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքը¹²:

Մոլդովայի 1994 թ. Սահմանադրության հոդ. 2-ի (Ինքնիշխանությունը և պետական իշխանությունը) 1-ին մասում սահմանվում էր, որ. «Ազգային ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին, որը դա իրականացնում է անմիջականորեն և իր ներկայացուցչական մարմինների օգնությամբ՝ Սահմանադրությամբ սահմանված ձևերով»¹³: Այս ձևակերպումից բխում է, որ Սահմանադրությունը հաջորդող դրույթներում կարող է նախատեսել անմիջական ժողովրդաիշխանության տարաբնույթ ձևեր և դեռ 1999 թ. դրությամբ սահմանում էր հանրաքվեն, ընտրությունները, ժողովրդական օրենսդրական սահմանադրական նախաձեռնությունը¹⁴:

Բելառուսի և Մոլդովայի Սահմանադրությունների վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ այս երկրները անմիջական ժողովրդաիշխանության և դրա իրացման ձևերի կարգավորման տեսանկյունից կարելի է

առանձնացնել որպես ինքնուրույն խմբի երկրներ, որոնց սահմանադրություններն աչքի են ընկնում հետևյալով՝ ճանաչում են անմիջական ժողովրդաիշխանությունը, չեն սահմանափակում դրա ձևերի շրջանակը, միաժամանակ ամրագրում անմիջական ժողովրդաիշխանության մի շարք կարևոր ձևեր՝ նպաստելով դրա կայացմանը և կանխելով օրենսդրի կողմից հայեցողական չկարգավորման հնարավորությունը: Այս խմբին կարելի է վերագրել նաև ՌԴ-ի սահմանադրական կարգավորումը՝ հիմք ընդունելով ոչ թե դաշնային Սահմանադրությունը, այլ՝ դաշնության սուբյեկտների օրենսդրությունը: Այս մոդելն ամենաարդյունավետն է, հատկապես՝ անցումային երկրների համար: Ցավոք, ՀՀ Սահմանադրության հոդված 2-ը չի համապատասխանում այդ չափանիշներին:

Ադրբեջանի Սահմանադրության հոդված 2-ը (ժողովրդի ինքնիշխանությունը) իր շարադրման տեխնիկայի և օգտագործված եզրույթների տեսանկյունից տարբերվում է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածից, սակայն իր իրավական իմաստով ունի նույն թերությունները: Ճանաչելով ժողովրդին ինքնիշխան՝ հոդվածում ամրագրվում է իշխանության իրականացման երկու ձև՝ հանրաքվե, ընտրություններ¹⁵: Ձևական-իրավաբանական նույն իմաստ ունեն նաև Ղազախստանի 1995 թ. Սահմանադրության համապատասխան դրույթները¹⁶: Դա չի նախատեսում ժողովրդաիշխան որևէ այլ ձև՝ բացի ընտրություններից և հանրաքվեից:

Ուզբեկստանի 1992 թ. Սահմանադրությունը, սահմանելով, որ ժողովուրդը համարվում է պետական իշխանության աղբյուր, ամրագրում է դրա իրականացման երկու ընդհանուր ձևերը՝ ընտրությունները և հանրաքվեն, ինչպես նաև համաժողովրդական քննարկումը¹⁷:

¹¹ Стѝи Конституция Республики Беларусь //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 118, 131-134:

¹² Стѝи նույն տեղում, հոդվածներ 37, 72, 74, 75, 97, 99:

¹³ Стѝи Конституция Республики Молдова //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 290:

¹⁴ Стѝи Михалева М.А., Конституционное право зарубежных стран СНГ: М., Юристь, 1998, էջ 114 (352):

¹⁵ Стѝи Конституция Республики Азербайджан //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 24:

¹⁶ Стѝи Конституция Республики Казахстан //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 202:

¹⁷ Стѝи Конституция Республики Узбекистан //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 441:

Լատվիայի Սահմանադրությունը չի կարգավորում ժողովրդահիշխանության սկզբունքն այն իրավական տեխնիկայով ու եզրույթներով, ինչպես նաև հայեցակարգով, ինչ հետխորհրդային այլ հանրապետությունների սահմանադրությունները, որովհետև Լատվիան գործողության մեջ է դրել իր 1922 թ. փետրվարի 22-ի Սահմանադրությունը¹⁸: Ընդհանուր դրույթների հոդ. 2-ը սահմանում է, որ Լատվիա պետության մեջ ինքնիշխանությունը պատկանում է լատվիացի ժողովրդին: Սահմանադրությունը նախատեսում է ժողովրդական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտը, այդ թվում՝ սահմանադրական: Ստացվում է, որ Լատվիայում ժողովրդահիշխանության ձևերն են ընտրությունը և ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունը:

Էստոնիայի Սահմանադրության 3-րդ գլուխը, որ վերնագրված է «Ժողովուրդը», սահմանում է, որ գերագույն պետական իշխանությունը ժողովուրդն իրականացնում է ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների միջոցով՝ 1) պետական ժողովի ընտրությունների միջոցով, 2) հանրաքվեի ճանապարհով¹⁹: Սահմանադրությամբ սահմանված է. հանրաքվեն կարող են նախաձեռնել միայն պետական մարմինները:

Այսպիսով՝ Ադրբեջանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Էստոնիան, Լատվիան իրենց սահմանադրություններով անմիջական ժողովրդահիշխանության կարգավորման չափանիշով կարելի է դասակարգել մի խմբում, քանի որ սահմանադրական ձևակերպումները շարադրված են անմիջական ժողովրդահիշխանության ձևերի սահմանափակմամբ, որում ներառվում են ընտրություններ և հանրաքվե, իսկ վերջինս կարող են նախաձեռնել միայն պետական մարմինները; Բացի այդ՝ դրա հիմնադրույթները գոնե մասամբ կոնկրետացված չեն սահմանադրություններով: Ակնհայտ է, որ այս խմբի

սահմանադրությունները ժողովրդավարականությամբ աչքի չեն ընկնում:

Կարող ենք եզրակացնել, որ Հայաստանը հարում է այս խմբի երկրներին: Պարզվում է, որ Հայաստանը ժողովրդահիշխանության սահմանադրական կարգավորման ձևակերպման մոդելն ընդօրինակել է (որովհետև դրանց մեծ մասը Սահմանադրությունն ընդունել է ավելի վաղ) ոչ այնքան ժողովրդավարական համբավ ունեցող երկրներից: Հարց է առաջանում, թե նախ ինչն է տվյալ երկրներում խնդրի կարգավորման սահմանափակող եղանակի հակաժողովրդավարական ոճը, և արդյոք նմանություն կա՞ այդ երկրների այդ արդյունքի պատճառների ու ՀՀ արդյունքների ու պատճառների միջև:

Մինչ այս հարցադրմանը պատասխանել՝ պետք է նկատի ունենալ, որ արևմտաեվրոպական մի շարք երկրների սահմանադրությունները ժողովրդահիշխանության սկզբունքի և դրա իրականացման կառուցակարգերի ու ձևերի սահմանադրական շրջանակի տեսանկյունից ուսումնասիրելը հարաբերական նշանակություն ունի, որովհետև սրանք (ի տարբերություն հետխորհրդայինների) հիմնականում XX դարի երկրորդ կեսերի Սահմանադրություններ են, որոնք շարադրված են այն ժամանակվա իրավական տեխնիկայի կանոններին համապատասխան: XX դարի կեսերին ընդունված արևմտյան սահմանադրություններին բնութագրական է ժողովրդի կամ ազգի ինքնիշխանության սկզբունքի ընդհանուր ամրագրումը, «ամբողջ իշխանությունը ելնում է ժողովրդից կամ ազգից» ձևակերպման օգտագործմամբ²⁰ առանց այդ ընդհանուր իրավաբանական ձևակերպման մանրամասնեցման: Դրանցից ոչ բոլորում է, որ հնարավոր է հանդիպել ժողովրդահիշխանությանը նվիրված հատուկ հոդվածի, երբեմն էլ՝ նույնիսկ դրույթների²¹: Օրինակ՝ Շվեյցարիայի գործող Սահմանադրության (ընդհանուր

¹⁸ S՞նu Конституция Латвийской Республики //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 534: Այդ Սահմանադրությունը փոփոխվել և լրացվել է 1933, 1994 և 1996 թթ.: Միաժամանակ՝ Լատվիայի Սահմանադրության բաղկացուցիչ մասն է «Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների մասին» սահմանադրական օրենքը (տե՛ս նույն տեղը, էջ 543):

¹⁹ S՞նu Конституция Эстонской Республики //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.– М.: Юристь, 1999, էջ 610:

²⁰ S՞նu Конституционное право зарубежных стран /Под общей ред. М.В. Баглая, Ю.И. Лейбо и Л.М. Энтина.– 2-е изд., перераб.– М.: Норма, 2005. с. 78 (1056):

²¹ S՞նu Федеральная Конституция Швейцарской конфедерации принятой в 1998 г. //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.– М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 93-95:

դրույթներ) բաժնի 6 հոդվածներից ոչ մեկը չի վերաբերում ժողովրդաիշխանությանը՝ չնայած դրանց մեծագույն մասը ժողովրդավարական սահմանադրական սկզբունքներ են²²: Սակայն կա գլուխ՝ նվիրված ժողովրդաիշխանության երկու կարևորագույն ձևերի՝ ժողովրդական օրենսդրական նախաձեռնության ու հանրաքվեի կանոնակարգմանը, և սահմանում է դրանց մի քանի տեսակ՝ լայն ժողովրդավարական հիմքերով: Պետք է նկատի ունենալ՝ ժողովրդավարական ընտրությունների ինստիտուտը Շվեյցարիայի քաղաքական համակարգի հիմնաքարերից է: Բացի այդ՝ արդեն ձևավորված դարավոր պատմություն ունեցող արևմտյան ավանդույթները վտանգ չեն ստեղծում ժողովրդին պատկանող իշխանության յուրացման կամ զավթման համար: Հետևաբար՝ Շվեյցարիան սահմանադրական լրացուցիչ երաշխիքների կարիք չունի, ինչպես որ դրանք անհրաժեշտ են ժողովրդավարության անցումային փուլերում գտնվող երկրներին:

Նույն օրինաչափությունը բնորոշ է նաև Իտալիային, որի Սահմանադրությունում մեզ հետաքրքրող տեխնիկայով ու շարադրման եզրութային շղթայով հոդվածներ ժողովրդաիշխանության պաշտպանությանը չկան: Իտալիայի 1947 թ. Սահմանադրության «Հիմնական սկզբունքների» 1-ին հոդվածը սահմանում է, որ ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին, որը նա իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված ձևերով ու շրջանակներով²³: Մյուս կողմից՝ Իտալիայի Սահմանադրությունը ճանաչում է տեղական ինքնավարությունները և կիրառում է լայն վարչական ապակենտրոնացում: Այդ իսկ պատճառով ժողովրդաիշխանության անմիջական ձևերը տարածված են ավելի շատ այս մակարդակում: Իտալիային բնորոշ այս օրինաչափությունը բնութագրական է նաև Գերմանիային: Անհրաժեշտ

է հաշվի առնել նաև այն, որ այս երկրներն իրենց տարածքով և բնակչության թվով բավականին մեծ են, ինչի պատճառով անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտների կիրառումը, այն էլ՝ XX դարի կեսերի տեխնոլոգիայով, բարդ, ծախսատար և ժամանակատար ձևեր են: Բացի այդ՝ սրանց հիմնական մասն ապակենտրոնացված է (Ֆրանսիա, Իտալիա), իսկ մյուսները՝ դաշնային (Գերմանիա, Շվեյցարիա) պետություններ են: Հետևաբար՝ անմիջական ժողովրդաիշխանության ձևերի ամրագրումը բնութագրական է ինքնավար վարչական մասերին կամ դաշնության սուբյեկտներին: Այսպիսի եզրակացության ապացույցը ԳԴՀ-ի և Բավարիայի Սահմանադրությունների համեմատությունն է: Օրինակ՝ ԳԴՀ-ի Սահմանադրության 20 հոդ. 2-րդ մասը սահմանում է, որ. «Ամբողջ պետական իշխանությունը ելնում է ժողովրդից: Ժողովուրդը դա իրականացնում է ընտրություններում, հանրաքվեի և օրենսդիր, գործադիր իշխանությունների ու արդարադատության հատուկ մարմինների միջոցով»: Հոդվածը, կարծես թե, ոչնչով չի տարբերվում ՀՀ Սահմանադրության 2 հոդվածից, որը քննադատելի է: Սակայն այդ քննադատությունը Գերմանիայի դեպքում զրկվում է հիմքերից, երբ ուսումնասիրում ենք Բավարիայի Սահմանադրությունը: Եթե տրամաբանական հերթականությամբ շարադրենք Բավարիայի՝ որպես «ժողովրդական պետության» Սահմանադրության հոդվածներ 2, 5, 7-ի մասերը, ապա կունենանք հետևյալ իրավական դրույթները. *Բավարիան ժողովրդական պետություն է, որում պետական իշխանության կրողը ժողովուրդն է: Օրենսդիր իշխանությունը պարկանում է բացառապես ժողովրդին և ժողովրդական ներկայացուցչությանը: Ժողովուրդն արտահայտում է իր կամքն ընտրությունների և քվեարկության միջոցով: Հարցերը լուծվում են*

²² Ժողովրդի ինքնիշխանությունը և ժողովրդավարությունն անհրաժեշտ է տարբերել: Այս հարցում մենք համակարծիք ենք այն հեղինակների հետ, ովքեր դրանք զանազանում են՝ համարելով, որ ժողովրդաիշխանության սուբյեկտը միայն ժողովուրդն է, իսկ ժողովրդավարության սուբյեկտներ են ոչ միայն ժողովուրդը, այլև անհատները, նրանց միավորումները, պետական առանձին մարմինները, հասարակական կազմակերպությունները: Ժողովրդավարությունը ոչ թե ժողովրդի իշխանությունն է, այլ՝ անհատների և նրանց միավորումների մասնակցությունն իշխանության իրականացմանը (տե՛ս Ա.Ա. Безуглов, С.А. Солдатов, Конституционное право России. В трех томах, Том 1: М.; 2001, էջ 219-220): Ժողովրդավարության իրացման ձևերը մարդու իրավունքներն են, հատկապես՝ քաղաքական:

²³ Տե՛ս Конституция Итальянской Республики // Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин. – М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 69:

մեծամասնությամբ: Բավարիայի ժողովրդական պետության քաղաքացին իր քաղաքական իրավունքներն իրականացնում է՝ մասնակցելով դաշնային հողի ընտրություններին, օրենսդրական նախաձեռնություններին, հանրաքվեներին, ինչպես նաև ԳԴՀ բնակչության ժողովրդական նախաձեռնություններին և համաժողովրդական հանրաքվեներին: Գերմանական պետականագիտությունը ժողովրդավարության այդ կարգն անվանում է «ազատության» ժողովրդաիշխանություն (ժողովրդավարություն)²⁴: Այսքանն արդեն բավարար է ԳԴՀ-ի Սահմանադրության ժողովրդաիշխանության ձևերի աղքատիկության պատճառները բացատրելու համար: Բայց այս իրավադրույթները՝ վերցված Բավարիայի Սահմանադրությունից, որ և տարածքով, և բնակչությամբ գերակշռում է ՀՀ-ին, բավարար են հենց ՀՀ Սահմանադրության դրույթների աղքատիկությունը ցուցադրելու և հիմնավորելու համար:

Ֆրանսիայի 1958 թ. Սահմանադրության 3 հոդվածը սահմանում է, որ ազգային ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին, որը դա իրականացնում է իր ներկայացուցիչների միջոցով և հանրաքվեի ճանապարհով²⁵: Այնուհետև նույն հոդվածում կարգավորվում են ընտրական հարաբերությունները, իսկ Սահմանադրության մաս կազմող Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը (1789 թ.) ճանաչում է քաղաքացիների իրավունքն անձամբ մասնակցել **օրենսդրմանը**²⁶:

Ժողովրդաիշխանության մասին սահմանադրական դրույթներ չկան նաև ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ²⁷: Սակայն ակնհայտ է, որ վերջինս կառուցված է ամերիկյան Սահմանադրության հայրերի և այլ մտածողների ժողովրդավարական ու ժողովրդաիշխանական հայեցակարգերի վրա²⁸: ԱՄՆ-ին՝ որպես դաշնային պետությանը, ևս բնորոշ է նույն օրինաչափությունը ինչ որ նկատվեց Գերմանիայում: Եթե դաշնային Սահմանադրությունը, որն ընդունվել է շատ վաղուց, անտեսում է ժողովրդաիշխանության սկզբունքի և դրա ձևերի ամրագրումը, ապա, օրինակ՝ Կալիֆոռնիայի Սահմանադրությունն ամրագրում է անմիջական ժողովրդաիշխանության շատ գործուն, իրենց իրավական հետևանքներով իմպերատիվ նշանակություն ունեցող ձևեր՝ հանրագրի միջոցով իշխանությանը պատվիրաններ տալը, «քվեարկությունն ընտրություններում», օրենսդրական նախաձեռնությունը, հանրաքվեն (տարբեր տեսակներով), ընտրովի պաշտոնատար անձանց հետ կանչելը, երդվյալ ատենակալների ինստիտուտը, տեղական ինքնակառավարումը²⁹:

ԱՄՆ-ին՝ որպես դաշնությանը բնորոշ այս օրինաչափությունը հատուկ չէ դաշնություն համարվող Բրազիլիայի Հանրապետությանը, որի Սահմանադրությունն ամրագրել է իշխանությունը ելնում է ժողովրդից, որը դա իրականացնում է ընտրված ներկայացուցիչների միջոցով կամ անմիջականորեն՝ Սահմանադրության շրջանակներում. ժողովրդական ինքնիշ-

²⁴ Sten Manuz Theodor: Deutsches Staatsrecht: Ein Studienbuch / von Theodor Manuz und Reinhold Zippelius.- 29., vollig neubearb. Aufl.- Munchen: Beck, 1994, s. 422-434 (442 էջ):

²⁵ Sten Конституция Французской Республики //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 49:

²⁶ Sten Декларация прав человека и гражданина от 26 августа 1789 г. //Графский В.Г. Всеобщая история права и государства. М.: Изд.-во НОРМА (издательская группа НОРМА-ИНФРА.М) 2001, с 456-460 (744 с.).

²⁷ Sten Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, Հավելված Հենրիկ Խաչատրյան Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը (Քաղաքական-իրավական վերլուծություն) - Եր.: Հայաստան, 1991, գրքի 90-139 էջերում (140 էջ):

²⁸ Բ. Ֆրանկլինի, Թ. Պեյնի, Թ. Ջեֆերսոնի, Ա. Համիլտոնի, Ջ. Ադամսի, Ջ. Մեդիսոնի, Ջ. Մարշալի, Վ. Վիլսոնի քաղաքական-իրավական հայացքների մասին տես История политических и правовых учений /Под. общ. ред. акад. РАН, д.ю.н. проф. В.С.. Нерсесянца. - 4-е изд., перераб. и доп. - М.: Издательство НОРМА, 2003, էջ 15 473-505 (944 էջ), ինչպես նաև Мухаев Р.Т., История политических и правовых учений.- 20- изд., переработ. и доп.- М.: ЮНИТИ-ДАНА, 2005, էջ 276-290: ԱՄՆ-ի կառավարման համակարգի ժողովրդավարական ինստիտուտների ու ընթացակարգերի մասին տես նաև Մարք Ջ. Սթրիմոր, Մարշալ Քարթեր Թրիմի, Ամերիկյան կառավարում: Համատուտ ներածություն: Հինգերորդ հրատարակությունից թարգմանեցին Ա.Է. Գրիգորյանը և Ա.Հ. Հովհաննիսյանը: Երևանի պետ. Համալսարան. - Երևանի համալս. հրատ., 1997, 432 էջ:

²⁹ Sten Конституция Штата Калифорния //Коституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 258, 260, 263-266, հոդված 1, մասեր՝ 3-րդ, 16-րդ, հոդված 2, մասեր՝ 1-20 և այլն, ինչպես նաև Васильев В.И., Прямая демократия: опыт Калифорнии / Государство и право. 1994. № 1. 116-123 էջեր:

խանությունն իրականացվում է համընդհանուր և հավասար ընտրություններով՝ ուղղակի և գաղտնի քվեարկությամբ, օրենքին համապատասխան, պլեբիսցիտի, հանրաքվեի, ժողովրդական նախաձեռնության միջոցով. Սահմանադրությամբ երաշխավորված է տեղական ինքնակառավարումը, դաշնության նահանգներում (օկրուգներում) կառավարումը կառուցվում է վերը նշված սկզբունքների վրա³⁰:

Արևմտյան ազատական մի շարք երկրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց սահմանադրություններին բնորոշ չէ ժողովրդաիշխանության սկզբունքի սահմանադրական-իրավական կարգավորման այն տեսիլական և եզրութաբանությունը, ինչը որ բնութագրական է XXI դարի սկզբների սահմանադրություններին: Այդ երկրների սահմանադրություններն աչքի են ընկնում խայտաբղետությամբ՝ ժողովրդաիշխանության սկզբունքի սահմանադրական ձևակերպման տեսանկյունից, բայց դրանցում էլ չկա անմիջական ժողովրդաիշխանության ձևերի շրջանակի կոշտ սահմանադրական-իրավական սահմանափակում: Որոշ երկրներում սահմանադրական կարգավորումները շատ ընդհանուր են՝ բացառությամբ Բրազիլիայի Սահմանադրության, որը կոնկրետացնում է այդ ձևերը՝ ամրագրելով անմիջական ժողովրդաիշխանության մի քանի էական, գործուն ձևեր:

Եթե ՀՀ Սահմանադրության 2 հոդ. համեմատենք Ֆրանսիայի, ԳԴՀ-ի Սահմանադրությունների համապատասխան դրույթների հետ, ապա դա կստեղծի առաջադիմական տպավորություն, որովհետև ամրագրում է ժողովրդաիշխանության 2 հիմնական ձևերը՝ ընտրություն-

ներ և հանրաքվե: Բայց, եթե համեմատենք Բավարիայի և Կալիֆոռնիայի սահմանադրությունների համապատասխան դրույթների հետ, ապա այդ տպավորությունը կվերածվի հիասթափության, քանզի սրանք ամրագրում են անմիջական ժողովրդաիշխանության բազում ձևեր:

Արված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ եթե ՀՀ Սահմանադրության հոդված 2-ը փոխառվել է եվրոպական երկրներից, ապա փոխառնողները պետք է նկատի ունենային, որ դրանք ունեն մեծ տարածքներ և բնակչության մեծ քանակ: Այդ իսկ պատճառով նրանց սահմանադրությունները համապետական մասշտաբով անմիջական ժողովրդաիշխանության ձևերին, բացի երկու հիմնականներից, հատուկ ուշադրություն չէին դարձնում՝ այդ ձևերի ամրագրման վեկտորն ուղղորդելով դեպի տարածքային միավորներ, դաշնության սուբյեկտներ, հանրային կառավարման ստորին մակարդակներ: Հետևաբար՝ ՀՀ Սահմանադրության հոդ. 2-ի փոխառումը պետք է կատարվեր ոչ թե խոշոր պետությունների, այլ՝ դաշնության սուբյեկտների սահմանադրություններից, քանի որ հանրային կառավարման բոլոր ձևերը (ներկայացուցչական, անմիջական, պետական և ոչ պետական և այլն) պետք է լինեն պետության բոլոր տեսակի առանձնահատկություններին համահունչ, դրանց վրա խարըսված, դրանցից բխող: Այսինքն՝ ՀՀ-ն 1995 թ. պետք է ընդօրինակեր ժողովրդաիշխանության անմիջական ձևերի սահմանադրությամբ չսահմանափակված շրջանակ, օրենսդրորեն կարգավորեր դրանք, ժողովրդին տար իրական հնարավորություն, իրավագործություն՝ ազդելու պետական իշխանության գործունեության վրա:



³⁰ Стѝа Конституция Федеративной Республики Бразилии //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.– М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 288, 298, 307-308:

ՎԱՉԻԿ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Մխիթար Գոշ հայ-նուսական միջազգային համալսարանի դասախոս,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի
պետաիրավական հետազոտությունների բաժնի հայցորդ:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՌԱՄԵՆՏԱՐԻՉՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ**

Տարբեր երկրներում և տարբեր ժողովուրդների մեջ պատմական նույն ժամանակաշրջանում հասարակության պետական կազմակերպության ձևը տարբեր է եղել: Սակայն, դրանով հանդերձ՝ գոյություն ունեն նաև ընդհանուր օրինաչափություններ, որոնք բնորոշ են տվյալ պատմական դարաշրջանի պետություններին: Պետությունների դասակարգման առաջին փորձերը կատարվել են դեռևս հին Հունաստանում (Պլատոն, Արիստոտել, Պոլիբիոս, Կիկերոն և այլք): Այնուհետև, պետականության զարգացման հետ զուգահեռ՝ մշակվեցին բազմաթիվ և բազմազան տեսակետներ պետության տիպերն ու ձևերը դասակարգելու վերաբերյալ: [1 էջ 401]: Պետական կառավարման ձևը ցույց է տալիս գերագույն պետական իշխանության կազմակերպման եղանակը, պետական մարմինների ձևավորման կարգը, դրանց փոխգործակցությունը միմյանց միջև, բնակչության մասնակցության աստիճանը պետական մարմինների ձևավորմանը: Գոյություն ունեն պետական կառավարման երկու հիմնական ձևեր՝ միապետություն և հանրապետություն: Հանրապետությունը պետական կառավարման ձև է, որում բարձրագույն իշխանությունը պատկանում է որոշակի ժամկետով ժողովրդի կողմից ընտրված մարմիններին, որոնք պատասխանատու են ընտրողների առջև: [2]

Կառավարման հանրապետական ձևի տեսակներն են նախագահական և պառլամենտական հանրապետությունները: Դրանք տարբերվում են իրարից այնքանով, թե պետական իշխանության բարձրագույն մարմիններից ո՞վ է կազմում կառավարությունն ու ղեկավարում նրա գործունեությունը՝ խորհրդարանը, թե՛ նախագահը, և նրանցից ո՞ւմ առջև է պատասխանատու կառավարությունը: [2 էջ 128]:

Հանրապետությունն այնպիսի կառավարման ձև է, որի պայմաններում բարձրագույն պետական մարմինները (նախագահը, խորհրդարանը, կառավարությունը) ընտրովի և փոփոխելի են. ընդամին՝ միայն խորհրդարանն է առանց բացառության բոլոր հանրապետական կառավարման մոդելներում ընտրվում անմիջապես բնակչության կողմից: [8 էջ 143]:

Հայկական պետականության պատմաիրավական անցյալի ուսումնասիրությունն ակներև է դարձնում այն հանգամանքը, որ Հայաստանը ևս անմասն չի մնացել պետության կառավարման վերը նշված ձևերի կիրառությունից: Բայց նախ հարկ ենք համարում անդրադառնալ «պատմաիրավական» եզրույթի վերլուծմանը, քանի որ ինչպես պառլամենտական կառավարման ձևը, այնպես էլ նախագահական կառավարման ձևը և առհասարակ բոլոր պետաիրավական եզրույթներն էլ ունեն պատմաիրավական ակունքներ: Ինչպես հայտնի է՝ պատմությունը գիտություն է, որի ուսումնասիրման առարկան ընգրկում է մարդու գործունեությունը, աշխարհայացքները, սոցիալական կապերը, կյանքի կազմակերպումն անցյալում: [3]

Իսկ իրավունքը մարդկանց հասարակական հարաբերություններում ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձևն է [4 էջ 41]: Այս սահմանումներից երևում է, որ «պատմաիրավական» եզրույթը վերաբերում է անցյալում տեղի ունեցած մարդկության այնպիսի գործունեությանը, որն ունեցել է ոչ միայն պատմական, այլև իրավական նշանակություն: Այսինքն՝ տվյալ պատմական իրադարձությունն առաջացրել, փոփոխել կամ դադարեցրել է որոշակի իրավահարաբերություններ: Մեր պարագայում պառլամենտարիզմին վերաբերող պատմաիրավական իրադարձություններ են այնպի-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

սի իրադարձությունները, որոնց ընթացքում ընդունվել են պառլամենտին վերաբերող նորմատիվ իրավական ակտեր: Այդ ակտերը ոչ միայն իրավական, այլ նաև պատմական արժեք ունեն: Իհարկե, իրավական փաստաթուղթը, փորինների միջով հասնելով մեզ, ստանում է «պատմաիրավական» անվանումը: Իսկ այժմ անդրադառնանք հայկական պառլամենտարիզմի պատմաիրավական ակունքներին:

Հայ իրականության մեջ ազգային ժողովներ կամ աշխարհաժողովներ գումարվել են դեռևս վաղնջական ժամանակներից: Ազգային ժողովներ, իհարկե, ոչ ներկա ըմբռնմամբ, Հայաստանում գումարվել են ժամանակ առ ժամանակ՝ ազգի առջև ծառայած բախտորոշ ու ճակատագրական հարցերի վերաբերյալ վճիռներ կայացնելու, ինչպես նաև հասարակական հարաբերությունները կարգավորող կանոններ ընդունելու նպատակով: Այսպես՝ 449թ. Արտաշատում գումարված հայ ավագանու՝ նախարարների և բարձրաստիճան հոգևորականների ժողովը մերժողական պատասխան տվեց Հազկերտ Բ-ի՝ քրիստոնյա հպատակներին գրադաշտություն պարտադրող հրովարտակին: Հայաստանի օրենսդրությունը ներկայացվել է հիմնականում եկեղեցական գրավոր կանոններով՝ «Կանոնագիրք Հայոց»: Դա միջնադարյան իրավաբանական փաստաթղթերի պաշտոնական ժողովածու է, որը բաղկացած է հոգևորեկեղեցական, բարոյախրատական, գաղափարաքաղաքական և տնտեսական-քաղաքացիական խնդիրներ ընդգրկող կանոն-հոդվածներից: Դրանք ամփոփված են առանձին բնագավառների 57 կանոնախմբում և 1332 կանոնում: Այս ամենը, իհարկե, շատ հեռու է բուն պառլամենտարիզմից, որը ենթադրում է ժողովրդի կողմից ընտրված, մշտապես գործող ներկայացուցչական օրենսդիր մարմին, սակայն ներառում է դրա նախնական տարրեր. ազգի ճակատագիրը որոշող ավագանին հավաքվում, հարցեր էր քննարկում, բանավիճում, քվեարկությամբ ընդունում ազգի համար բախտորոշ որոշումներ ու կանոններ և դրանց համապատասխան կազմակերպում իր գործունեությունն ու ձևավորում հարաբերությունները: Խորհրդարանական կառավարման գաղափարը հայ իրականության մեջ սկզբնավորվեց XVIII դարի վերջին: Շ.Շահամիրյանը «Որոգայթ փառաց»

աշխատությունում (1773 թ., Մադրաս) առաջին անգամ ձևակերպեց սահմանադրական հանրապետության և խորհրդարանական կարգի մասին հիմնական դրույթները: Ընդարձակ ներածությունում նա դատապարտում է ավատատիրական-միապետական կարգերը, հիմնավորում թուրք-պարսկական բռնակալությունից Հայաստանի ազատագրման ուղիները և ժողովրդավարական կարգերի հաստատման սկզբունքները: «Որոգայթ փառացի» երկրորդ գրքի վերնագիրն է «Նշավակ», որը կիրառված է «կարգադրություն», «սահմանադրություն» իմաստներով և հոմանիշ է «Սահմանադրություն հայոց» անվանմանը: Վերջինս Սահմանադրության նախագիծ է (521 հոդված) և ներկայացնում է ապագա անկախ Հայաստանի հասարակական-պետական կառուցվածքը, կառավարման մարմինների ստեղծման կարգը և իրավասությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, տնտեսության, լուսավորության, զինված ուժերի կազմակերպման և այլ հարցեր: Անդրադառնալով ժողովրդի իշխանության, իրավունքի գերակայության, ներկայացուցչական ժողովրդավարության, իշխանությունների տարանջատման, սոցիալական պաշտպանվածության, սահմանադրական արդարադատության և բազմաթիվ այլ սահմանադրական սկզբունքների՝ առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացվում է պետական (սահմանադրական) իրավունքի նորմերի ամբողջական ու կանոնակարգված համակարգը՝ ոչ միայն ընդհանրացնելով հայ և համաշխարհային հասարակական մտքի նվաճումները, այլև սկիզբ դնելով պետական նոր մտածողության: Հեղինակը, անկասկած, քաջատեղյակ է եղել Եվրոպայի, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի պետական կառավարման ժողովրդավարական սկզբունքներին: «Իրավունքի և արդարության ծառի պտղաբերումները» կարող են միայն «արդար կառավարությունների» բարեպաշտ գործելակերպի հիմքը դառնալ՝ արդարության ու օրինականության մեջ փնտրելով անհատի ու հասարակության երջանկությունը, ելակետ ունենալով «...օրենքով ու արդարությամբ մեր կյանքը վարելու» հրամայականը. սա է «Որոգայթ փառացի» հեղինակի մեծագույն պատգամը: Ազգային սահմանադրությունն արևմտահայերի ներքին կյան-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

քին վերաբերող կանոնադրությունն էր: Դա 1860թ. մայիսի 24-ին ընդունել է Կ.Պոլսի Ազգային ժողովը, իսկ 1863թ. մարտի 17-ին վավերացրել է սուլթանական կառավարությունը՝ «Հայոց ազգի կանոնադրություն» անվանմամբ: Փաստաթղթի հիմքում բելգիական Սահմանադրության սկզբունքներն են, և դա ունի Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցությունը: Ն. Ռուսինյանի առաջարկով՝ փաստաթուղթն անվանվեց «Ազգային Սահմանադրություն»: Արևելյան Հայաստանում (1828թ. Ռուսաստանին միանալուց հետո) գործել է Համազգային ընդհանուր ժողով, որի գործառույթները սահմանված էին 1836թ. մարտի 11-ին Նիկոլայ I-ի հաստատած «Պոլոժենիե» կանոնադրությամբ: Դրա հիմնական իրավասությունն Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունն էր: [5]

1918թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Առաջին հանրապետության անկախությունը: 1918թ. օգոստոսի 1-ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում հանդիսավոր պայմաններում Խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանի բացման ճառով իր գործունեությունն սկսեց Հայաստանի Խորհուրդը: **Նշանակվածություն** սկզբունքով ստեղծված օրենսդիր այս մարմնի գործունեությունը տևեց շուրջ ինն ամիս՝ մինչև 1919թ. ապրիլի վերջ: [6 էջ 523]: Կազմվեց կառավարություն՝ հիմնականում դաշնակցականներից: Վարչապետ նշանակվեց Հ.Քաջազունին: Պատմաքաղաքական բարդ ժամանակներում երկուսուկես տարի գոյություն ունեցած Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական սկզբունքով կառավարվող երկիր էր: Խորհրդարանը միապալատ էր, ուներ մշտական հանձնաժողովներ և ավագների խորհուրդ: Հանրապետության կառավարությունը հաշվետու էր օրենսդիր մարմնին՝ խորհրդարանին: Վերջինս իր գոյության ընթացքում հաստատել էր կառավարության չորս կազմ: Հայաստանի խորհրդարանն իր գոյության ընթացքում հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ ընդունեց 1000-ից ավելի օրենքներ և օրենքի ուժ ունեցող իրավական փաստաթղթեր: Ուշագրավ են հայերենը պետական լեզու հռչակելու, պետական համալսարան, դպրոցներ, գրադարաններ, թանգարաններ հիմնելու, գաղթականության, բանվորների աշխատավարձերը, թոշակներն ավե-

լացնելու, ազատագրական կռիվներում զոհվածների երեխաների ուսուցումը կազմակերպելու, հայ գրողներին, գիտնականներին նյութական օգնություն, արտասահմանում սովորող երիտասարդությանը նպաստներ հատկացնելու և բազմաթիվ մեծ ու փոքր, սակայն էական խնդիրների վերաբերյալ կատարված օրենսդրական քայլերը: 1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Այդ կարգերի օրոք ընդունվել է երեք Սահմանադրություն՝ 1924թ., 1937թ. և 1978թ.: Հայաստանի Երկրորդ հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը ՀՍՍՀ Գերագույն խորհուրդն էր՝ 1938թ. սկսած, իսկ մինչ այդ՝ Խորհուրդների համագումարը: ՀՍՍՀ Գերագույն խորհրդի իրավասությունները սահմանվում էին Հայկական ՍՍՀ սահմանադրությամբ: ՀՍՍՀ Գերագույն խորհուրդը իրավագոր էր լուծելու ՍՍՀՄ Սահմանադրությամբ և ՀՍՍՀ Սահմանադրությամբ ՀՍՍՀ տնօրինությանը վերապահված բոլոր հարցերը: Ընտրվում էր 5 տարի ժամկետով, միապալատ էր և կազմված էր 340 դեպուտատից, որոնք ընտրվում էին ըստ հավասար թվով բնակչություն ունեցող ընտրական օկրուգների: ՀՍՍՀ Գերագույն խորհրդի և նրա մարմինների գործունեության կարգը որոշվում էր ՀՍՍՀ Գերագույն խորհրդի կանոնակարգով և ՀՍՍՀ մյուս օրենքներով: ՀՍՍՀ Գերագույն խորհուրդը նշանակում էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահին, նրա ներկայացմամբ հաստատում էր Մինիստրների խորհրդի կազմը, վերջինիս առաջարկությամբ կազմում ու լուծարում էր ՀՍՍՀ մինիստրությունները և պետական կոմիտեները, ընտրում Գերագույն դատարան, հաստատում ՀՍՍՀ տնտեսական ու սոցիալական զարգացման պետական պլանները, ՀՍՍՀ պետական բյուջեն: ՀՍՍՀ Գերագույն խորհրդի մշտապես գործող մարմինը նրա նախագահությունն էր, որը նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում էր պետական իշխանության բարձրագույն մարմնի գործառույթները: ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը գլխավորում էր ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահը: Հայաստանի առաջին գումարման Գերագույն խորհուրդը 1990թ. կազմավորվեց մեծամասնական ընտրակարգով (260

պատգամավոր), երկու փուլով՝ մայիսի 20-ին և հունիսի 3-ին: Այդ ժամանակ Հայաստանը դեռևս խորհրդային հանրապետություն էր: Նոր խորհրդարանում, որն սկսեց գործել հուլիսի 20-ից, ներկայացված էր երկու քաղաքական ուժ: ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդն առաջին նստաշրջանում՝ օգոստոսի 23-ին, ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որով հռչակվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Հռչակագրի ընդունումից անմիջապես հետո՝ օգոստոսի 24-ին, հիմնվելով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի վրա, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, իսկ գործող տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ: 1991թ. մարտի 1-ին Գերագույն խորհուրդն ընդունեց «1991թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին» որոշումը: 1991թ. հունիսի 25-ին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշեց ՀՀ Նախագահի ընտրությունները նշանակել 1991թ. հոկտեմբերի 16-ին: 1991թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը, հիմք ընդունելով ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին 1991թ. սեպտեմբերի 21-ի անցկացված հանրաքվեի արդյունքները, Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն: ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդն իր աշխատանքներն սկսեց 1990թ. հուլիսի 20-ին և ավարտեց 1995թ. մայիսի 15-ին: Այդ ընթացքում ընդունվեցին 1169 որոշում և 185 օրենք, որոնցից 104-ը՝ «մայր», իսկ 81-ը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում: Վավերացվել է 148 միջազգային պայմանագիր: 1995թ. հուլիսի 5-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: 1995թ. հուլիսի 5-ին ընտրվեց նաև Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Ազգային ժողովը: [5]:

Ինչպես նկատեցինք՝ արդեն ՀՀ Ազգային ժողով, ոչ թե ՀՀ Գերագույն խորհուրդ: Ազգային ժողովն օրենսդիր իշխանությունը մարմնավորող, ժողովրդի կողմից ընտրվող ներկա-

յացուցչական մարմին է՝ Խորհրդարան, Հայաստանի պառլամենտը կոչվում է Ազգային ժողով [7 էջ 680]: Ելնելով հայկական պառլամենտարիզմի ծագման և զարգացման պատմահրավական վերը նշված ընթացքից՝ պետք է ավելացնել, որ Հայաստանի Առաջին հանրապետությունն իր կառավարման տրիպոլ բուրժուական էր, իսկ Հայաստանի Երկրորդ հանրապետությունը կամ ՀՍՀ-ն՝ սոցիալիստական, ինչից էլ թխում էին այդ պետության պառլամենտարիզմի առանձնահատկությունները:

Իսկ ինչ է վերջ ի վերջո պառլամենտարիզմը: Պառլամենտարիզմը համակարգ է, որը կազմակերպում և գործառությանացնում է պետական իշխանությունը՝ հենվելով իշխանությունների բաժանման սկզբունքի և օրենքի գերակայության վրա [9 էջ 116]: «Պառլամենտարիզմի «էությունը վեր հանելու համար անհրաժեշտ է որոշել «պառլամենտարիզմ-պառլամենտ» եզրույթների հաջորդականությունը: Ընդհանուր առմամբ՝ պառլամենտարիզմ ասելով՝ հասկանում են պառլամենտի թե՛ տեսական և թե՛ գործնական գործունեությունը: Սակայն գոյություն ունի նաև պառլամենտ հասկացությունը լայն իմաստով. նրան ասոցացնում են ներկայացուցչական ժողովրդավարության հետ, իսկ նշանակությունն այն է, որ դա պետական իշխանության ներկայացուցչական մարմին է: Այնուամենայնիվ, մեկ բան հստակ է, որ չի կարող լինել ժողովրդավարություն առանց պառլամենտարիզմի, իսկ պառլամենտարիզմ չի կարող լինել առանց պառլամենտի: [10 էջ 7]:

Հայոց պետականության ժողովրդավարական քաղաքական ռեժիմի վերածնունդն սկսվում է 1991թ.: Այդ ժամանակվանից մինչև 2005թ. հայկական պառլամենտարիզմը (պառլամենտար) շարունակեց զարգանալ նախագահական կառավարման ձևի պայմաններում, այնուհետև 2005թ. մինչև 2015թ.՝ կիսանախագահական կառավարման ձևի: Կառավարման ձևերի այս փոփոխությունները, բնականաբար, ուղեկցվում էին Սահմանադրության փոփոխություններով, որոնք ուղղված էին պառլամենտի իրավասություններն ընդլայնելուն, իսկ պառլամենտի իրավասությունների ընդլայնման գազաթնակետը պառլամենտական պետության հռչակումն է, ինչն իրավաբանորեն հնարավոր չէ անել առանց փվյալ պետության հասարակության:

Իրավաբանական գրականության մեջ իրավա-
ցիորեն նշվում է, որ պառլամենտարիզմը բնու-
թագրում է հասարակության կազմակերպվա-
ծությունը և ժողովրդավարության մակարդա-
կը [11]: 2015թ. սահմանադրական փոփոխու-
թյունների արդյունքով Հայաստանում պառլա-
մենտական կառավարման ձևը հաղթանակ
տարավ կիսանախագահական կառավարման
ձևի նկատմամբ: «Պառլամենտարիզմ» և «պառ-
լամենտական կառավարում» հասկացություն-
ները միմյանցից փարբերվում են այնքանով,
որ պառլամենտարիզմ կարող է լինել նաև պառ-
լամենտական կառավարման ձև չունեցող երկ-
րում, բայց, մեր կարծիքով՝ պառլամենտարիզ-
մը ոչ թե սոսկ զարգացած, հեղինակավոր և
գործուն պառլամենտ ունենալն է, այլ՝ այն, որ
պառլամենտը՝ օրենսդիր իշխանությունը, Սահ-
մանադրությամբ և օրենքներով, ունի ոչ թե ա-
ռավելություն, այլ՝ առաջնայնություն, սկզբնայ-
նություն իշխանություն մյուս թևերի՝ գործադի-
րի և դատականի համեմատ: Օրինակ՝ ՀՀ Սահ-
մանադրության մի քանի դրույթից երևում է, որ
գործադիրը և դատական իշխանությունը
կազմվում են պառլամենտի միջոցով: Պառլա-
մենտարիզմը պետության կառավարման հան-
րապետական ձևի հետ գոյություն ունեցող հա-
մակարգ է, որը, ի փարբերություն հանրապե-
տական կառավարման մյուս ձևերի՝ նախագա-
հականի և կիսանախագահականի (կամ՝ կի-
սախորհրդարանականի), հանդես է գալիս որ-

պես պառլամենտական կառավարման ձևի ի-
րավաքաղաքական անվանում: Այսինքն՝ նա-
խագահական կառավարման ձևը երբևիցե չի
ստանում «նախագահականիզմ» անվանումը:
Փաստորեն, պառլամենտական հանրապետու-
թյունում չկա «նախագահականիզմ» եզրույթ,
բայց սովորաբար կա նախագահի ինստիտուտ,
իսկ նախագահական հանրապետություններում
կարող է լինել պառլամենտարիզմ, քանի որ կա
պառլամենտ: Պառլամենտարիզմը ծնվում է քա-
ղաքականության շնորհիվ, ի սկզբանե քաղա-
քական է, սակայն ձևավորվում և գործում է
նորմատիվ իրավական ակտերի միջոցով, ինչի
հետևանքով դառնում է նաև իրավական:

Այսքանով՝ եզրափակելով պառլամենտա-
րիզմի հասկացության վերաբերյալ մեր մտքե-
րը և ելնելով դրանցից՝ պետք է ամփոփենք
նաև հայկական պառլամենտարիզմի պատ-
մաիրավական ընթացքը՝ վերջինս պայմանա-
կանորեն բաժանելով չորս փուլի՝ ծագման, զար-
գացման, ընդունման և հաստատման: Առաջին
փուլը ինչպես տեսանք՝ սկսվում է դեռևս միջ-
նադարյան Հայաստանից և ավարտվում է
1918թ.: Երկրորդ փուլն ընդգրկում է 1918թ.
մինչև 2015թ. տեղի ունեցած պատմաիրավա-
կան իրադարձությունները: Երրորդ՝ ընդուն-
ման փուլը մենք համարում ենք 2015 թվակա-
նը: Իսկ 2015թ. հետո մենք թևակոխել ենք
պառլամենտարիզմի 4-րդ պատմաիրավական
փուլ՝ հաստատման փուլ:



ԱԿ ԾԱՏՐՅԱՆ

Аспирант кафедры теории права и конституционного права,
Российско-Армянский университет,
Институт Права и Политики

ЗАКОНОДАТЕЛЬНАЯ ИНИЦИАТИВА ПАРЛАМЕНТА В РАМКАХ ПРЕДВАРИТЕЛЬНОГО ЗАКОНОДАТЕЛЬНОГО НАДЗОРА

В современных демократических государствах роль представительной демократии наиболее велика, поскольку именно она привносит в государственные учреждения элементы демократической культуры, точнее – демократические принципы принятия решений (например, принцип верховенства права, принцип большинства), в результате чего собственно государственная власть приобретает демократический характер.

В демократических государствах единственным источником и носителем власти является народ. На это указывает также и статья 2 Конституции РА от 2015 года, закрепляющая положение о том, что власть в Республике Армения принадлежит народу, которая осуществляется в особых демократических способах и формах: с помощью референдумов и свободных выборов.

Одним из результатов осуществления представительной демократии считается формирование Парламента, как основного представительного органа законодательной власти, который является единственным общенациональным мандатарием народа, выразителем его воли и интересов, а наличие демократической избирательной системы является гарантией народного представительства в Парламенте.

Независимо от того, какая форма правления существует в том или ином государстве и каковы границы полномочий Парламента, законодательная функция – это главное предназначение представительного органа, суть которого заключается в том, что полномочие принятия законов, то есть нормативно правовых актов, обладающих юридической силой, принадлежит исключительно Парламенту, и исключена возможность создания каких-либо государственных

органов власти, которым бы было предоставлено аналогичное полномочие. Таким образом, представительная демократия, оказывая влияние и непосредственно соединяясь с политической культурой, привносит в содержание политического процесса демократические принципы принятия решений и тем самым изменяет его характер. В результате, технология формирования государственных органов, как посредством представительной, так и непосредственной демократии, и осуществляемая ими деятельность приобретают демократический характер, поскольку Парламент как представительный орган и выразитель народной воли обеспечивает косвенным образом участие народа при осуществлении своих полномочий.

Важно отметить, что с изменениями Конституции РА Республика Армения стала парламентской республикой, государством при форме правления, которой полномочия в целом распределяются со значительным перевесом в пользу Парламента. В частности, в соответствии со статьей 88 Конституции РА, Национальное Собрание осуществляет законодательную власть, контроль в отношении исполнительной власти, принимает государственный бюджет и осуществляет иные функции, установленные Конституцией.

Получая доверие народа, высший представительный орган в условиях парламентской формы правления, казалось бы, может в полной мере приступить к реализации своих полномочий. Однако, по существу являясь органом законодательной ветви власти, все же Парламент не занимает то особое место, которое ему отведено в системе разделения властей. Речь в данном случае идет о возможности осуществления Пар-

ламентом законодательной функции в полном объеме, включающей в себя не только регламентированный процесс принятия законов, но и их разработки.

Безусловно, сам законодательный процесс, “как процесс принятия Парламентом законопроекта к рассмотрению, его обсуждение, принятие”¹, в системе разделения властей является одним из особых направлений деятельности законодательной ветви власти демократического государства, и подобная формулировка относительно Парламента часто встречается в юридической литературе при обозначении законодательного органа^{2,3,4}. Однако при этом вовсе не учитывается возможность Парламента (депутатов и фракций) разрабатывать законопроекты в рамках законодательной инициативы, направлять их на обсуждение государственных органов и представлять на рассмотрение Парламента в целом, поскольку право законодательной инициативы часто отделяется и рассматривается как отдельный институт конституционного права. В таких случаях, по нашему мнению, роль Парламента, как органа законодательной ветви власти, искусственно сводится исключительно к обсуждению, принятию либо отклонению соответствующего законопроекта, разработанного и представленного Правительством, что, в свою очередь, не позволяет определить его в том числе и как орган, участвующий в законотворчестве⁵, тем самым не давая возможности с учетом всего объема компетенции определить содержание его конституционного статуса, которым он должен обладать в современном демократическом государстве.

Хотя сам институт права законодательной инициативы является одной из гарантий обеспечения принципа демократизма в государстве, тем не менее, целесообразно ли говорить о

“праве” в отношении какого-либо государственного органа, включая органы законодательной и исполнительной ветвей власти, с учетом того, что весь спектр прав и обязанностей в целом заключается в полномочиях, которые составляют их строго определенную компетенцию? Подобное закрепление присутствует в Конституциях и законах (например, Армения, Россия, Беларусь и Грузия), которыми закрепляются основы правового регулирования права законодательной инициативы.

Говоря о законодательном закреплении, важно отметить, что часть 1 статьи 109 Конституции РА устанавливает возможность предложения Национальному Собранию проекта закона для депутатов, фракций НС, Правительства РА и 50 тысяч граждан в порядке гражданской инициативы, обладающих избирательным правом. При этом в порядке гражданской, фракционной или депутатской инициативы, в соответствии с частью 5 статьи 109 Конституции РА и частью 5 статьи 65 Конституционного закона “Регламент Национального Собрания”, не могут представляться проекты законов, касающихся государственного бюджета, международных договоров, амнистии, административно-территориального деления, состава и деятельности Правительства РА, межобщинных делений, поскольку последние составляют исключительное право законодательной инициативы Правительства РА и которые выставляются на голосование лишь с поправками, приемлемыми для него. Следует отметить также, что, в соответствии с пунктом 1 части 1 статьи 3, закрепляющей права депутатов, и пунктом 1 части 1 статьи 8, определяющей полномочия фракций, Конституционного закона РА “Регламент Национального Собрания”, и депутаты, и фракции имеют возможность выступать с законодательной инициативой.

¹ Арзамасов Ю.Г. Нормография: теория и методология нормотворчества : учеб.-метод. пособие. М. : Академический Проект: Трикста, 2007. С. 151.

² Чиркин В.Е. Законодательная власть. М., 2008. С. 120-143.

³ Безруков А.В. Формирование и функционирование конституционно-правового механизма обеспечения правопорядка органами публичной власти в России: Моногр. М.: Юстицинформ, 2016. С. 32.

⁴ Крамской В.В. Институт парламентаризма в системе взаимоотношений государства и общества: общетеоретическое исследование: Дисс. канд. юрид. наук. Тамбов, 2014. С. 73

⁵ Мазаев В.Д. Законодательное регулирование и регламентация законотворческого процесса // Качество регламентации: франко-рос. семинар. М.: Логос, 2002. С. 159.

Примечательно, что четкое определение входящих в компетенцию полномочий, оптимизация противовесов и сдержек является важнейшей гарантией внутренней самозащиты Конституции и стабильности государства. Решение подобной проблемы, в свою очередь, предполагает наибольшую ясность в вопросах конституционального закрепления и практической реализации принципа разделения властей, а компетенция всякого государственного органа демократического государства устанавливается исключительно Конституцией и законами, с учетом принципов верховенства права, правовой определенности и разделения властей. Необходимо отметить важность того, что полномочия законодательной, исполнительной и судебной ветвей властей не дублируются, поскольку в противном случае их основное назначение не отразилось бы⁶.

Положения подобного содержания получили свое закрепление и в статье 6 Конституции РА, в соответствии с которой, государственные органы, органы местного самоуправления и должностные лица правомочны выполнять только те действия, на которые они уполномочены Конституцией или законами, а уполномочивающие нормы, на основе которых государственные органы осуществляют свою деятельность, должны соответствовать принципу правовой определенности. Соответственно, учитывая вышеизложенное, законодательная инициатива, реализованная со стороны Правительства, депутатов и фракций Парламента в рамках конституционных положений, должна рассматриваться скорее как правомочие или полномочие, нежели право, так как в данном контексте оно не будет обладать чисто диспозитивным характером.

Сопоставляя и анализируя вышеуказанные положения, можно сделать вывод о том, что Парламент РА, являясь законодательным органом власти, созданным на основе Конституции и осуществляющий свои полномочия исключительно на основе Конституции, имеет возможность участвовать в законотворческом процессе исключительно посредством реализации права законодательной инициативы его депутатами и

фракциями, за исключением тех случаев, которые Конституцией и конституционным законом отнесены к исключительному праву Правительства РА.

Как уже было отмечено, если рассматривать законодательную инициативу в качестве правомочия при ее реализации со стороны государственных органов и должностных лиц, то она не будет обладать чисто диспозитивным характером, однако, в данном случае, следует провести параллели между порядком реализации права законодательной инициативы Правительства, депутатов и фракций, а также обратить внимание на законодательное закрепление и регулирование ее реализации.

Важно отметить, что после того, как программа Правительства утверждается Национальным Собранием, Правительство, в свою очередь, в течение 3 месяцев утверждает, как правило, пятилетнюю программу своих мероприятий, которая включает в себя мероприятия по разработке всеми государственными органами управления законодательных и подзаконных нормативно правовых актов, а также иные мероприятия, направленные на реализацию основных целей и направлений программы Правительства в целом, тем самым в обязательном порядке реализуя свое “право” законодательной инициативы, при этом искусственным образом включая полномочия законотворчества в свою компетенцию.

В данном случае, государственные органы управления в рамках области своей деятельности разрабатывают ряд законопроектов, в установленном порядке законотворческой деятельности, которые уже Правительство, в рамках законодательной инициативы, представляет на обсуждение Национального Собрания. В этом контексте невозможно не учитывать факт того, что на практике большая часть законопроектов на обсуждение Парламента была внесена именно Правительством – в частности, среди 725 вопросов, обсужденных и принятых Национальным Собранием 6-ого созыва в период от 18-ого мая 2017 до 25-ого октября 2018 года, 649 вопрос составляют за-

⁶ Авакьян С.А. Конституционное право России, Том 2. М., 2010 г. С. 399.

ключение (предложение) отрицательного характера со стороны Правительства, в соответствии с частью 1 статьи 77 Конституционного закона “Регламент Национального Собрания”, и быть впоследствии отозваны со стороны автора с учетом данного предложения или, впоследствии, не быть одобрены “стабильным” парламентским большинством. Так, для урегулирования проблемы, возникающий при осуществлении законодательной инициативы депутатов и фракций Парламента РА, необходимо дать возможность осуществлять законодательную инициативу комиссиям Парламента РА. Поскольку в Армении депутат, в соответствии с пунктом 1 части 1 статьи 3 Конституционного закона РА “Регламент Национального Собрания”, обязан быть включенным в состав одной постоянной комиссии, а последняя, в соответствии с пунктом 2 части 1 статьи 12 того же закона, полномочна осуществлять парламентский контроль, то можно констатировать, что комиссия Парламента РА в целом могла бы участвовать в осуществлении законодательной инициативы, как результат своей контрольной деятельности участвовать в законотворческом процессе и придавать некую политическую поддержку своим законопроектам. Однако, ввиду отсутствия в Конституции прямого, определенного указания на данную возможность, не обладает данным правомочием. В рамках существующих положений законодательства РА, конечно же, можно обойти данное ограничение посредством осуществления одной законодательной инициативы двух или более депутатов, однако с учетом положений Конституционного закона РА “Регламент Национального Собрания”, почему комиссия Парламента не входит в число субъектов законодательной инициативы. Схожее положение закреплено, например, в части 1 статьи 45 Конституции Грузии, где право законодательной инициативы предоставлено также комитетам Парламента. Таким образом, уже на первых стадиях законотворчества заявленные со стороны комиссий Парламента РА законопроекты будут обладать достаточной политической под-

держкой, сдерживая Правительство и принуждая его оценивать данный проект реально, не учитывая при этом частные интересы одной преобладающей политической силы в стране.

Важно также отметить, что в Республике Армения существует процедура публикации законопроектов до их внесения на рассмотрение Национальным Собранием, которая регулируется законом РА “О нормативно-правовых актах” и решением Правительства РА от 10 октября 2018 года N1146-Н “Об определении порядка организации и проведения общественных обсуждений”.

В частности, часть 1 статьи 3 закона РА “О нормативно правовых актах” устанавливает, что проекты законодательных актов подлежат общественному обсуждению, за исключением проекта закона о ратификации международного договора (присоединения к нему). В соответствии с частью 1 статьи 4 данного закона, общественное обсуждение организуется органом или членом Правительства, имеющим правомочие на принятие акта, а часть 5 той же статьи определяет, что подлежащий общественному обсуждению представленный Правительству проект, не прошедший общественного обсуждения, может быть возвращен Правительством в представивший его орган. Решение Правительства РА от 10 октября 2018 года N1146-Н “Об определении порядка организации и проведения общественных обсуждений”, в свою очередь, конкретизирует значение общественного обсуждения, определяя, что это процесс получения и обобщения предложений и замечаний, а также выявления общественного мнения, информирования общественности о проектах, с целью обеспечения прозрачности и подотчетности правотворчества и участия общества в процессе подготовки проектов нормативно правовых актов¹⁰.

Тем не менее, установленный порядок проведения общественных обсуждений, во-первых, по существу, носит обязательный характер лишь для законопроектов, которые разрабатываются в рамках законодательной инициативы Прави-

¹⁰ Решение Правительства РА от 10 октября 2018 года N1146-Н “Об определении порядка организации и проведения общественных обсуждений”.

тельства РА, поскольку последствием несоблюдения данной процедуры может стать лишь возвращение Правительством законопроекта в представивший его орган; во-вторых, порядок, по существу, никак не вписывается в рамки предварительного законодательного надзора, как составной части парламентского контроля, так как нет положений, которые бы регулировали или определяли возможность или обязанность участия Парламента (депутатов или фракций) в данном процессе, а сами депутаты лишь при желании высказать мнение по поводу законопроекта будут участвовать в обсуждении, представляя свои замечания (предложения) как обычные граждане, не имеющие надзорных полномочий; в-третьих, цель организации данного процесса решением Правительства была ограничена и сведена исключительно к информированию общественности и определению его мнения относительно законопроекта.

И хотя в Республике Армения предварительный законодательный надзор частично осуществляется постоянными комиссиями Парламента в рамках предварительного обсуждения законопроектов, все же следует учесть факт того, что он осуществляется уже во время законодательного, но не законотворческого процесса, когда проект уже был представлен на рассмотрение Парламента. В существующих условиях необходимо закрепление таких положений, которые установят обязанность для Правительства РА и органов государственного управления на начальных стадиях законотворчества направлять

законопроекты на обсуждение в соответствующие комиссии Парламента РА в рамках предварительного законодательного надзора. Подобные положения будут способствовать повышению роли Парламента как коллегиального государственного органа, осуществляющего законодательную власть.

Обобщая вышесказанное, предлагается внести в законодательные и подзаконные акты Республики Армения соответствующие изменения и дополнения в целях урегулирования института общественного обсуждения в полном объеме, придав ему значение скорее “публичного обсуждения”, более четкой регламентации предварительного законодательного надзора, как одной из составных частей парламентского контроля комиссий и Парламента РА в целом, установления возможности реализации права законодательной инициативы не только со стороны депутата или фракции, но и со стороны комиссий Парламента РА, в качестве его структурных органов.

Законодательное закрепление подобных механизмов даст возможность Парламенту не только участвовать в обсуждении законопроекта на стадии законотворчества, но и более эффективно осуществлять парламентский надзор в отношении исполнительной ветви власти, поскольку последней будет реализовано целостное полномочие, сочетающее в себе элементы функциональных, сдерживающих и противовесных полномочий.



ՍԱՍՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ (հանրային իրավունք)

**ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ
ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երկրի պաշտպանության գործառույթը պետության սահմանադրական գործառույթների համակարգում դիտարկելիս անհրաժեշտ է վեր հանել նաև այդ գործառույթի կենսագործման կառուցակարգի առանձնահատկությունները՝ օգտագործելով միջճյուղային-համալիր գիտական մոտեցման հնարավորությունները: Հետազոտական այս խնդրի իրականացումը կարևոր հիմք է երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման մի շարք հիմնահարցերի հետազոտման և պարզաբանման, դրանց սահմանադրական կարգավորման առարկայի (հարաբերությունների շրջանակի), կարգավորման այլ յուրահատկությունների տեսական իմաստավորման համար: Ավանդաբար երկրի պաշտպանության տեսական և իրավական հիմնահարցերի ուսումնասիրությունն առնչվում է մի շարք գիտական ճյուղերի հետ: Մասնավորապես՝ պետության և իրավունքի տեսության մաս կազմող «պետության ֆունկցիաների» տեսությունը, սահմանադրական իրավունքի տեսությունը, ռազմական (կամ ռազմավարչական) իրավունքի տեսությունը¹, երբեմն՝ կառավարման տեսությունը, և իհարկե, ռազմագիտությունը, հատկապես՝ դրա ռազմական «ստրատեգիա» կոչված ոլորտը: Փորձենք երկրի պաշտպանության գործառույթը և դրա կենսագործման կառուցակարգը քննարկել այս գիտական ոլորտների տեսանկյուններից, այնուհետև միավորել ստացված արդյունքները:

Ցանկացած պետություն (երկիր) խնդիր ունի ապահովելու իր ինքնիշխանությունը, պետական սահմանների անձեռնմխելիությունը,

արտաքին անվտանգությունը: Այդ խնդրի լուծման համար պետությունն իրականացնում է երկրի պաշտպանության արտաքին գործառույթ: Այդ գործառույթի պետականագիտության կողմից մատնանշված տարրերն աչքի են ընկնում որոշակի առանձնահատկություններով:

1. Պաշտպանության գործառույթի օբյեկտը երկրի ռազմական պաշտպանության հետ կապված հասարակական հարաբերություններն են, որոնք իրենց բնույթով էականորեն տարբերվում են հասարակական այլ հարաբերություններից: Այդ տարբերության հիմնական չափանիշը գործառույթի իրականացման շնորհիվ հիմնադրված կառույցը՝ բանակը կամ զինված ուժերն են: Դրանց կիրառման ու գործունեության ձևերն էականորեն տարբերվում են այլ ոլորտների օբյեկտներից: Իսկ կառավարման օբյեկտի և կառավարման առանձնահատկությունների միջև գոյություն ունի սերտ կապ: Այդ կապը շեշտադրում է նաև կառավարման գիտությունը, ըստ որի՝ հասարակական համակարգը պետական կառավարման օբյեկտ դիտարկելիս անհրաժեշտ է ելնել հետևյալ հիմնարար դրույթներից.

- ա) կառավարվող օբյեկտների բովանդակությունը և ձևերը, գործառույթներն ու կառուցվածքն անմիջականորեն պայմանավորված են օբյեկտիվ բնական ու սոցիալ-պատմական պայմաններով ու օրինաչափություններով,
- բ) յուրաքանչյուր կառավարվող օբյեկտի յուրահատկությունը (չափորոշիչները) և տեղը հասարակական կենսագործունեության մեջ որոշվում են օբյեկտի բո-

¹ Стів Военное право, под ред. д. ю. н., професора В.Г. Стрекозова, д. ю. н. А.В. Кудашкина. Серия “Право в Вооруженных силах – консультант” – М., “За права военнослужащих”, 2004, 640 с.; Мигачев Ю.И., Тихомиров С.В., Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, 456 с.; Военное право. Под ред. засл. деятеля науки РФ, академика Кузнецова Н.И.– М.: издательство Военный университет МО РФ – Всеармейский издательский центр гуманитарной учебной литературы, 1996, 318 с. և այլն:

վանդակությամբ, տեխնոլոգիայով, դրա կողմից կամ դրանում իրականացվող աշխատանքի այլ դրսևորումներով,

- գ) արդի աշխատանքի մասնագիտացված, կոոպերացված և կոլեկտիվ բնույթը բարդ կառույցի է վերածում կառավարվող օբյեկտներին, որոնք հասարակական համակարգում հանդես են գալիս որոշակի (և զարգացող) կազմակերպական ձևերում,
- դ) կառավարվող օբյեկտներն իրենց մարդկային բնույթի ուժով ընդունակ են իրենց ակտիվության նպատակադրման, հարմարեցման և տարրերային ինքնակարգավորման, գիտակցական ինքնակառավարման,
- ե) պետական կառավարման համակարգում (սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միասնության տեսանկյունից) կառավարման օբյեկտները կատարում են հասարակական կյանքի վերարտադրության գլխավոր գործառույթը և այդ իսկ պատճառով համարվում են որոշիչ (օբյեկտիվորեն պատճառականացված) պետական մարմինների նկատմամբ²:

Եթե կառավարման գիտության կողմից հիմնավորված այս ընդհանուր և հիմնարար դրույթները փոխադրենք պաշտպանության գործառույթի տիրույթ, ապա կստանանք հետևյալ եզրակացությունները. երկրի պաշտպանության պետական կառավարման կամ պաշտպանության գործառույթի բովանդակությունը, իրականացման ձևերը, ենթագործառույթները, կառուցվածքը պայմանավորված են զինված ուժերի կազմակերպման ու զինված պայքարի (պատերազմի) վարման սոցիալ-պատմական պայմաններով ու օրինաչափություններով: Պաշտպանության գործառույթի ներգործության օբյեկտում գլխավոր դերակատարը զինված ուժերն են՝ իրենց բնորոշ կազմակերպական ու գործառույթային առանձնահատկություններով հանդերձ, ինչն էլ հենց պաշտպանական գործառույթի գլխավոր առանձնահատկությունն է: Այդ գործառույթի իրականացման հիմնական կազմակերպական ձևը բանակն է՝ իր ներքին կառուցվածքային ստորաբաժանումներով հան-

դերձ: Նա առաջնային նշանակություն ունի գործառույթի իրականացման կառուցակարգում: Պաշտպանական հարաբերությունների պետական կառավարումը (պետական մարմինները), առանց մարտունակ բանակի, անհմաստ կառույցներ են, հետևաբար՝ գործառույթի իրականացման արդյունավետության հիմնական ցուցիչը մարտունակ բանակն է, այլ ոչ թե դրա իմիտացիան կամ քաղաքական-իրավական կառավարումն ու կարգավորումը:

Կառավարման տեսության կողմից առաջ քաշված և վերը ներկայացված ինքնակառավարման և ինքնակարգավորման ընդունակությունը ևս բնութագրական է երկրի պաշտպանությանը: Անշուշտ, արդի շրջանում երկրի պաշտպանության հիմնական սուբյեկտը պետությունն է՝ ի դեմս նրա զինված ուժերի ու դրանց կառավարման մարմինների, սակայն պատմականորեն եղել են շատ դեպքեր, երբ ռազմական առումով նվաճված երկրներն ու ժողովուրդները ինքնակազմակերպման ճանապարհով (ընդհատակյա գործունեությունից սկսած, մինչև պարտիզանական պատերազմներն ու ապստամբությունները) կարողացել են ազատվել և արդյունավետ կազմակերպել ազատագրված տարածքների պաշտպանությունը:

2. Պետության այլ գործառույթների հետ համեմատած՝ պաշտպանության գործառույթն աչքի է ընկնում նաև իր իրականացման սուբյեկտային կազմով: Նախ՝ գործառույթի կենսագործման հիմնական և գրեթե մենաշնորհային սուբյեկտը պետությունն է, որը դա կատարում է հանրային իշխանական ապարատի և հատուկ ստեղծված կառույցի՝ զինված ուժերի միջոցով: Եթե պետության մի շարք գործառույթների իրականացմանը մասնակցում են նաև քաղաքացիական հասարակության օտարաբնույթ կազմակերպությունները, ինչպես նաև անհատները՝ իրենց գործունեությամբ, ապա պաշտպանական գործառույթի իրականացման կառուցակարգում, դրա կազմակերպման և կառավարման բոլոր մակարդակներում՝ բարձրագույն քաղաքական ղեկավարումից մինչև ագրեսորի կամ սահմանախախտի դեմ տարվող մարտը, իրականացնում են հանրային իշխանական կառույցները: Քաղաքացիները և կազ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 114 2019

² Сѣн Атаманчук Г.В., Теория государственного управления. Курс лекций.– М. Юрид. лит., 1997, էջ 91:

մակերպություններն այստեղ գործում են որպես հայրենիքի պաշտպանության պարտականություն կրող սուբյեկտներ, որի բովանդակությունն ամրագրված է Սահմանադրությամբ ու օրենքներով: Պաշտպանության գործառույթի իրականացման ողջ պատասխանատվությունը և գործառույթային կենսագործման հանրային իրավական պարտականությունը կրում են պետությունը և նրա մարմիններն ու հատուկ կառույցները:

Այսպիսով՝ երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման հիմնական ընդհանուր սուբյեկտը պետությունն է՝ ի դեմս նրա մարմինների, կազմակերպությունների և կառույցների: Ռազմագիտության ու ռազմական անվտանգության տեսության մեջ երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտները դիտարկվում են որպես պաշտպանության ու ռազմական անվտանգության համակարգի բաղադրատարր՝ համապատասխան սուբյեկտիվ իրավունքներով ու պարտականություններով³:

ՀՀ Սահմանադրության և «Պաշտպանու-

թյան մասին» 2017 թ. նոյեմբերի 15-ի ՀՀ օրենքի վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշելու պաշտպանության գործառույթի ձևավորման ու իրականացման սուբյեկտների հետևյալ շրջանակը՝ օրենսդիր մարմինը, կառավարությունը, նախագահը, դատարանները, անվտանգության խորհուրդը, գործադիր իշխանության մարմինները, պետության զինված կազմակերպությունը, որը ներառում է զինված ուժերը և այլ զորքերը⁴: Ըստ էության՝ զինված ուժերն ընդունված է համարել պետության ռազմական կազմակերպության միջուկը և երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման հիմքը⁵: Պետության ռազմական կազմակերպությունը կոչված է ապահովելու երկրի պաշտպանությունը ռազմական մեթոդներով:

Այսպիսով՝ երկրի պաշտպանության գործառույթն իրականացնող սուբյեկտների շարքում հատուկ գործառույթային-նպատակային ինստիտուտ է բանակը կամ պետության ռազմական կազմակերպությունը, որը, ի տարբերություն այլ գործառույթային-նպատակային պե-

³ Տե՛ս Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 129-130: Ս.Ա. Ֆոմինն այդ սուբյեկտների հասկացությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Հասարակական հարաբերությունների այն մասնակիցը, որին իրավական նորմերն օժտել են իրավունքներով ու պարտականություններով» (տե՛ս նույն տեղը):

⁴ Գրականության մեջ օգտագործվում են մի շարք եզրույթներ՝ կապված զինված կազմավորումների հետ: Դրանցից են՝ «պետության ռազմական կազմակերպությունը», «ռազմական ուժեր», «բանակ», «զորք», «ուժային կառույցներ», «զինված ուժեր»: «Պետության ռազմական կազմակերպությունը» ներառում է զինված ուժերը, այլ զորքերը, զինված կազմավորումները և մարմինները, որոնք իրենց առջև դրված խնդիրներն իրագործում են ռազմական մեթոդներով, ռազմական կառավարման մարմինները, ինչպես նաև արդյունաբերական ու գիտական համալիրները» (տե՛ս Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право; под. ред. В.Г. Стрекозова, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.– М.: За права военнослужащих, 2004, էջ 92-93): «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն «Չինված ուժերը» պետական ռազմական կառույց է, որն ապահովում է ՀՀ պաշտպանության ռազմական բաղադրիչը, իսկ «այլ զորքերը» ներառում է ոստիկանության զորքերը, սահմանապահ զորքերը, պետական պահպանության ծառայությունը և ազգային անվտանգության հատուկ ստորաբաժանումները» (տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի ՀՀ օրենքը // ՀՀ ՊՏ 2017.12.06.173(1348): Ըստ ռազմագիտության՝ բանակը պետության ռազմական մարմինը (կառույցը) է, որը նախատեսված է զինված բռնության միջոցներով նրա քաղաքականության իրականացման համար: «Բանակ» բառը «զինված ուժերի» հոմանիշներից մեկն է: Բանակն ունի մի շարք հատկանիշներ, պետական կառույց է, զինված մարդկանց կազմակերպություն է, իր գործառույթները կատարում է զինված միջոցներով, կոչված է պատերազմ վարելու և դրա համար ունի բավարար մարտական հզորություն (տե՛ս Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право; под. ред. В.Г. Стрекозова, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.– М.: За права военнослужащих, 2004, էջ 92):

⁵ Տե՛ս Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 133: Ռազմական գիտության մեջ ընդունված է երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության համակարգի հիմք համարել դրանց ապահովման մարմինները, ուժերը և միջոցները (տե՛ս նույն տեղը, էջ 131): «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդ. 3-րդ մասի համաձայն՝ զինված ուժերը կազմված են զինվորական կառավարման կենտրոնական մարմնից՝ ՁՈՒ գլխավոր շտաբից, զինվորական կառավարման այլ մարմիններից, զորամիավորումներից, միավորումներից, զորատեսակներից և զորամասերից, զինվորական հաստատություններից և զինվորական այլ կազմավորումներից: Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը (տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկ. 15-ի ՀՀ օրենքը // ՀՀ ՊՏ 2017.12.06.173(1348)):

տական ինստիտուտների, ի սկզբանե, պետության առաջացմամբ գոյություն ունեցող կառույց է: Եթե պետության կառուցակարգի մնացած գործառնությանն-նպատակային ինստիտուտների հիմնական ու գերակշռող մասի պատմությունն սկսվում է նոր դարաշրջանից, ապա բանակի պատմությունը հաշվվում է պետության պատմությանը զուգընթաց:

Պետական ինստիտուտների պատմական զարգացման շարքի ուսումնասիրությունը հաստատում է կայուն միտում՝ պետական կառավարման մասնագիտացում և ճյուղավորում: «Պետության գործառնության, նպատակների որոշման կառուցակարգերի, որոշումների մշակման ու ընդունման ընթացակարգերի բարդացումն անխուսափելիորեն հանգեցնում է «իշխանության ծառի» ճյուղավորման: Հիմնական «ճյուղերը» ծնում են ենթաճյուղեր, որոնք կոչված են ամրացնելու «ծառի» արմատներն ու բունը՝ պետական որոշումների ու գործողությունների որակի բարձրացման ճանապարհով»⁶:

Յ.Ա. Տիխոմիրովի առաջ քաշած այս օրինակաբանությունն անհերքելի է: Իսկապես, նոր դարաշրջանի պատմությունը ցույց է տալիս, որ պետական կառավարման բարդացումն առաջ է բերում նոր նպատակային ինստիտուտների ձևավորում, որոնք նախատեսված են «պետության այս կամ այն գործառնության շրջանակում և համապատասխան պետական մարմինների պատասխանատվության գոտում գործելու համար»: Սակայն Յ.Ա. Տիխոմիրովի առաջ քաշած այս միտումը չի վերաբերում բանակին, չնայած նա բանակը ևս ներառում է նման գործառնությանն-նպատակային հատուկ ինստիտուտների շարքում:

Բանակը պետության մշտական գործառնությանն-նպատակային ուղեկիցն է: Հետևաբար՝ արդի շրջանում կարող է խոսք լինել միայն բանակի վերակառուցման, ձևափոխման մասին, այլ ոչ թե՛ նոր ձևավորված ինստիտուտի: Սակայն պետք է համաձայնվել այդ հեղինակի այն մտքի հետ, որ բանակը, զինված ուժերը՝

որպես հատուկ կերպով կազմակերպված ներգործության ուժ, գործառնությանն-նպատակային կառույց է: «Բանակն ունի խիստ ստորակարգային կառուցվածք, զինվորական ծառայության անձանց կազմ, զենքի զանազան տեսակներ և լրիվ նյութական բազա»⁷: Սրան պետք է ավելացնել նաև բանակի հատուկ առանձնացվածությունն այլ պետական կառույցներից, նրա կազմի բազմաթվությունը և դրա հետևանքով բանակի քաղաքական դերակատարությունը: Այս պայմաններում կարևորվում է բանակի իրավական կարգավիճակի սահմանադրական ամրագրումը, դրա քաղաքական չեզոքության ապահովման կառուցակարգերի հիմնադրումը⁸:

3. Երկրի պաշտպանության գործառնության չափի է ընկնում նաև իր իրականացման ձևերով ու մեթոդներով: Ընդհանրապես ընդունված է պետության գործառնության իրականացման մեթոդները բնորոշել որպես եղանակների, հնարքների և միջոցների ամբողջություն, որոնք կիրառվում են գործառնություն իրականացնելիս: Տեսական գրականության մեջ ընդունված է մեթոդները կապել գործառնության և դա իրականացնող հանրային իշխանական մարմինների հետ: Վ. Աֆանասևի կարծիքով՝ պետության գործառնության իրականացման մեթոդները բազմազան են, և դրանք կախված են գործառնության տեսակից, ինչպես նաև դրանք իրականացնող պետական մարմիններից: Որպես օրինակ՝ այս հեղինակը մատնանշում է մարդու և քաղաքացու իրավավունքների ու ազատությունների ապահովման, իրավակարգի պահպանության գործառնությունը, որոնցում օգտագործվում են թույլատրական, արգելող, պահանջող, համոզման ու հարկադրանքի մեթոդները, իսկ տնտեսական գործառնության իրականացնելիս, բացի վարչաիրավական մեթոդներից, կիրառվում է տնտեսական մեթոդների ամբողջական համալիր՝ բարոյական և նյութական խրախուսում, կանխատեսում, պլանավորում, արտոնյալ վարկավորում և ներդրումներ,

⁶ Տե՛ս Тихомиров Ю.А. Государство: монография /Ю.А. Тихомиров.– М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 143:

⁷ Տե՛ս Тихомиров Ю.А. Государство: монография /Ю.А. Тихомиров.– М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 144:

⁸ Բանակը պետք է օգտագործվի միայն արտաքին և եզակի դեպքերում պետության մեջ սահմանադրական կարգերի պաշտպանության համար: Եղել են դեպքեր, երբ բանակը՝ Հունաստանում (1960-ական թթ.), Չիլիում (1970-ական թթ.), Արգենտինայում և այլ երկրներում վերցրել է իշխանությունը (տե՛ս Тихомиров Ю.А. Государство: монография /Ю.А. Тихомиров.– М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 144):

պետական սուբսիդավորում, սպառողների պաշտպանություն և այլն⁹: Այս հեղինակի մոտեցման վերլուծությունը ցույց է տալիս, որ պետության ամեն մի գործառույթ իրականացնելիս կիրառվում են **ընդհանուր և հատուկ մեթոդներ**: Ընդհանուր մեթոդները բնութագրական են բոլոր գործառույթներին, իսկ հատուկ մեթոդները բխում են սովյալ գործառույթի ներգործության օբյեկտի առանձնահատկություններից: Դրանք հիմնականում չեն կիրառվում այլ գործառույթներ իրականացնելիս: Անկախ այն հանգամանքից, թե որքանով է ճիշտ գործառույթների իրականացման մեթոդների նկատմամբ այս մոտեցումը, պետք է նկատի ունենալ, որ երկրի պաշտպանության գործառույթի հատուկ մեթոդներն իրապես յուրահատուկ են, այլ ոլորտներում կիրառվող մեթոդներից էականորեն տարբերվող, ինչը պայմանավորված է դրանց ռազմականացված բնույթով:

Ա. Վաղարշյանը պետության գործառույթների իրականացման մեթոդները կապում է գործառույթի իրականացման ձևերի (իրավական և ոչ իրավական) հետ¹⁰ կարծելով, թե գործառույթների իրականացման յուրաքանչյուր ձևի համապատասխանում են իրեն բնորոշ մեթոդները: Պետության գործառույթների իրականացման իրավական (իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան, մեկնաբանողական-իրավական, հսկիչ-վերահսկիչ, հիմնադիր» ձևերն ընդհանուր են պետության բոլոր գործառույթների համար: Հետևաբար՝ ընդհանուր են նաև դրանցից ամեն մեկում կիրառվող մեթոդները՝ օրինականությունը, օրինական հարկադրանքը, իրավական տեղեկութավորումը, համոզումը, խթանումը և խրախուսումը, խորհրդատվությունը, անմիջական կառավարումը, արգելումը, պարտադրումը և այլն: Նույն մոտեցմամբ կարող ենք պնդել, որ պետության գործառույթների կազմակերպական ձևերից յու-

րաքանչյուրին (կազմակերպական կանոնակարգող, կազմակերպական-տնտեսական, կազմակերպական-գաղափարական) բնորոշ են իրականացման իրենց մեթոդները, և քանի որ այդ ձևերն օգտագործվում են գրեթե բոլոր գործառույթներն իրականացնելիս, հետևաբար՝ այդ մեթոդները կիրառելի են բոլոր գործառույթների իրականացման գործընթացում: Այս հարցում միանշանակ պետք է համաձայնվել Յ.Ա. Տիխոմիրովի հետ, ըստ որի՝ պետության կարևոր գործառույթներն ունեն ենթագործառույթներ, և ինչպես գործառույթները, այնպես էլ ենթագործառույթներն անհրաժեշտ է մասնատել պետական ինստիտուտների ու մարմինների իրավական կերպով սահմանված խնդիրների և իրավասության՝ հետևյալ շղթայով. ա) զարգացման ծրագրային նպատակադրումը, բ) նորմատիվ իրավական կարգավորումը, գ) պետական կառավարումը, դ) կազմակերպական գործունեությունը, զ) նյութական գործողությունները, է) վերահսկողության իրականացումը և հարկադրանքի միջոցների կիրառումը, ը) հասարակության տեղեկատվական սպասարկումը¹¹:

Պետության գործառույթների իրականացման՝ Յ.Ա. Տիխոմիրովի առաջադրած այս կառուցակարգն ընդունելի է պետության բոլոր գործառույթների համար: Եվ պաշտպանության և իրավակարգի ապահովման գործառույթներն իրականացնելիս պետությունը և նրա մարմինները գործում են կառուցակարգային նույն շղթայով: Տարբերվում են միայն այդ կառուցակարգի որոշ տարրերի դրսևորումները. մասնավորապես՝ պետության պաշտպանության գործառույթի ծրագրային նպատակադրման ձևը, որպես կանոն, ռազմական դոկտրինն է: Կան տարբերություններ պետական կառավարման և դրա ընթացքում օգտագործվող կազմակերպական ձևերի ու մեթոդների միջև, ինչպես նաև նյութական գործողություններում: Մասնա-

⁹ Տե՛ս Афанасьев В.С., Государство, новые подходы к сущности, функциям, типологии // В кн. Общая теория права и государства /Под. ред. В.В. Лазарева.– 2-е изд., перераб. и доп.– М.: Юристъ, 1996, էջ 283:

¹⁰ Տե՛ս Ա.Գ. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-1 (Դասախոսություններ), ԵՊՀ. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016. էջ 125:

¹¹ Տե՛ս Тихомиров Ю.А. Государство: монография /Ю.А. Тихомиров.– М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 172:

¹² Երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության համակարգն ընդունված է տրոհել մի քանի ենթահամակարգի՝ պետական կառավարման, տարածքային, գործառույթային, բուն ռազմական կազմակերպության (տե՛ս Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 128): Թվարկված ենթահամակարգերից յուրաքանչյուրն ունի իր կառավարման մարմինները՝ իհարկե, ստորակարգային կապերի պահպանման միջոցով:

վորապես՝ պաշտպանական հարաբերությունների կառավարումը բազմամակարդակ է¹², իսկ դրա սկզբունքները յուրահատուկ են՝ մյուսներից էականորեն տարբերվող: Պաշտպանական ոլորտում կիրառվում են այնպիսի կազմակերպական ձևեր ու մեթոդներ, որոնք այլ գործառույթներն իրականացնելիս օբյեկտիվորեն անընդունելի են: Օրինակ՝ «ՀՀ ռազմական դոկտրինն» ամրագրում է Ջինված ուժերի օգտագործման հիմնական ձևերը՝ ա) ռազմավարական, օպերատիվ, մարտավարական և հատուկ գործողությունները, բ) սահմանադրական կարգին սպառնացող վտանգների վերացման գործողությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, գ) դաշնակցային պարտավորություններից բխող գործողությունները, դ) միջազգային խաղաղապահ գործողությունները, ե) տարրերային աղետների և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ գործողություններ¹³:

Թվարկված ձևերը պաշտպանության գործառույթի իրականացման հատուկ կազմակերպական-իրավական ձևերն են: Հիմք ընդունելով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվ. 1-ին կետում ամրագրված «պաշտպանություն» հասկացությունը¹⁴ կարող ենք առանձնացնել պաշտպանության իրականացման քաղաքական, ռազմական, տնտեսական, տե-

ղեկատվական սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցները: Այս դեպքում միջոցները պետք է հասկանալ գործառույթի իրականացման ձևերի իմաստով:

Ինչ վերաբերում է պաշտպանության գործառույթի իրականացման մեթոդներին՝ ոչ «ՀՀ ռազմական դոկտրինը», ոչ էլ «Պաշտպանության մասին» ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի օրենքը չեն ամրագրում դրանց շրջանակը¹⁵: Ռազմական իրավունքի տեսության մեջ ընդունված է, որ պաշտպանության գործառույթի իրականացման ռազմական մեթոդները նախորդում են զորքերի գործունեության յուրահատուկ բովանդակությունը, դրանք ենթադրում են զենքի և զինամթերքի օգտագործում՝ պաշտպանության խնդիրների լուծման համար¹⁶: Ռազմական անվտանգության տեսության մեկ այլ հեղինակ Ս.Ա. Ֆոմինը երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության կառուցվածքում՝ օբյեկտ, սուբյեկտ, առարկա, առանձնացնում է նաև դրա մեկ այլ կարևոր տարր՝ մեթոդները և միջոցները¹⁷:

Այս հարցը կարիք ունի հատուկ հետազոտության ու ամփոփման, որովհետև նախնական տպավորությունն այն է, որ երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման մեթոդների խնդրում առկա է որոշակի տեսական

¹³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», կետ 41, հաստատված է ՀՀ նախագահի 25.12.2007 ՆՀ-308-Ն հրամանագրով: Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2008.01,07/1 (591), հոդված 14 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=41116>): ՌԴ ռազմական դոկտրինը զորքերի կիրառման հիմնական ձևեր է համարում օպերացիաները (ռազմավարական, համատեղ, հակատեռորիստական) և մարտական գործողությունները (տե՛ս Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право; под. ред. В.Г. Стрекозова, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.– М.: За права военнослужащих, 2004, էջ 93:

¹⁴ «Պաշտպանությունը ՀՀ տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրություն» է (տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի ՀՀ օրենք // ՀՀ ՊՏ 2017.12.06.173(1348)):

¹⁵ Դրանք իրավաբանորեն ամրագրված չեն նաև ՌԴ-ում: Տեսաբանները համարում են, որ ռազմական մեթոդների հարցը սկզբունքային է, և եթե մարտական գործողությունների ժամանակ (պատերազմի վիճակում կամ ռազմական բախումների ընթացքում) այդ մեթոդներն ակնհայտ են, ապա խաղաղ ժամանակ՝ անորոշ: Անհրաժեշտ է հստակ սահմանել, թե խաղաղ ժամանակ որ մեթոդներն են համարվում ռազմական, այսինքն՝ կարող են օգտագործվել պետության ռազմական կազմակերպության մեջ ներառվող կառույցների կողմից և, հետևաբար՝ չեն կարող օգտագործվել այլ պետական մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների կողմից (տե՛ս Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право; под. ред. В.Г. Стрекозова, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.– М.: За права военнослужащих, 2004, էջ 93): Այս տեսաբանների եզրակացությունը միանշանակ է. ռազմական մեթոդները ենթակա են իրավական կարգավորման, ընդ որում՝ բացառապես իմպերատիվ, այլ ոչ թե դիսպոզիտիվ ձևով:

¹⁶ Տե՛ս Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право; под. ред. В.Г. Стрекозова, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.– М.: За права военнослужащих, 2004, էջ 93:

¹⁷ Տե՛ս Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 83, 103:

անհատակություն: Նշանակում է՝ անհրաժեշտ է միավորել պետության գործառույթների տեսության, ռազմական գիտության ու ռազմական իրավունքի տեսամեթոդաբանական մոտեցումները և ամբողջական պատկերացում կազմել նշված գործառույթի իրականացման ձևերի, մեթոդների ու միջոցների համակարգի մասին:

Պետության և իրավունքի տեսության մեջ պետության գործառույթների իրականացման ձևեր են համարվում իրավականը և կազմակերպականը (կազմակերպական-կանոնակարգող, տնտեսական, գաղափարախոսական): Այս ձևերը համընդհանուր են ու կիրառելի բոլոր գործառույթների իրականացման ընթացքում: Սակայն, բացի այս ընդհանուր ձևերից՝ ամեն մի գործառույթին բնորոշ են իր իրականացման հատուկ ձևերը, մասնավորապես՝ մեզ հետաքրքրող գործառույթի համար օրենքն ամրագրում է դրա իրականացման վերը նշված ձևերը: Սակայն այս ձևերը կիրառելի են պաշտպանական գործառույթի իրականացման պետական կառավարման վերջին մակարդակում՝ զինված ուժերում, երբ որ նրանք ձեռնարկում են կազմակերպական գործունեություն ու նյութական գործողություններ: Բայց մինչ այդ՝ գործառույթի իրավական կարգավորման ու պաշտպանական համակարգի հիմնադրման ու պետական կառավարման գործընթացում պետական օրենսդիր և գործադիր մարմինները կիրառում են իրավական ու կազմակերպական բոլոր վերը նշված, ինչպես նաև այլ հնարավոր ձևերը: Այսպիսով՝ երկրի պաշտպանության գործառույթի իրականացման ընդհանուր ձևերից բացի՝ գործառույթի իրականացման ընթացքում կիրառում են նաև հատուկ ձևեր, որոնք ամրագրված են օրենքով:

Գործառույթների իրականացման մեթոդների հարցում պետության և իրավունքի տեսությունը՝ որպես պետության և իրավունքի գործառութավորման ընդհանուր և հիմնական օրինաչափություններն ուսումնասիրող գիտություն, անդրադառնում է ընդհանուր կերպով,

այսինքն՝ վեր է հանում և հետազոտում այն բոլոր մեթոդները, որոնք ունեն իրավական բնույթ ու կիրառվում են բոլոր գործառույթներն իրականացնելիս: Ռազմական իրավունքի տեսաբանները ևս այս հարցին անդրադառնում են ընդհանուր տեսանկյունից (տես վերևում)՝ առաջ քաշելով միայն ռազմական հատուկ մեթոդների գաղափարը՝ մատնանշելով դրանց առանձնահատուկ գծերը՝ զենքի ու զինատեսակի, ինչպես նաև զորքերի կիրառումը¹⁸:

Այս հարցում աչքի են ընկնում այն տեսաբանները, ովքեր երկրի պաշտպանությունը և ռազմական անվտանգությունը քննարկում են իրավական տեսանկյունից: Մասնավորապես՝ Ս.Ա. Ֆոմինն այդ մեթոդները բնութագրում է որպես երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտների վրա դրված նպատակների, խնդիրների ու գործառույթների իրականացման եղանակներ¹⁹: Այս հեղինակը դրանց բազմազանությունը դասակարգում է երկու համընդհանուր խմբում՝ համոզման և հարկադրանքի: Որպես համոզման մեթոդի հատուկ դրսևորում՝ նա նշում է դրա իրականացման այնպիսի խաղաղ միջոցներ, ինչպիսիք են պետությունների ռազմական դոկտրինների համաձայնեցումը՝ նրանց միջև հարաբերությունների ապառազմականացումը, դոկտրինի դրույթների հռչակումը պաշտոնատար անձանց հայտարարություններում, ռազմական զսպման քաղաքականության տեխնիկական կենսագործման ցուցադրումը՝ վարժանքներ, զորաշարժեր, զենքի և ռազմական տեխնիկայի փորձարկումներ՝ դրանք ՋԼՄ-ներով լայն լուսաբանելով: Հարկադրանքի մեթոդներն Ս.Ա. Ֆոմինը բնութագրում է որպես ռազմական (կամ ուժային)՝ համարելով, որ դրանք ենթադրում են զենքի և զինամթերքի օգտագործում²⁰: Այս մոտեցումը, լինելով սկզբունքորեն ճիշտ, որոշակի ճշգրտման կարիք ունի՝ ընդհանուր մոտեցումների, մասնավորապես՝ պետության և իրավունքի տեսության դիրքերից: Պետության գործառույթների իրականաց-

¹⁸ Стів Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право; под. ред. В.Г. Стрекозова, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.– М.: За права военнослужащих, 2004, էջ 93:
¹⁹ Стів Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 101-102:
²⁰ Стів Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 102: Նույն տեսակետին են նաև «Военное право, под. ред. В.Г. Стрекозова, А.В. Кудашкина, Военный университет, Академия военных наук.– М.: За права военнослужащих, 2004» գրքի համահեղինակները (տես էջ 93):

ման կառուցակարգում մեթոդները սերտորեն կապված են գործառույթի իրականացման ձևերի հետ: Գործառույթի իրականացման համընդհանուր ձևերին համապատասխանում են դրանցից ամեն մեկին բնորոշ համընդհանուր մեթոդները, մասնավորապես՝ իրավական ձևերին՝ դրանց համապատասխանող իրավական ընդհանուր մեթոդները, կազմակերպական ամեն մի ձևին իրեն բնորոշ մեթոդները: Հետևաբար՝ պաշտպանության գործառույթի իրականացման մեթոդները կարող են լինել ընդհանուր՝ իրավական ու կազմակերպական, ինչպես նաև զուտ պաշտպանությանը բնորոշ հատուկ կամ զինված ուժերի գործունեությանը բնորոշ մեթոդներ՝ ռազմական և ռազմական հարկադրանքի մեթոդներ:

Վերլուծելով երկրի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովման գործառույթի կենսագործման կառուցակարգը պետության գործառույթների տեսության, ռազմագիտության ու ռազմական իրավունքի տեսության միջառարկայական մոտեցումների միավորման միջոցով՝ կարող ենք եզրակացնել, որ երկրի պաշտպանության գործառույթը ստատիկ վիճակում բաղկացած է հետևյալ տարրերից՝ երկրի պաշտպանության հասարակական պետական խնդիր, խնդրի լուծմանն ուղղված գործունեություն (իրականացվող գործառույթ), դրան բնորոշ օբյեկտ, գործառույթի իրականացման ձևեր և մեթոդներ: Երկրի պաշտպանության գործառույթի այս տարրերի բնութագրերն էականորեն տարբերվող են և յուրահա-

տուկ: Դինամիկ վիճակում երկրի պաշտպանությունը կառուցված է մի շարք կառավարչական գործընթացներից՝ ծրագրային նպատակադրում, նորմատիվ իրավական կարգավորում, պետական կառավարում, գաղափարահոգեբանական ներգործություն, կազմակերպական գործունեություն, նյութական գործողություններ, վերահսկողություն, հասարակության տեղեկատվական սպասարկում:

Երկրի պաշտպանության պետական կառավարման բովանդակությունը, իրականացման ձևերը և մեթոդները, ենթագործառույթները, կառուցվածքը պայմանավորված են զինված ուժերի կազմակերպման ու զինված պայքարի (պատերազմի) վարման սոցիալ-պատմական օրինաչափություններով: Պաշտպանության գործառույթի ներգործության օբյեկտում գլխավոր դերակատարը զինված ուժերն են՝ իրենց բնորոշ կազմակերպագործառութային առանձնահատկություններով, ինչն էլ հենց գործառույթի գլխավոր առանձնահատկությունն է: Բանակը գործառույթի իրականացման հիմնական, առաջնային նշանակություն ունեցող կազմակերպական (նաև՝ իրավականացված) ձևն է: Պաշտպանական հարաբերությունների պետական կառավարումը (պետական մարմինները), առանց մարտունակ բանակի, անզոր կառույցներ են, հետևաբար՝ գործառույթի իրականացման արդյունավետության ցուցիչը մարտունակ բանակն է, այլ ոչ թե դրա քաղաքական-իրավական կառավարման ու կարգավորման իմիտացիան:



ՆԵՐՍԻ ՏԵՐ-ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՀ հատուկ քննչական ծառայության
իրավական ապահովման և արտաքին կապերի
բաժնի գլխավոր մասնագետ

**ԿԱՇԱՌՔ ՏԱԼՈՒ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Գիտական հոդվածում վերլուծվել է ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կաշառք տալու խրախուսական նորմը: Խրախուսական նորմում ամրագրված պայմաններն իրավակիրառ մարմնի համար ստեղծում են խոչընդոտներ՝ որպես արդյունք՝ նորմը դարձնելով գրեթե ոչ կիրառելի: Գիտական հոդվածում առաջարկվել են այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որոնք կնպաստեն կաշառք ստանալու հանցագործության բացահայտմանը:

Բանալի բառեր. կաշառք տվող, խրախուսական նորմ, վարույթն իրականացնող մարմին, օրենսդրական խոչընդոտներ:

НЕЛЛИ ТЕР-ТОРОСЯН

Главный специалист отдела Правового обеспечения и
внешних связей Специальной следственной службы РА

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ ПРИМЕНЕНИЯ ПОощРИТЕЛЬНОЙ НОРМЫ
ДАЧИ ВЗЯТКИ**

В научной статье анализируется статья 312, часть 4 Уголовного кодекса РА, в которой предусматривается поощрительная норма дачи взятки. В поощрительной норме есть серьезные препятствия для применения органом, осуществляющим уголовное производство. В научной статье предлагаются правовые регулирования, которые будут способствовать раскрытию преступления получения взятки.

Ключевые слова: дача взятки, поощрительная норма, орган, осуществляющий уголовное производство, законодательные препятствия.

NELLY TER-TOROSYAN

Chief specialist of the Legal Provision and
External Relations Department of the RA Special Investigation Service

